

# ԷՋՄԻԱԾԻՆ



1962



ՌՆՓԱ  
ԺԹ ՏԱՐԻ

Փետրուար

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆՈՅ  
Ա. ԷՋՄԻԱԾՆԻ

Բ

1962



ՀՐԱՄԱՆՍԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՄՓԱՌ ԵՒ ՍՐՐԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱՔՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆՅԱՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ  
ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻՆ**

**Վ Ա Ջ Գ Է Ն Ե Վ Ռ Ա Ց Յ Ի Ս ՈՒ Մ Ի Ք Ի Ս Տ Ո Ս Ի,  
Ո Ղ Ո Ր Մ ՈՒ Ք Ե Ս Մ Բ Ե Ա Ս Տ ՈՒ Ծ ՈՑ Ե Ի Կ Ա Մ Մ Օ Ք Ի Ն Ա Ջ Գ Ի Ս  
Ե Պ Ի Ն Կ Ո Փ Ո Ս Ս Ո Ւ Ց Ե Ի Կ Ա Մ Ք Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Բ Ե Ն Ա Ց Ե Ն Հ Ա Ց ՈՑ,  
Կ Ս Ց Մ Ա Գ ՈՑ Ե Պ Ա Տ Ր Ի ՈՐ Ք Հ Ա Մ Ա Ջ Գ Ի Ա Կ Ա Ն Ն Ա Բ Ա Մ Ե Ե Ն Ա Ր  
Ա Ք ՈՒ Ռ ՈՑ Ա Ք Ր Ա Ր Ա Տ Ե Ա Ն Ա Ռ Ա Ք Ի Ա Կ Ա Ն Ա Մ Ս Ց Բ  
Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ռ ՈՑ Ս Ր Բ ՈՑ Կ Ա Ք ՈՒ Գ Ի Կ Է Է Մ Ի Ա Ն Ե Ն Ի**

Աստուծո ռդրմութիւնը անգամ մը ևս հովանի եղավ մեր Սուրբ Եկեղեցին և հոկտեմբեր 11-ին, Ձեր հովատացյալ ժողովուրդը, միաձայն ընտրութեամբ Ձեզ բազմեցուց Թուրքիո հայոց Պատրիարքական Աթոսին վրա, և ապա, հետ Ձեր երկրի բարեխնամ կառավարության ճանաչումին, 3 հունվար 1962-ին տեղի ունեցավ Ձեր գահակալության հանդեսը ընդհանուր գոհունակության և խնդրության մթնոլորտի մեջ:

Ուրախ է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին:

Ուրախ է հայ հովատացեալ ժողովուրդը:

Ուրախ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Հույժ ուրախ ենք նաև Մենք ու ջերմագին պաշտումներով կշնորհավորենք ՎՁեզ և Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առաջ կաղոթենք, որ Տերը Ձեզի պարզև երկա՛ր, երկա՛ր տարիներ՝ շինարար ու երջանիկ գործունեութեամբ:

Այս բերկրայի առիթով Ձերդ Ամենապատվության կշնորհենք արքայության սլատիվ, ի նշան Մեր անկեղծ սիրույն և գնահատանքին:

Մենք ՎՁեզ միշտ գնահատած ենք ու սիրած, վասնզի Ձեր սիրտը լի է հավատքով և սուրբ պաշտումներով, հոգիով արդար եք, նկարագրով ազնիվ ու նախանձախոյզ, և երկար տարիներ հովասար նվիրումով ծառայած եք Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Երուսաղեմի հայոց Սուրբ Աթոսին Ձեր բարի գործերով, Ձեր մաքուր ձեռքերով:

Այժմ իբրև Պատրիարք, կոչված եք հոգևոր կյանքի շինության նոր շրջան մը սկսեցնելու Թուրքիո հայոց մեջ: Վստահ ենք, թե պիտի հաջողիք Ձեր մեծ առաքելության մեջ և առավել պիտի փառավորեք Պոլսո հայոց պատմական Աթոռը, առավել պիտի ջնջենք Ձեր եկեղեցիները և առավել պիտի լուսավորեք և ուսախացնեք Ձեր աստվածասեր բարի ժողովուրդը: Վստահ ենք նաև, թե Ձեր

հավատարիմ և իմաստուն գործունեությամբ առավել պիտի ամրապնդեք սիրալիր հարաբերությունները Ձեր երկրի պետական իշխանությանց հետ, ի պայծառությամբ Ձեր նյեղեցիներու և ի միխթարություն Մեզ:

Արդ, սիրելի՛ Սրբազան Եղբայր, աներեր հավատքով և լավատեսությամբ, «Ձբարուք առանդն պահեսչը ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ի մեզ քնակելոյ» (Բ Տիմոթ. Ա 14), և «Աստուած լի արասցէ վամենայն պէտս Ձեր ըստ իրում մեծութեանն փառօք ի Ջրիստու Յիսուս» (Փիլիպ. Դ 19):

Սիրեցե՛ք Ձեր ժողովուրդը և քաղցրությամբ մոտեցե՛ք իր սրտին: Այդ սիրտը ջերմ է ու ազնիվ: Եվ անցյալ դարիցը վկա, թե ան ընդունակ է թախք առնելու դեպի հոգևոր-բարոյական պայծառ բարձունքները մարդկային կյանքին. դեպի առթուրը լույսին...:

Հայ հավատավոր ժողովուրդի սիրտն է այդ, ճշմարիտ անոթ մը ընտիր. հավետ կենդանի, հավետ ծարավի մեծ խորհուրդներու և ներշնչութեան: Սուրբ է այդ սիրտը, զի «Եթէ սկիզբն սուրբ է՝ և վանգուածն. և եթէ արմատն՝ ապա և ոստքն» (Հռովմ. ԺԱ 16):

Թող մեր հայրերու Աստվածը զՁեզ և Ձեր հավատացյալ ժողովուրդը պահէ, պահպանէ անփորձ ու անվտանգ, խաղաղ ու բարգավաճ, սիրով միաբան, մեկ սիրտ, մեկ հոգի, երկնատուր հովանիին ներքև մեր Սուրբ Եկեղեցիքին:

Աղոթող ենք նաև ի սրտե, որ բարին Աստված միշտ խաղաղության մեջ, միշտ շեն ու բարօր պահէ, պահպանէ Ձեր արևտու երկիրը գեղեցիկ և Ձեր կառավարությունը բարեխնամ:

Եզ աստվածային օրհնությունը թող հավետ շողա Ձեր բոլորիդ վրա իբրև մշտավառ արև կենսատու:

Ձերդ Ամենապատվության, Աթոռիդ հոգևոր դասուն, եկեղեցական վարչությանց և համայն Մեր հաավտացեալ վավակներուն սիրո ողջուն և օրհնություն հայոց հավատքի վեմ, լուստ խորան Սուրբ Էջմիածնեն այժմ և միշտ:

«Շնորհք և խաղաղութիւն Տեսնե մերոյ Յիսուսի Ջրիստոսի եզիցին ընկ Ձեզ ընդ ամենեսինդ»:

Ամեն:

*Վաչագհ Ռ*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ցուտ կանդակս ի 29-ն յունուարի

1962 Փոկչական տմի.

և ի տումաթիս Հայոց ՌեժՍ.

ի մայավառն Սրբոյ Էջմիածնի:



# Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## «ՄԻՆՏ ԱՆՆԱԲՆՎՈՂԵՆ ԶԱՐԻՈՒ ՀԱՅԿԱԶՆԵԱՅՄ»



ունվար ամսի վերջերին, Մայր Արքունիքում հաջողությամբ փակվեց 1960—1961 շինարարական տարին: Մայր Արքունիքի շրջափակում և նրանից դուրս, անցնող տարում շինարարական աշխատանքները առաջ տարվեցին նախագծված ձևով, Վեհափառ Հայրապետի անմիջական նսկողության տակ, գործուն մասնակցությամբ Մայր Արքունիքն առընթեր նարտարապետական-շինարարական հանձնախմբի:

Մի անգամ ևս համազգային ուրախության և երախտագիտության զգացմունքների բարգմանք հանդիսանալով, պետք է նշենք որ, ինչպես Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության շենքի վրա դրված յուրաքանչյուր ֆուտ, սյունիքն էլ Մայր Արքունիքում կատարված շինարարական օրեկ աշխատանք, անասնման գոհունակություն և հպարտություն է պատճառում նրանց, օրեօր նշմարիտ և ազնիվ զգացմունքներով սիրում են Մայր Հայրենիքը, Ս. էջմիածինը, ուրախանում են այդ երկուսի հարաճուն վերելքի պայծառ հետունակներով:

Անցնող 1961 շինարարական տարին նոր հաջողությամբ է պսակել մեր Շինարար Հայրապետի անունն ու գործունեությունը: Նորին Ս. Օձուրյունը հավատով ու շինարարական ավյունով լցված, եռանդազգին ձեռնարկել է այս շինարարական աշխատանքներին, ամեն օր մի ֆուտ ավելացնելով Մայր Արքունիքը: Էջմիածնում և մեր հիմ, պատմական վանքերում:

«ԽՄԱՍԱՆԻՔԻ ԱՆՆԱԲՆՎՈՂԵՆ ԶԱՐԻՈՒ» (Առակ, ԻԳ 3): «Եթէ ՈՉ ՏԵՐ ՇԻՆԷ ԶՏՈՒՆ, Ի ՆԱՆԻՐ

ՎԱՍՏԱԿԻՆ ՇԻՆՈՂՔՆ ՆՈՐԱ» (Սաղմ. Ճևղ 1):

Անցնող շինարարական տարում կատարվեցին հիմնական վերանորոգություններ Մայր Տաճարում, Հոգևոր Ճեմարանի շինում: Ավարտվեց կառուցումը կենտրոնական ջեռուցման կարսայատան:

Իսկ Մայր Արքունիքի շրջանակից դուրս, Ս. Շողակարում, Ս. Գայանեում, Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում, Ս. Գեղարդի վանքում և Սիսիանի Ս. Աստվածածին եկեղեցում շարունակվեցին շինարարական աշխատանքները ըստ ծրագրի:

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ զամբարված ժողովրդ, Մայր Արքունիքն առընթեր նարտարապետական-շինարարական հանձնախմբի մասնակցությամբ, կազմել է 1962 թվականի թև՝ Մայր Արքունիքի շրջանակում և թև՝ նրանից դուրս, շինարարական աշխատանքների նոր ծրագիրը:


Համաձայն այս ծրագրի, 1962 շինարարական տարում կատարվելու են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Գերագույն Հոգևոր Խորհուրդը, 1960 թվականի ապրիլ 22-ի նիստում, Վեհափառ Հայրապետի առաջարկով, որոշում էր ընդունել Մայր Տաճարի Իջման Ս. Աղանի վերանորոգության մասին: Պահվելու է Իջման Ս. Աղանը իր հին կաթողիկեով, իսկ փայտաշեն սուրբ պատարագի սեղանը, իր երեք աստիճաններով, փոխարինվելու է իտալական օնիխ մարմարով, Իջման կաթողիկեի մարմարի նմանությամբ: Մարմարյա աստիճանների կողքերին, լանդակազարդվելու են օրծաբյա ոսկեպատ հարքաֆաղեղաններ,



Նկար 1

ՆՈՐ ՎՆՉԱՐԱՆԸ ՄԱՅՐ ՅԱՃԱՐԻ ԲԱՆԻՑ ԱՆՋԱՏՈՂ ՊԱՐԻՍՊԸ ԴԻՏՎԱՅ ՆՈՐ ՎՆՉԱՐԱՆԻ ԲԱՆԻՑ



Նկար 2

ՎՆՉԱՐԱՆԸ ՄԱՅՐ ՅԱՃԱՐԻ ԲԱՆԻՑ ԱՆՋԱՏՈՂ ՉԻՐՈՎԱՆ ԿՂՄԻՆԻՑ ՊԱՐԻՍՊԸ  
ԴԻՏՎԱՅ ՀՈՒ ՎՆՉԱՐԱՆԻ ԲԱՆԻՑ

որով և ամբողջանալու է իջման Ս. Սեղանի վերանորոգությունը:

2. Մայր Տաճարի բոլոր փայտաշեն լուսամուտները փոխարինվելու են մետաղյա լուսամուտներով, որոնց առաջ զետեղվելու են զեղարվեստականորեն ձևավորված պատկերներ, գունավոր մետաղներից պատրաստված:

3. Տաճարի շրջափակում անցկացվելու են էլեկտրական լուսավորության սյուներ՝ լապտերներով, Մայր Տաճարի արտաքին ընդհանուր ճարտարապետական ոճին համադրատասխան:

6. Արդեն իսկ ֆանդվել է Մայր Տաճարը նոր Վեհարանից քամանոց և մոտ 300 տարվա հնություն ունեցող հողաշեն (չթրծված աղյուսով) պարիսպը, ինչպես ցույց են տալիս № 1 և 2 նկարները: Քանդվել է նաև Միևոդի բակը հին Վեհարանից անջատող պարիսպը: Այս երկու պարիսպների ֆանդման աշխատանքներին զուգընթաց, ֆանդվել է նաև ճին Վեհարանի հյուսիսային թևը, ինչպես ցույց է տրվում № 3 նկարում:

Այժմ Մայր Տաճարի բակից, իր վեհույլամբ և գեղեցկությամբ, երևում է նոր Վեհարանը, որտեղից, հայրապետական քա-



Նկար 3

ՉՆՆ ՎԵՀԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ, ՈՐԻ ՉՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԹԵՎԸ ԶԱՆԳՎԵԼ Է ՄԻՆՁՅՈՎ  
ԿԵՏԱԳՇՆՐՈՎ ԵՌԻՑՑ ՏՐՎԱԾ ՏԵՂԸ

4. Վանքի գլխավոր՝ արևելյան դարպասը վերակառուցվելու է հիմնովին, Աճի ֆաղափի գլխավոր մուտքի նմանությամբ:

5. 1982 թվականի շինարարական աշխատանքների մեջ կարևոր տեղ է հատկացված նոր Վեհարանի վերանորոգության աշխատանքներին ավարտմանը:

Նոր Վեհարանի վերանորոգման աշխատանքները սկսվել են 1980 թվականի աշնան: Ըստ ծրագրի, 1981 թվականին այստեղ շարունակվեցին շինարարական աշխատանքները: Շինարարական ընթացիկ տարում, մինչև աշուն, ավարտվելու են նոր Վեհարանի վերանորոգության մնացած բոլոր աշխատունիքները:

փորը, անցնելով է դարում կառուցված Տրդատի կամարակապ դռան միջով, Մայր Տաճարի և նոր Վեհարանի դիմաց, ուղղակի մուտք կգործի Մայր Տաճար:

Մայր Տաճարի շրջափակից դուրս ևս շարունակվելու են հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքները հետևյալ ձևով:

7. Ս. Հովհաննիսյանի վանքում փորով շարունակվում են շինարարական աշխատանքները և շուտով կավարտվեն հյուսիսային կողմից տաճարի հողամասի նոր պարսպապատման աշխատանքները:

8. Ս. Գայանեի վաճառման ընթացիկ շինարարական օտարում նախատեսված է ավարտել եկեղեցու ներքին պատերի և բաղնիքի մաքրման աշխատանքները:

Եկեղեցու արտաքին մասում կապանատակվեն մայրք, գլխավոր մուտքը և տանգրի արտաքին շրջագծերը:

9. Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում վերջերս Մեծ Արքի գերեզմանի վրա դրվեց օճիխ մարմարե ետ տապանաձևով, որով ամբողջացավ Ս. Մեսրոպի դամբարանի վերանորոգությունը: Կշարունակվեն ետ Ս. Սեդանի կառուցման և եկեղեցու ներքին պատերի ձևավորման ու եկարագործման աշխատանքները:

10. Վերանորոգվելու է Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու Ս. Սեդանը գույտ հայկական ոճով. ֆիլիպս Բարով:

Շինարարական որոշ աշխատանքներ կշարունակվեն հան Ս. Գեղարդում և Սիսիանի Ս. Աստվածածին եկեղեցում:

Վստան ենք, որ Աստուծո օգնականությամբ և Վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարությամբ, ձեռք առնելով կազմակերպչական շինարարական աշխատանքների շնորհիվ և Մայր Աթոռին արդյթեք հարտարարական հանձնաժողովի անձնակեր մասնակցությամբ, շինարարական ետ տարին կլինի ավելի արդյունավետ, ի միտքարություե հայ հավատացյալ ժողովրդի և ի պայծառություե Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու:

Տե՛ր. «ԲԱՐՆԵՍՍՈՒԹԵԱՄԲ ՎԵՐԻՆ ՔՈ ՋՕՐԱՑ, ՄԻՇՏ ԱՆՇԱՐԺ ՊԱՆԱ ԶԱԹՈՒ ՀԱՅ-ԿԱԶՆԵԱՅԱ»:





**ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐՇՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲ ԱՍԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ**

Հունվարի 3-ին, շորիքշարթի, Ստամբուլի հայոց Գումգափուլի աթոռանիստ Մայր Եկեղեցում, կատարվել է նորընտիր պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի զահակալության հանդեսը:

Հանդիսության ներկա են եղել զերաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոսը՝ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի սրինսպազ միաբանության կողմից, զերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Բեմհաճյանը՝ որպես Երուսաղեմի հայոց Պատրիարքության ներկայացուցիչ, և զերաշնորհ Տ. Պօակ եպիսկոպոս Թումայանը:

Գահակալության հանդիսության ընթացքում, եկեղեցու երկու զասերում տեղ են դրավել պետական պաշտոնական անձնավորություններ, հարանվանությունների ներկայացուցիչներ, պատրիարքական ընտրության պատգամավորներ, թաղական խորհուրդներին և հողարարձությանց ներկայացուցիչներ, այլ հրավիրյալներ և հավատացյալներին խուններամ բազմություն:

Սրբազան պատրիարքը «Հրաշավառ»-ով առաջնորդվում է Մայր Եկեղեցի և Ավագ Սեղանի վրա կատարում պատրիարքական իր ուխտը:

Այնուհետև, տոաջնորդական փոխանորդ արժանապատիվ Տ. Արամ ափազ քահանա Պատմաճյանը պատրիարքական ասան հանձնում է նորընտիր պատրիարքին:

Ուխտի կատարումից հետո, զերաշնորհ Տ. Խաղ և զերաշնորհ Տ. Սուրեն սրբազանները, իրենց ձեռքերը դնելով նորընտիր սրբազան պատրիարք հոր գլխին, «Պահպանիչ» են արտասանում:

Ապա ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքը արտասանում է իր ուխտի բարոյությունից հետո առաջնորդվում է իր Գահը, տալու իր անդրանիկ օրհնությունը:

Նորընտիր պատրիարքը այնուհետև իր Գահի վրա ընդունում է օտար եկեղեցական և պաշտոնական հյուրերի շնորհավորությունները: Արարողության ավարտին, հավատացյալները աշահամրույրով շնորհավորում են սրբազան պատրիարքի զահակալության հանդեսը:

Երեկոյան ժամը 8-ին, «Պարկ» հյուրանոցի մեծ դահլիճում, ի պատիվ նորընտիր պատրիարքի, կազմակերպվում է ընդունելություն, որտեղ ջերմ ելույթներով նորընտիր պատրիարքին շնորհավորում են զերաշնորհ Տ. Խաղ, Տ. Սուրեն, Տ. Պօակ սրբազանները, Տ. Սահակ ժայրադույն վարդապետը, Տ. Կորյուն վարդապետը, Տ. Գևորգ վարդապետը, հայր Գեյվիդ Հարդինզը, պր. Սարգիս Քյուրքճյանը, պր. Կարպիս Սրապյանը, օրիորդ Աստղիկ Թաշճյանը, պր. Կարապետ Ղազարյանը, պր. Վարդ Շիկահերը, դոկա. Ա. Սվաճյանը և ուրիշներ:

ԳԾԶ

Նորընտիր սրբազան պատրիարք հայրը, ավագանի անունով Արշակ, ծնվել է 1913 թվականին Ցոզղաղի (Թուրքիա) Իյդե գյուղում:

1915 թվականին, մեծ եղեռնին զոհ է զնում նրա ողջ ընտանիքը. մահից ազատվում են միայն Արշակն ու մայրը:

1920 թվականին, որրացած Արշակը ընկնում է Նախ Թալասի (Կեսարիա) Նիյր Իստ Բելիֆի ամերիկյան որրանոցը, ապա փոխադրվում է Զիբեյի (Լիբանան) որրանոցը, և հուսկ ուրեմն Նազարեթի (Պաղեստին) որրանոցը, որտեղ էլ ստանում է իր նախնական կրթությունը:

1927 թվականին Արշակն ընդունվում է Երուսաղեմի հայոց վանքի ժառանգավորաց

1935 թվականին ավարտելով Հեմայարանի աստվածաբանական դասընթացը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում Թորգոմ պատրիարքից. վերանվանվելով Տ. Շնորհք արեղա:

Այնուհետև երիտասարդ հոգևորականի անաջ բացվում է ծառայության ընդարձակ դաշտ: Նա լինում է պատրիարքի զավագ սեպակիր, փոխ տեսուչ ժառանգավորաց վարժարանի, 1936—1940 թվականներին՝ տեսուչ վանքի տպարանի, 1940—1941 թվականներին՝ Հայֆա քաղաքի հայ համայնքի հովիվ, 1941—1944 թվականներին նշանակվում է Անթիլիասի դպրեվանքի վերատեսուչ, 1945—1948 թվականներին՝ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ:



ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐԻՔ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԿԱՐԳՈՒՄ Է ԵՐ ՈՒՆԵՍ ՈՒՂԵՐԸ

վարժարանը, Գպրոցում նա իր ջանասիրությամբ, հեղահամբույր բնավորությամբ, օրինակելի վարքուբարքով սիրելի է դառնում և՛ տեսչության և՛ դասախոսական կազմին:

1932 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով ժառանգավորաց վարժարանի դասընթացը և իր հողում շատ վաղուց զգալով հոգևորականի կոչում, ուխտում է անհնահանջ սիրով և բոլորանվեր ոգով ծառայել Հայ եկեղեցուն, և երանաշնորհ Տ. Թորգոմ պատրիարքից ձեռնադրվում է սարկավագ:

1948 թվականին հրավիրվում է ԱՄՆ, վարելու Նյու-Ջերզիի հոգևոր հովվությունը, խմբագրելով միաժամանակ առաջնորդարանի պաշտոնաթերթ ռալայաստանյայց եկեղեցիք-ն:

1953 թվականին ընտրվում է Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ և որպես այդպիսին, 1955 թվականի սեպտեմբերին մասնակցում է էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովին և հոկտեմբերի 6-ին եպիսկոպոս է ձեռնադրվում նորընտիր Վուդղևն և Կաթուղիկոսից:

1957—1960 թվականներին լինում է լուսարարապետ նրուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարի:

1961 թվականի հոկտեմբերի 11-ին ընտրվում է պատրիարք Քուրքիայի հայոց:

Պերաշնորհ Տ. Շնորհք սրբազանը Հայ Եկեղեցու ճշմարիտ, հավատավոր հոգևորականներից մեկն է, պարկեշտ, կարգապահ, նախանձախնդիր և մաքրակենցաղ, նա յուրովսանն, սրտատուշ հավատարմությամբ և նվիրումով ծառայել է իր Եկեղեցուն և ժողովրդին:

Վերջին, միշտ բարձր կանգնած իր նոգևոր կոչման և պարտականության վեհ դիրքերում:

« Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միարանություն, շերտորեն շնորհավորում է նորընտիր պատրիարք հոր դահակալությունը, մաղթելով երկա՛ր, արևոտ օրեր, ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցու և ի մխիթարություն հայ ժողովրդի:





**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ**

Փետրվարի 18-ին երևանում տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահության ընդլայնված նիստը: Քննարկվեցին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Ստոկհոլմի սեսիայի արդյունքները, խաղաղության ֆոնդի ընդլայնման և խաղաղության պաշտպանության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերանսի հրավիրման հարցերը:

Ստոկհոլմի սեսիայի արդյունքների մասին հաղորդումով հանդես եկավ Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի պատասխանատու Բարտուղար Հ. Խաչատրյանը:

Նիստում ելույթ ունեցավ նաև Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա-ը, որը խոսեց խաղաղության ամրապնդման գործում Հայ եկեղեցու դերի մասին:

Ելույթ ունեցան նաև Հայկական ՍՍԻ Կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Շահինյանը, Ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ Հ. Այվազյանը, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության նախագահի տեղակալ Խ. Դանիելյանը, Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ, քաղ Ն. Զարյանը, «Հայաստանի աշխատավարձեր» ամսագրի խմբագիր Ա. Ներսիսյանը, վաստակավոր ստույգչուհի Ա. Առաքելյանը:

Նիստը որոշեց ընթացիկ տարվա մայիս ամսին հրավիրել խաղաղության պաշտպանության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերանս՝ նվիրված ընդհանուր և լիակատար զինաթափման հարցին:





## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՎԵՀԱՓԱՌ ԶԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋԱՐԿՈՎ, ԳԼՐԱԳՈՒՅՆ ԼՈՂԵՐ ԽՈՐՀՈՐԳՐ, 1961 թվականի սեպտեմբերի 23-ի իր նիստում, որոշում ընդունեց հրավիրելու Լոգեոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Լայկազուն արքեպիսկոպոս Արքանամյանին որպես անդամ Գերագույն Լոգեոր Խորհրդի: Լայկազուն սրբազանը սիրով ընդառաջեց սույն հրավերին:



ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ՇԱՐԱԹ, «սոսն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Մայր Տաճարում պատարագեց հողեշնորհ Տ. Եղիշե արևղա Գարայրյանը:



ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ՇԱՐԱԹ, Երեկոյան ժամը 7-ին, Լոգեոր Ճեմարանում կազմակերպվեց քարոզի Երեկո: Գլխարանի շորս ուսանողները՝ տիրացուներ ժիրայր Կոնսուլյանը, Կարպիս Սևրայդարյանը, Արշակ Տերտերյանը և Զոհրապ Շամլյանը, ի ներկայութեան քարոզախոսութեան դասախոս Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի միաբանութեան, կարգացին իրենց պատրաստած քարոզները:

Քարոզների ընթերցումից հետո տեղի ունեցավ երաժշտական Երեկո:



ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հողեշնորհ Տ. Մեսրոպ արևղա Պայրյանը:

Սուրբ պատարագի ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, «սոսն ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին»: Մայր Տաճարի ձախակողմյան դասում դասվող Ս. Լովհաննես Ակրտչի խորանի

վրա պատարագեց հողեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենյանը:



ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը:



ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Երեկոյան Ս. Սարգիս կեղեցեցում պատարագեց և քարոզեց հողեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, ընթացում ունենալով «Որ դասնե՛կանձն ի՞ր՝ կորուսցէ՛ դնա, և որ կորուսցէ՛ կանձն ի՞ր վասն ի՞մ՝ գտցէ՛ դնա»:



ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ, ՀԻՆԳՇԱԹԹԻ, Վեհափառ Հայրապետի նախապահութեամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռին առնթեր ճարտարապետական հանձնաժողովի նիստ, որը քննարկվեցին նոր Վեհարանի վերանորոգման հետ կապված շինարարական հարցեր:



ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ, ՀԻՆԳՇԱԹԹԻ, Լոգեոր Ճեմարանի հանդիսատեսում, տեղի ունեցավ Մայր Տաճարի երգեցիկ խմբի մենակատար Սվիդյանա Զաքարյանի համերգը, դաշնակի ընկերակցութեամբ տիկին Մահառուհու:

Համերգին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանութեանը, Մայր Աթոռին առնթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, Լոգեոր Ճեմարանի ուսանողութեանը և վանքի պաշտօնակալները:



ՀՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Լովհաննես քահանա Մարտիրոսյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՓԵՏՐՎԱՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզվեցին անհնալուծ սեթե մարդկանց և հրեշտակաց լեզուս խօսիցիմ և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»:

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ Հայրապետը:



ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովը իր հերթական նիստում քննարկեց նոր վեհարանի ներքին ձևավորման, Օշականի Ս. Մեսրոպի անվան եկեղեցու ներքին ձևավորման և նկարագրողման հարցերն ու Մայր Տաճարի նոր լուսամուտների նախագծերը:



ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՆ, ՈՒՐԱԿԻ, երեկոյան ժամերդությունից հետո, տեղի ունեցավ ուսման հայ ժանոթ ուսուցիչ և գրող Զարեհ

Պարոնյանի (Բլրուլ) տարելիցի առթիվ Հոգևհանգստյան պաշտոն:

Արարողության նախագահում էր վեհափառ Հայրապետը:



ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ, ՇԱՐԱՓ, «Սրբոյն Քաղէոսի առաքելոյն մերոյ և Սանդիստոյ կուսին»:


Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արքեպիսկոպոստը:

Օրվա տոնի առթիվ փակ էր Հոգևոր ճեմարանը:



ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, բնարան ունենալով սփոթաշիր զանձն քո բնտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեանս (Բ Տիմոթ. Ա 15):

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ Հայրապետը:





## ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԵՆ ՆԵՐՍ ՍԿԱՆ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վեհափառ Հայրապետի քառնան կաթողությունամբ, արտասույցով և՛՛՛՛ ՆՐՈՍԱՂԵՄԻ ճայոց Պատրիարքության պաշտօնաթերք շնորհաբեր ամսագրի 1061 թվականի սկսածներե և նույնամբերէ—նոյնմբեր միացյալ համարների խմբագրականներից գլխավոր մասեր, ՆՐՈՍԱՂԵՄԻ Ս. Հայրության Տաճարում սկսված երոզությունների մասին:

Աստվածաշնչական ՆՐՈՍԱՂԵՄԻ պատմական սրբավայրերի, վանքերի և տաճարների մեջ կենդանի է Ս. Հայրության ճակ, զմբերագար Տաճար, կառուցված Քրիստոսի խաչկությունյան և հայրության նվիրական վայրերի վրա: Տաճարի կառուցումը բարձրանում է մինչև Պ դարի 20-ական թվականները:

17 դարի ճեղքում ունեցող Ս. Հայրության այս Տաճարի գլխավոր անդկլ և՛՛ շատ փարսիկներ, Տաճար, դարերի ընթացում, ենթարկվել է բնական և Խաղաղական փոթորիկներ յ պատճառած ավերածության, որոնցից հատկապես պետք է հիշել 1808 յվականի հեղեղը և 1927 յվականի եղբայրամբ:

Ս. Հայրության այս Տաճարի «գլխավոր պահպաններն և՛՛՛՛ եւ՛՛՛՛ իրավատեր պատրիարքությունները՝ Հայոց, Հունաց և Լատինաց, որոնք ունենոյա սուր պատարագ և սրշտածուրք և՛՛ կատարում այնուպ:

Իրավատեր այս եւ՛՛՛՛ պատրիարքարանների համաձայնությունամբ արդեն իսկ սկսվել և՛՛ վերանորոգության ուղիստանները:

Տաճարի երոզության ընդհանուր ծախսը մոտավորապես հաշվված է 750 000 ստեղիկեց: Հայոց Պատրիարքարանը, իրեն մին եւ՛՛՛՛ իրավատեր պատրիարքություններից, պետք է վճարի վերոնիշյալ ծախսերի զմաստի մեկ երոզողը, այսինքն 250 000 ստեղիկեց, որպես երոզության իր բաժինը:

Ս. Հայրության Տաճարի երոզության մասնակցության հարցը ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ է: Պարզվանելով ճայ մոզովորի պատվի, ազգային արմատագաղտության և հավատի կենսունակության հարցն է:

Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վստան և՛՛, որ ճայ հավասարյոց մոզովորը, որպես Ս. Հայրության Տաճարի եւ՛՛՛՛ իրավատերերից մեկը Բրիտանական միջազգային այդ սրբավայրի, սիրով կրեգառաչի նույն Ամենապատվություն Տ. Աղիլե Սրբազան Պատրիարքի կոչին և կանց չի առնի Եյուրական ոչ մի զմեղություն ասոսց, զոյացնելու համար Ս. Հայրության Տաճարի ընդհանուր վերանորոգության ծախսերի իր բաժինը:

Էջմիածինն ամսագիրը, Վեհափառ Հայրապետի հրամանով, ճետազայում նուրից կանդորպանա այս կառուր հարցին:

ԿՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԿԻՆ» ԱՄՈՍԿՐԻ

Երկու ամիսներն ի վեր սկսած են արդեն նորոգությունները Ս. Հայրության Տաճարին ներս, համաձայն Էրից Պատրիարքարաններու, Հունաց, Լատինաց և Հայոց ճարտարա-

պետներու ներկայացուցած տեղեկագրերուն և զույց տված ուղղություններուն: Ավիտորդ չենք նկատեր, հոս, անցած մի ևս կրկնելու, թե տարիների ի վեր մասնա-

ղետ ճարտարապետներու ուսումնասիրութեանց և դնտութեանց առարկա եղող Ս. Հարութեան Տաճարը կկարտօսի հետեւյալ անհրաժեշտ նորոգութիւններուն.

Ա. Տաճարին գմբեթը վեր բռնող սյուները անհրաժեշտաբար պետք ունին բնօրին աւելի ներքին ամրացումներու, ինչպես նաև յուրացանչուր սյունին առանցքին մեջն ու շուրջը շգթայածն դռտիներու, որոնք պիտի նպաստեն գմբեթի ընդհանուր կայունութեան:

Բ. Նորոգութեան և ամրացման պիտի ենթարկվին Ս. Գերեզմանը, տաղավարող կառուցին պատերն ու սյուները: Մասնազետ ճարտարապետները իրենց տեղեկագրին մէջ դիտել կուտան, թէ Գերեզմանի մատուան այժմու կառուցը, 1808-ին Ս. Հարութեան հրդհնէն վերջ հույներու կողմէն նորոգված, չի ներդաշնակվիր Տաճարի ընդհանուր ճարտարապետութեան հետ և պետք ունի որոշ փոփոխութիւններու:

Գ. Փլլելու վտանգին ներքև է նույն Ս. Հարութեան Տաճարի մուտքին արտաքին մասը: Ժակատին վերի կառուցները ղեպի դուրս շեղած են և զարգացանդակներու մեծ մասը մաշած ու կոտրտած: Համաձայն ճարտարապետներու թելագրութեանց, ամբողջպիս վար պետք է առնվի ճակատի այս մասը և իսկամթով վերստին վերաշինվի, ամբողջացնելով թերի և պակաս կողմերը:

Դ. Անհրաժեշտ նկատվեցավ, նորոգութեանց սկսելն առաջ, ընդհանուր քննութեան առարկա ընել Տաճարին հիմքերը և անոնց հետ կապ ունեցող ջրօրի ճամբաններն ու ջրհորները:

Այսպէս, շուրջ երեսունհինգ տարիներ ի վեր որակարգ եղող Ս. Հարութեան Տաճարի նորոգութեան ծրագիրը վերջապէս գործադրութեան կգրվի, հավանութեամբ և մասնակցութեամբ իրավակից Պատրիարքարաններու...:

Ս. Հարութեան նորոգութիւնը կգրավի չեքմ հետաքրքրութիւնը բովանդակ քրիստոնյա աշխարհին:

Առաջին անգամ չէ, որ Ս. Հակոբեանց նվիրյալ և դիմվորյալ միաբանութիւնը հարկին ներքև կգտնվի մտածելու Ս. Տեղայց մեզի մեր նախնիքներէն ժառանգ մնացած իրավունք սրբավայրերու պահպանութեանը մասին: Հոս, ի պատիվ հաստատութեանս հոգեւոր պիւնվորներուն, պետք է բսել, թէ միայն պատմութեան չէ որ կպատկանին այն սխրալի զոհարբումները, որոնք այս Ս. Ուխտի քաջակորով նվիրյալներուն գործն են եղած, ինչպես երեկ՝ այնպես այ մեր օրերուն, Ս. Նրկրի մեջ մեր կրօնական և ազգային իրավանց ի պաշտպանութիւն: Այդ գործը իր կարելի և վայել գիտակցութեամբ և լրջութեամբ կշարունակվի այսօր նորեն, հակա-

ռակ բազմապիսի դժվարութիւններու...: Դյուրին չէ եղած անշուշտ աղնիվ ճիզրու և զոհողութիւններու այս գործը, պատմութեան դարերն ի վեր: Անոնք որ ծանոթ են այս հաստատութեան կյանքին և անոր շուրջը եռացող իրազարմութեանց, կրնան վկայել, թէ հրաշքներու հավասար ջանքն ի գործ դրված են, դիմավորելու աղնտներն ու դժվարութիւնները, որոնք միշտ անպակաս եղած են միջազգային կրօնական այս ոստանէն ներս:

Այդ հրաշքը նախ մեր ժողովուրդին սերն է, իր հոգեւոր ու ազգային սրբութիւններու և հաստատութիւններու նկատմամբ, ապա Աստուծո հրաշագործ զորութիւնը, որ չէ լքած մեզ ընավ, մեր ազգային տաղանայնութիւն և ժամանակի շար բերումներու ընդմիջնէ:

Փառք երախտաշատ մեր նախնայց, որոնք ըրած են իրենց լավագույնը, Ս. Նրկրի մեջ նախ մեզի համար ապահովելու համար հոգեւոր այս գանձը, ապա հայրորդող սերունդներուն կտակելու սրբազան իրավունքը, որ հակառակ ժամանակի ընթացքին ենթարկված բազում կրճատումներու, տակաւին կրնա մեղի երախտագիտութիւն հարկադրել անոնց սուր հիշատակին առջև: Այժմ մերն է պարտքը ընելու մեր ղերազույնը, պահելու և մեր հաջորդներուն հանձնելու ազգին այս ժառանգութիւնը: Ասիկա միայն կկեղեցական ու ազգային պարտականութիւն մը չէ, այլ նաև փառք մը և պատիվ մը, միջկրօնական և միջազգային այս նվիրական ոստանին մեջ:

Քաղցր զգացումն ունինք մտածելու, թէ Ս. Հակոբեանց միաբանութեան ուսերուն դրված այս ծանր բայց սրբազան պարտականութիւնը միայն մերը չէ, այլ բովանդակ հայ ժողովուրդին, ի սփյուռս աշխարհի: Վստահ ենք, որ մեր ազգային հաստատութիւնները կրօնազգած և ազգանվիր ունեւորներ, ինչպես նաև բովանդակ հայութիւնը միահամուռ, պիտի շուզեն, որ մեր Եկեղեցիին ու Ազգին զիրքը նվազի կրօնական ու ցեղային իրավունքներու մրցարանը հանդիսացող Ս. Նրկրին մեջ, և անոնք բոլորը պիտի ընեն իրենց առավելագույնը, ապահովելու մեռածին իրավունքները, Ս. Հարութեան Տաճարի համաքրիստոնեական այս Սրբարանին նորոգութեան առիթով:

Նորոգութեան գործին վերաբերյալ ճշտվեցան հետեւյալ տեսակետները.— Այն մասերը Տաճարին, որոնք յուրաքանչյուր հարանվանութեան առանձինն սեփականութիւնը կնկատվին և ենթակա են իր իրավասութեան, հետաքրքրվող հարանվանութիւնը ինք պիտի հայթայի վերաշինման ծախքը: Իսկ այս մասերը, որոնք հասարակաց սեփականու-


թյուն ընդունված են, երեք Պատրիարքարանները հավասար իրավունքներով և ծախքով պիտի բերեն իրենց մասնակցությունը։ Քեկ վերանորոգման ընդհանուր գնահատանք մը վերջնականապես չէ ճշտված, այնուամենայնիվ մտավորապես 750 000 ստեղծվողի ընդհանուր ծախք մը կնխատեսվի, համաձայն ճարտարապետներու գնահատման։ Հայոց Պատրիարքարանը, իբրև մին երեք գլխավոր հարանվանություններն, որոնք սեփականության իրավունքներ ունին այս աշխարհամատուռ ու պատմական Տաճարին մեջ, վերոհիշյալ ծախուց պումարին մեկ երրորդը, 250 000 ստեղծվող, հոգալու հարկին ներքև է, կարենալ ապահովելու իր տասնվեց դարերն ի վեր այս Տաճարին մեջ ունեցած եկեղեցական ու ազգային իրավունքները, որոնք դարերով ճանչցված ու վավերացված են Ս. Երկրի վրա տիրապետության իրավունք ունեցող կառավարություններն, սկսյալ Օմար Խալիֆայեն, Սա-

լահ-էդ-Դինեն, Օսմանյան սուլթաններն, Բրիտանական հոգատարութենեն և Հորդանանի թագավորն, արքայական ֆեոմանեն-րով և վազնչական այդ իրավունքները հաստատող վավերագրերով։ Մեր իրավունքները ճանչցված են նույնպես միջազգայնորեն Փարիզի դաշնագրին մեջ, 1856-ին, Ղրիմի պատերազմն հետո, 1878-ին Բեռլինի դաշնագրով։

Ինչպես կհետեի, այս դարավոր ու պատմական կարևորություն ունեցող եկեղեցիին մեջ կարենալ պահելու մեր սեփականության իրավունքը, պարտինք Հունաց և Լատինայ Պատրիարքարաններուն հետ հավասար բաժիններով բերելու մեր մասնակցությունը վերաշինության գործին։ Ասիկա կենսական հարց մըն է մեր գոյության իրավունքը կարենալ պահելու համար, որովհետև պատրիարքական մեր իրավունքները կրխին Ս. Տեղյաց մեջ մեր ունեցած իրավասություններն։

DA-4830





# Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՑ. Է. ԱՃԱՌՑԱՆ

## Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց\*

Գ Լ ՈՒ Ե Գ Ա Ս Ե Զ Ի Լ Գ Ե Ր Ո Ր Դ

### ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### § 1

Վերը, տասնմեկերորդ գլխում, խոսելով ծ դարի գրական շարժման վրա, տեղ-տեղ ցույց տվինք այն գրական մեծ գործակցությունը, որ Մեսրոպ ցույց տվեց Ս. Գրքի և ուրիշ եկեղեցական գրքերի թարգմանության մեջ: Բայց այս տեղեկությունները ավելի ընդհանուր բնույթ ունենալով, ներկա գլխով ուզում ենք խոսել Մեսրոպի աշխատությունների վրա մասնավորապես, քննելով յուրաքանչյուրը առանձին, հիշատակել, թե ի՛նչ գործեր վերագրվում են իրեն և թե սրանցից որո՞նք են ստույգ:

Ինչպես արդեն գիտենք, Մեսրոպի առաջին աշխատությունն է Առակաց գրքի թարգմանությունը, որ միանգամայն հայ գրականության մեջ գրված առաջին երկասիրությունն է և որ Մեսրոպ կատարեց իր երկու հասուն աշակերտների՝ Հովհանն Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու ընկերակցությամբ:

Առակաց գիրքը, որ Սողոմոն իմաստունի չորս երկասիրություններից գլխավորն է, միջակ մեծությամբ մի տետրակ է, որ պարունակում է մտավորապես 40 ութածալ էրես: Աշխատությունը բաժանված է երեք մասի, որոնք ընդամենը ունեն 31 գլուխ:

\* Նարունակված ռեչմածին առաջին 1954 թվականի XI, XII, 1955 թվականի I, II, III, IV, IX, 1956 թվականի I, II, IV-V, VII-IX, XI-XII, 1961 թվականի Ժ, ԺԱ, ԺԲ և 1962 թվականի Ա շտաբներից:

1750 համարով: Պարունակում է թարգմանված խրատներ, ուղղված ամեն դասի մարդկանց, նրանց սրտում առաքինության սերմերը ցանելու և շարունակելու որոմը արմատախիլ անելու նպատակով: Գրվածքն ունի այնպիսի հեշտ ու դյուրասահ ոճ, որով ամեն ընթերցողի համար պարզ ու հասկանալի է դառնում: Մեսրոպ իր թարգմանության մեջ քանացել է նյութին և հեղինակի նպատակին համապատասխան լեզու գործածել: Նա այնպիսի մի լեզու ունի, որ ամեն զարգարանքից ու պճնությունից հեռու, հանդարտ հոսող առվակի նման, հեղիկ ու հեշտասահ ընթանում է: Ավելի փափուկ քան Սասյա և Սրբմիայի մարգարեությանց լեզուն, ավելի նուրբ և ավելի վայելուչ քան Մենդոց և Ավետարանի թարգմանությունը, այս երկուսի միջև՝ բռնում է միջին ճանապարհ:

Մանթաքանչու համար ընթերցողին Մեսրոպի սույն հարազատ լեզվին, բերենք մի կարճ օրինակ գրքի հենց սկզբից-

«Ճանաչել գիմաստութիւն և զխրատ, իմանալ զրանս հանճարոյ, ընդունել զգարձուածս բանից. ի միտ առնուլ զարգարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանճար: Որոց իրն լուիցէ իմաստունն՝ իմաստագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի: Ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա, Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն. հանճար բառի ամենեցուն որ սու-

նեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգոնութեան. զիմաստութիւն և զխրատ ամպարիշտք անգոնեն: Լո՛ւր, որդեակ, խրատու հօր քոյ, և մի՛ մերժե՛ր զօրէնս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցի զյուխ քո և մանեակ ոսկի ի պարանոցի քումս:

§ 2

Առական գրքի թարգմանութիւնից հետո Մեսրոպին է ընծայվում նաև ամբողջ Ս. Գրքի թարգմանութիւնը (Հին և Նոր Կտակարանները), որ իբր թե կատարել է նա Մամուսատ եղած ժամանակ, իր Հովսեփ և Հովհանն աշակերտների հետ: Այսպիսի տեղեկութիւններ տալիս է նախ հորինացի (Գ ծգ). և ահա իր բառերը. «Հանգերձ Հոռփանոսի կերպածեալ զգիրն Մեսրոպայ... Եւ իսկույն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռական, քովանդակ զքսան և երկու յայտնիսս և զնոռ Կտակս յեղու ի հայ բան, նա և աշակերտք նորա Յոհանն Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի»: Թեև Կորյուն այսպիսի բան չգիտեմ, բայց Փոքր Կորյուն, հետևելով հորինացուն, նույնն է ավանդում, միայն փոխանակ Նոր Կտակարանի՝ Հինը հիշելով. «Եւ իսկույն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռական իմաստնուն Սողոմոնի, քովանդակեալ զքսան և երկուս յայտնիսն, զՀին Կտակարանսն յեղու ի հայ բան» (էջ 11):

Այս տեղեկութիւնը, որ հակասում է Ս. Գրքի թարգմանութիւն քոյոր հանգամանքներին, պետք է համարել, թե քոյորովին սխալ է: Ապա թե ոչ պետք պիտի լինի ընդունել, թե Ս. Գիրքը հայերեն թարգմանված է երեք անգամ. առաջինը Մեսրոպի ձեռքով (Սամուսատի այս թարգմանութիւնը), երկրորդը Սահակի ձեռքով, Մեսրոպի Ազվանք քարոզութիւն զնացած ժամանակ (հորինացի, Գ ծգ՝ «Եւ զտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարպեալ յասորոյն՝ յոչ լինելոյ յունիս») և երրորդ՝ թարգմանիչների վերագործին՝ Եղնիկի ընկերակցութեամբ (հորինացի գ կա): Բայց թե այսպիսի մի ենթադրութիւն հակառակ է նույնիսկ հորինացուն, հայտնի է իր վկայութիւնից, որ վերջին թարգմանութիւնն առթիվ խոսելով ասում է. «Երբեքայ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն» (Գ կա), Եթե մի՛ անգամ էր թարգմանված առաջ, ուրեմն Սամուսատի ենթադրյալ թարգմանութիւնը գոյութիւն չունի: Եվ ինչպե՞ս կարող էր Մեսրոպ այնպիսի երկարատև մի աշխատութիւն ձեռնարկել և կատարել այնքան կարճ ժամանակում որ մնաց Սամուսատում, երբ գի-

տեր, թե Հայաստանի մեջ ակնդէտ իր վերագործին էին սպասում թագավորը, Սահակ և ամբողջ ուսումնադուրկ, բայց ուսումնատենչ ժողովուրդը: Պարզ է, որ միայն Առական գրքի թարգմանութիւնը տեղիք է տվել հորինացուն՝ ամբողջ Ս. Գիրքը միասին թարգմանված կարծելու: Ինչ թվում է, թե հորինացու այս թուրիմացութիւնը հոգեբանական է. Կորյուն ասել էր. «Եւ եզեալ սկիզբն յԱռական Սողոմոնի», որ հորինացին էլ կրկնում է ուրիշ բառերով՝ «խորհրդաբար սկսանելով յԱռական»: Երբ մեկը մի բան սկսում է, պիտի վերջացնի. ահա թե ինչու հորինացին ամբողջ Ս. Գիրքը միասին թարգմանված է կարծել:

Մայիսայան, թարգմանութիւն հորինացու պատմութեան, ծանոթ. 315, կարծում է, թե հորինացու պատմութեան այս տողը՝ «քովանդակելով զքսան և երկու յայտնիսն և զնոր Կտակս յեղու ի հայ բան», լուսանցագրութիւն է, որ հետո մտել է քննարկի մեջ: Ավետարանի առժամանակյա թարգմանութեան մասին (Մեսրոպի ձեռքով) խոսել ենք արդեն, իսկ իր անորոշ գործակցութեան մասին Ս. Գրքի լիակատար թարգմանութեան, ինչպես և Ս դարի մյուս զրական արտադրութեանց մեջ, տես տասներորդ և տասնմեկերորդ գլուխները:

§ 3

Սահակի և Մեսրոպի աշխատակցութեան արդյունք են համարվում Հայ Եկեղեցու ժխական հինգ կարևոր գրքերը, որոնք են ժամագիրք, Պատարագամատուց, Երարկնոց և Մաշտոց Այսպես, օրինակ՝ Գամլյան, «Պատմութիւն Հայոց», Ա 510:

Այս քոյորի մեջ ամենազիսավորն է Մաշտոցը կամ Միսարանը, որ Հայաստանյայց Եկեղեցու ժխականտարութեան համար ամենամեծ նշանակութիւն ունի:

Այս գրքի հեղինակի մասին երկու տարբեր ավանդութիւններ կան. առաջինը, որ վենետիկյան դպրոցի և առհասարակ քոյոր հին բանասերների կարծիքն է, ենթադրում է, թե Մաշտոց գրքի հեղինակը Մեսրոպն է, իսկ երկրորդը, որ ավելի նոր ու քննադատ բանասերների կարծիքն է, այս աշխատութիւնը ընծայում է Ք դարի մատենագիր Մաշտոց կաթողիկոսին: Առաջին կարծիքը թեև շատ ավելի տարածված, սակայն չի հիմնվում մի հին պատմական վկայութեան վրա. ո՛չ Կորյուն, ո՛չ Փարպեցի, ո՛չ հորինացի և ո՛չ էլ սրանց մոտ կամ հեռու ապրած մի հեղինակ այս մասին չի տալիս որևէ տեղեկութիւն. և հայտնի չէ ինչ, թե նոր հեղինակները ի՞նչ վկայութեան վրա հիմնվելով, պնդում են այս կարծիքի վրա:

Արքարն, Գամշյան, «Պատմութիւն Հայոց», Ա, էջ 769 և Զարբհանալյան, «Պատմութիւն Հայ դպրութեան», Բ, էջ 492, այս կարծիքը ապացուցանելու համար վկայութիւն են կոչում Շնորհալու «Առ Միշագետացիս» գրած թուղթը: Բայց թե այս թուղթը հակադրած է ապացուցանում, կտեսնենք քիչ ձեռոտ: Երկրորդ կարծիքը հաստատող հին պատմական վկայութիւններ շատ կան: Այսպես նախ Կիրակոս Գանձակեցի, որ (էջ 45), խոսերով Մաշտոց կաթողիկոսի վրա, ի միջի այլոց ասում է. «Սա կարգեաց զգիրսն որ քստ իր անուանն Մաշտոց կոչի, ժողովեալ զամենայն կարգեալ ազօթս և զընթերցուածս ի միասին յարմարեալ յաւելուածով յիրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան»:

Երկրորդ վկայութիւնը տալիս է «Յայսմատուրք»-ը՝ Սահմի Գ=հոկտեմբերի 13, «Վարք և յիշատակ սուրբ Հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին»: Պատմում է, թե նույն անձը... լեալ 60 ամաց՝ եղև կաթողիկոս. և եկաց տարի մի յաթոռն հայրապետական և վախճանեցաւ ի գեղաքաղաքն Գառնի, ու եղաւ պատուով մօտ ի հովանոց արքային Տրդատայ, ի բերդն Գառնույ 982 (-897) թուին: Այս վարդապետս Մաշտոց ընդ բարի վարուց առաքինութեանն իւրոյ, արար և բազում ուղղութիւնս կարգաց և կրօնից Եկեղեցույ, մի ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, և զթերին ինքն ելից յաստուածատուր շնորհաց իւրոց, և եդ ի միում տփի: Զկարգն Մկրտութեան և զՊասակին, զՀաղորդութեան և զԹաղմանն, զՀոգեհանգիստն և զհաշօրհնեանն, զՍերժօրհնէն և զԷղջ, զԿալ և զհնձան, զհորս և զկարաս, զՋրօրհնէն և զՆոնայուայն, զՀիմնարկէթն և զԵկեղեցի օրհնօքն, զաւաղանին և զպղծեալ տաճարին, զՁեռնադրութիւնն և զՔահանաթաղն, և զայլն ամենայն, որովք վարին մերս կարգաւորութիւն: Վասն որոյ և անուն գրոցն Մաշտոց կոչեցաւ, զի նորին աշխատասէր կամօքն ի մի վայր ժողովեցաւ»:

Երրորդ վկայութիւնը տալիս է Ներսես Շնորհալու թուղթն առ Միշագետացիս (տե՛ս Շնորհալու «Թուղթ ընդհանրական», տպ. էջմիածին, 1865, էջ 333—400): Այս թղթում միշագետացի ասորիների արած զանազան առարկութիւններին պատասխանելուց հետո, Շնորհալին անցնում է խոսել Մաշտոց գրքի մասին, այսպես. «Շուրք դարձեալ՝ զի ոմանք ի մուրք քահանայից զժամկեալ զարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Քոնդրակեցույ վերստին շարժեն ի կործանումն լսողացն ասելով, եթէ Եկեղեցի ո՛չ շինեալն է ի մարդկանէ, այլ մեք միայն, և Մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալք են խալ օրհնել և Եկեղեցի և այլքն ոչ են ըն-

դունելի (էջ 373)... Իսկ այն՝ զի զցուցակն ընդունելի, որպէս թէ ոչ ի նախնի հարցն, այլ ի վերջում ժամանակի ի Մաշտոցէ ումեմնէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ո՛չ ճշմարիտ: Քանզի ամենայն կարգեալքն ի նմա ի յառաջին հարցն հաստատեալք էին. է որ ի մերոց լուսատուրչացն, և է որ յայլոց ազգաց հայրապետաց, որպէս և են իսկ որոշմեալ իւրաքանչիւրոցն անուանք ի սկիզբն ցուցակին: Իսկ երանելին Մաշտոց գրածանեալ կանոնսն ի միմեանց ի մի դիրս հաւաքեաց, վասն որոյ և նոյն գիրք յանուն նորա ասացեալ լինին: Բայց թէ և նմին իսկ Սրբոյն Մաշտոցի էին ասացեալ ամենայնքն, զի՛նչ պատճառաւ են անընդունելի. կամ ցուցցեն զվնասն որ ի նմա, և կամ յայտնի առնեն զանձինս, թէ հակառակ են Քրիստոսի և օրինաց նորա...» (էջ 380):

Շնորհալու այս վկայութիւնը փարատում է ամեն կասկած և հաստատ կերպով ցույց է տալիս, թե Մաշտոց գրքի մեջ գտնված կանոնները թեև առնածին կազմված են զանազան հայրապետներից, բայց նրանց կարգավորութիւնը և մի գրքի մեջ ամփոփումը եղել է Մաշտոց կաթողիկոսի ձեռքով զի վերջում ժամանակիս, Զարբհանալյան սխալ հասկանալով Շնորհալու այս բոլորովին պարզ խոսքերը (էջ 492), ասում է, թե «Սուրբն Ներսես Շնորհալի, որ առ Միշագետացիս գրած թղթույն մեջ հայտնապես կըրուցե, թե որչափ անտեղի է այս կարծիքը» (Միսարանը Մաշտոցին և ո՛չ Ս. Մեսրոպին ընծայելը): Զարբհանալյան սխալվում է անշուշտ Շնորհալու զի Մաշտոցէ ոմեմնէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ո՛չ ճշմարիտս բառերից: Բայց զժբախտարար Շնորհալին այս բառերով Մաշտոցի հեղինակ լինելն է միայն մերժում և ո՛չ ընամ վեր կարգավորութիւնը, որ հետո ավելի ընդարձակ բացատրում է:

Մեսրոպին կոզմնակից կարելի էր համարել Մաշտոց կաթողիկոսի կենսագրութիւնը, որ գրել է իր աշակերտը Ստեփանոս վարդապետ Սեանեցի (տե՛ս Զարբհանալյան, «Պատմութիւն Հայ դպրութեան», Բ, էջ 514): Այս կենսագրութիւնը գտնվում է էջմիածնի ձեռագրերից մի քանիսի մեջ. ինչպե՛ս՝ Կարինյան № 957, էջ 614—617, Գևորգյան № 100, էջ 582—583, Գևորգյան № 97 և այլն. տպված է նաև Գ. Տեր-Պողոսյանի «Էւոն Շանթի շէրն աստվածներ»-ը և Ստեփանոս վանականի հիշատակարանը աշխատութիւն մեջ (Շուշի, 1913): Բայց այս կենսագրութիւն մեջ ակնարկութիւն անգամ չկա այն մասին, թե Մաշտոց կաթողիկոսն է եղել Մաշտոց գրքի կարգավորելը: Այս պարագան անշուշտ շատ զարմանալի է. բայց զարմանքը կվերանա, երբ նկատենք, թե

կենսագրութիւնը դրված է այն ժամանակ, երբ Մաշտոց դեռ 60 տարեկանից պակաս էր, ինչպես հիշվում է նույն կենսագրութիւն մեջ, և հետևաբար դեռ կաթողիկոսն էլ չէր ընտրւած. մինչդեռ մենք գիտենք, թէ Մաշտոց գրքի հորինումը եղած է նույն հայրապետի կաթողիկոսութեան ժամանակ:

Այժմ անցնենք քննել մտտիկից բուն Մաշտոց գիրքը, որով նոր փաստեր պիտի ունենանք շոշափելի կերպով մերժելու հին ձևի ենթադրութիւնները:

Արդի գործածութեան մեջ Մաշտոցը երկու տեսակ էր՝ Մեծ կամ Մայր Մաշտոց և Փոքր Մաշտոց, որ իր սովորական գործածութեան պատճառով հասարակաբար կոչւում է պարզապես Մաշտոց:

Մեծ կամ Մայր Մաշտոցը պարունակում է հետևյալ 45 գլուխները, որոնք կոչվում են կանոն.

1. Կարգ մկրտութեան (բուն մկրտութիւն, ութօրէք և քառասներեայք).
2. Կանոն նորոգ սափելու զհերս.
3. Կանոն նշան տալու և օրհնելու.
4. Կանոն կուսի պսակին և Կանոն պսակ վերացուցանելու.
5. Կանոն երկրորդ պսակի.
6. Կանոն հաղորդ տալու հիւանդաց.
7. Կանոն գիշերածամու աղօթի (ծանր հիւանդներին վրա կարգացվելիք աղօթքներն են. համեմատութեամբ նախորդի՝ շատ ավելի ընդարձակ).
8. Կանոն խաչալուռայ առնելու.
9. Հոգեհանգիստ մեռելոց.
10. Կանոն աղ օրհնելու.
11. Կանոն մատաղ օրհնելու.
12. Կանոն հաւ օրհնելու.
13. Կանոն ջրհոր օրհնելու.
14. Կանոն զսերմանիս օրհնելու (արա, հունձ, կալ, հնձան).
15. Կանոն խաչ օրհնելու.
16. Կանոն նկարեալ եկեղեցի և պատկեր օրհնելու և օծելու.
17. Կանոն սկիհ և մաղղմայ օրհնելու.
18. Կանոն եկեղեցու զգեստ օրհնելու.
19. Կանոն նոր գիրք օրհնելու.
20. Կանոն նորաւարտ աշակերտ օրհնելու.
21. Կանոն դժուարածին լղի կնոջ.
22. Կանոն փարատելու զփոս նորածին մանկանց.
23. Կանոն թացեղէն պղծեալ օրհնելու.
24. Կանոն խունկ օրհնելու.
26. Կանոն վասն այսահարաց և լուսնտտից.
25. Կանոն վասն բարձման երաշտի.
27. Կանոն թուղման նշեցելոց (այգուց, հոթնաւոր).

28. Կանոն տղայաթաղի (այգուց, հոթնաւոր).
  29. Շարականք Հանգստեան.
  30. Աւետարանք բժշկութեան.
  31. Աղօթք բժշկութեան.
  32. Հիմնարկէք եկեղեցու (հիմնարկութիւն, նաւակատիք և օծումն).
  33. Կանոն եկեղեցու աւազան օրհնելու.
  34. Կանոն զպղծեալ տաճարն սրբելու.
  35. Կանոն եկեղեցու նոր դուռ օծելու.
  36. Կանոն ժամհար օրհնելու.
  37. Կանոն ապաշխարութեան մեղուցելոց.
  38. Կանոն օրհնութեան և ձեռնադրութեան հոթն աստիճանաւորաց եկեղեցու (1. սաղմոսերգուք, 2. աւելածուք, դոնապանք, 3. քնթեքոցք, 4. երգմնեցուցիչք, 5. քահանայք, 6. կիսասարկաւազունք, 7. աւագ սարկաւազունք, 8. քահանայք և արեղայք).
  39. Կանոն մասնաւոր իշխանութեան 4 աստիճան զաւազանի.
  40. Կանոն ծայրագոյն իշխանութեան 10 աստիճան զաւազանի.
  41. Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց.
  42. Քահանայաթաղ.
  43. Կանոն օրհնութեան Ս. Միստնի.
  44. Կանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց.
  45. Կանոն օծման թագաւորաց:
- Մայր Մաշտոցի զանազան տպագրութիւնները կարող են հիշուել 45 գլուխներից մի երկուսը հապաված լինել. այսպէս օրինակ (41) «Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց», (43) «Կանոն օրհնութեան Ս. Միստնի», (44) «Կանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց», և վերջապես (45) «Կանոն օծման թագաւորաց»: Այս կանոնները կարող են կազմել նաև առանձին հատոր՝ «Գիրք կամ Մաշտոց ձեռնադրութեան անունով: Բայց լիակատար Մայր Մաշտոցը պետք է որ բոլոր կանոններն էլ պարունակի:
- Փոքր Մաշտոցում գտնվում են վերի 45 գլուխներից միայն այն կանոնները, որոնք ամենօրյա գործածութեան մեջ պետք են. ինչպէս Մկրտութեան, նշանադրութեան, Պսակի, Թաղման և ուրիշ կարգեր: Առհասարակ 1—31 կանոնները կարող են մուտք գործել Փոքր Մաշտոցի մեջ. իսկ Փոքր Մաշտոցը ամբողջովին պարփակվում է Մայր Մաշտոցում:
- Թեև Մաշտոցի կազմակերպութիւնը սովորականաբար Մեսրոպին կամ Մաշտոց կաթողիկոսին է ընծայվում, սակայն կանոնների մեջ կան մի քանիսը, որոնք առանձին հեղինակի անուն ունեն և հետևաբար լին կարող այս երկուսից լինել: Այսպէս են (31) «Աղօթք բժշկութեան», որ Գրիգոր Նարեկացու հեղինակութիւնն է՝ նարեկից հանված. (32)

Հիմնարկեք եկեղեցւոյ, որ կազմել է նախ  
 Հովհան Մանդակունի, իսկ հետո էջմիածնի  
 միաբան Մինաս արքեպիսկոպոստը նոր փո-  
 խադրութիւններով ձեւավորել է (հմմտ.  
 «Մայր Մաշտոց», տպ. Պոլիս, 1807, էջ  
 155), (39) «Կանոն մասնաւոր իշխանութեան  
 4 աստիճան գաւազանի» Գրիգոր Տաթևացու  
 աշխատութիւնն է, Մնացյալները թեև Մաշ-  
 տոցում առանձին հեղինակի անուն չեն  
 կրում, բայց նրանց մեծ մասը «Օրհնութիւ-  
 ն արքայ ցուցակում» ընծայված է զանազան  
 հեղինակների, այսպես՝ (1) «Կարգ Մկրտու-  
 թեան» և (4) կարգ պսակադրութեան» ընծայ-  
 վում են Հովհան Մանդակունուն, (8) «Կա-  
 նոն նալալուայ առնելոյ»՝ կազմել է Ս. Բար-  
 սեղ, իր հայրապետութիւն հինգերորդ տա-  
 րում, Կապադովկիայի Կեսարիա քաղաքում  
 և Խորով թարգմանիչ բերել է Երուսաղեմից,  
 (9) Հոգեհանգստի կարգը կազմել է Ս. Օփ-  
 րեմ ասորի, Նիկիմագես քաղաքում, իր հայ-  
 րապետութիւն երկրորդ տարում, որ Ղազար  
 Փարպեցիին բերել է Հայաստան, (10) «Կա-  
 նոն աղ օրհնելոյ» կազմել է Հուստոս Եպիս-  
 կոպոս, (14) «Կանոն զսերմանիս օրհնելոյ»  
 կազմել է Գրիգոր Աստվածաբան, որ իր  
 թե Մովսես Խորենացիին բերել է Հայաստան,  
 (15) «Կանոն խալ օրհնելոյ» Մանդակու-  
 նունն է, (16) «Կանոն նկարեայ եկեղեցւոյ»  
 Գրիգոր Լուսավորչին է ընծայվում, (17)  
 «Կանոն սկիհ և մաղզմայ օրհնելոյ» և (18)  
 «Եկեղեցւոյ զգեստ օրհնելոյ» Հովհան Ման-  
 դակունուց են, (27) «Կանոն թաղման նշե-  
 ցելոց» կազմեց Ս. Սահակ Վաղարշապա-  
 տում, (32) «Էշիմնարկեք եկեղեցւոյ», (33)  
 «Կանոն եկեղեցւոյ աւազան օրհնելոյ», (34)  
 «Կանոն զպօծնայ տաճարն սրբելոյ» Հովհան  
 Մանդակունուց են, (35) «Կանոն եկեղեցւոյ  
 նոր դուռ օծելոյ» Լուսավորչից է, (36) «Կա-  
 նոն ժամհար օրհնելոյ» Հովհան Մանդակու-  
 նուց է, (37) «Կանոն ապաշխարութեան մեղու-  
 ցելոց» կազմել է Կյուրենդ Երուսաղեմացիին  
 իր հայրապետութիւն 21-րդ տարին, Երու-  
 սաղեմում, որ Կորյուն և Ընձակ թարգմանիչ-  
 ները Հայաստան բերին, (38) «Ծօթն աստի-  
 ճանաւորաց ձեռնադրութեան կանոն»-ի մեջ  
 ընթերցողների և կիսասարկավազների կար-  
 քը կազմել է Լուսավորիչը, իսկ քահանա  
 օրհնելու կարգը կազմել է Ս. Սահակ, իր  
 հայրապետութիւն 21-րդ տարին, (42) «Քա-  
 հանալաթաղ»-ը Նույնպես Ս. Եփրեմից է, որ  
 Ղազար Փարպեցիին բերավ Հայաստան, իսկ  
 հետո Ս. Սահակ ավիւացրեց յոթը Ավետա-  
 րանները:

Այս ավանդութիւննց մեծ մասը անշուշտ  
 անվավեր է. այսպես օրինակ՝ (14) Խորե-  
 նացու «Մերմնօրհնէք»-ը, (16), (35) և (38)  
 Լուսավորչին ընծայված մասերը և վերջա-  
 պես (42) «Քահանալաթաղ»-ը, որ Փարպեցիին

է բերել, իսկ հետո Ս. Սահակ ավիւացրել է  
 7 Ավետարանները, մինչդեռ գիտենք, որ  
 Փարպեցու դարձած ժամանակը Սահակ  
 վախճանված էր արդեն: Մյուսների մեջ էլ  
 դեռ անվավեր բաներ շատ կան. բայց հա-  
 մենայն դեպս, եթե նշանակված հեղինակ-  
 ներինը չեն, Ս. Մեսրոպինը ընամ չեն կարող  
 լինել: Հետին պիտի լինեն նաև (44) «Կանոն  
 ձեռնադրութեան կաթողիկոսաց» և (45) «Կա-  
 նոն օծման թագաւորաց», քանի որ Մեսրոպի  
 օրով արդեն թագավորութիւնը շնչվելով  
 կարիք չպիտի զգացվեր «Թագաւորօրհնէք»  
 կազմելու կամ Ս. Սահակ տակավին կեն-  
 դանի լինելով՝ Մեսրոպ չպիտի համարձակ-  
 վեր «Կաթողիկոսօրհնէք» պատրաստելու:  
 (40) «Կանոն ծայրագոյն իշխանութեան»  
 նույնպես շատ հետին պետք է լինի, որովհետև  
 ծայրագոյն իշխանութիւն կոչումն արդեն  
 հետին է. այս կանոնը պետք է համարել  
 իրեն շարունակութիւն (39) «Մասնաւոր իշ-  
 խանութեան կանոն»-ին, և հետևաբար ձեւած  
 Գրիգոր Տաթևացու ավելի հետո, նմանա-  
 պես (2), (11), (12), (13), (19), (20), (23),  
 (24) շատ հասարակ բաներ լինելով, ըստ  
 ինքյան կրում են հետնութիւն դրոշմը և չեն  
 կարող Մեսրոպի գործը լինել: Անվայել է  
 դրանք Մեսրոպին վերագրել: Մնացյալներից  
 (3) պետք է կցել (4) «Կուսի պսակ»-ին, որով-  
 հետև անկարելի է ենթադրել պսակադրու-  
 թիւն առանց նշանադրութեան, (29) «Շարա-  
 կանք Հանդստեան» լուսննալով ընամ ոսկե-  
 դարչան լեզու, չեն կարող լինել ո՛չ Մեսրո-  
 պից և ո՛չ էլ Ոսկեդարի որևէ հեղինակից,  
 (30) «Անեսարանք բժշկութեան» Ավետարա-  
 նից հանված գլուխներ են և չեն կարող լինել  
 ո՛չ մի նորութիւն, ըստ ինքյան իրավունք  
 լուսնն առանձին կանոն կազմելու վերջա-  
 պես թվում է, թե (43) «Կանոն օրհնութեան  
 Ս. Միլոնի» Մեսրոպի ձեռնհասութիւնից  
 բարձր էր, ուստի պետք է որ ավելի հետո  
 նստող հայրապետներից մեկի աշխատու-  
 թիւնը լինի: Նույն պատճառաբանութիւնով  
 կարող ենք մերժել նաև (41) «Եպիսկոպո-  
 սական ձեռնադրութեան կանոն»-ը:

Եթե բոլոր այս նշանակված կանոնները  
 դուրս հանենք, կմնան միայն 5, 6, 7, 21,  
 22, 25, 26 և 28 կանոնները, որոնք կարող  
 ենք հակառակ պարագային Ս. Մեսրոպիին  
 ենթադրել:

Բայց կարելի՞ էր միթե այսպիսի փոքր աշ-  
 խատութիւն համար ամբողջ Մաշտոցի  
 կազմութիւնը Ս. Մեսրոպինը ընծայել: Իհար-  
 կե ոչ: Այն անձը, որ Մաշտոցի հեղինակ  
 կամ խմբագիր տիտղոսն է կրում, եթե նրա  
 մեծագույն մասի հեղինակը չէ, պետք է որ  
 գոնե հավաքած, դասավորած և վերջին  
 ձեռքից անցկացրած լինի այն կանոնները,  
 որոնք իրենից առաջ գոյութիւն ունեին

իրրն աշխատութիւն զանազան հեղինակներին Այսպիսի մի անձնավորութիւն քաղաքական ուշ ժամանակ ապրած պիտի լինի, այսինքն այնպիսի մի ժամանակ, երբ Ս. Սահակ, Հովհան Մանդակունի, Ղազար Փարպեցի, Կորյուն, Խորենացի և այլն, որոնք Մաշտոցի զանազան կանոններին հեղինակ են համարվում, շատոնց արդեն վախճանված էին: Արանից հետևում է, թե Մեսրոպ չի կարող Մաշտոցի խմբագիրը լինել, բայց Մաշտոց կաթողիկոս, որ հիշատակված բոլոր հեղինակներից հետո է, ամենայն հրավամբ կարող է խմբագրի պայմանները լրացնել, ԾԹ նարեկացին և Տաթևացին էլ ավելի հետո են քան Մաշտոց կաթողիկոսը, իրենց գրածներն էլ հետին հավելվածներ են Մաշտոցի մեջ, որոնք մնացյալի ամբողջութիւնը բնավ չեն խանգարում:

Մեսրոպի հեղինակ լինելու դեմ իրրն վերջին ապացույց կարելի է հիշել մանավանդ Մաշտոցի լեզուն: Մաշտոցի բոլոր կանոններն էլ պարունակում են վեց տեսակ բնթերցվածքներ, այն է 1. Սաղմոսներ, 2. Շարականներ, 3. Քարոզ, 4. Աղոթք, 5. Ավետարան, 6. Ընթերցվածք (առհասարակ ժարգարեութիւններից և Առաքելական թրդթերից): Այս վեց մասերը զանազան շարքով և փոխ առ փոխ հաջորդում են իրար: Արանից երեքը (Սաղմոսներ, Ավետարաններ և Ընթերցվածք) բոլոր քաղված են Ս. Գրքից, ուստի բուն Մաշտոցից մնում են աղոթքները, քարոզներն ու շարականները, որոնք բոլորն էլ, առանց բացառութիւն, ունեն հետոսկեղարյան լեզու: Նրանց համար, որ դիտեն խտրել ոսկեղարյան հայերենը հետոսկեղարյան հայերենից, այս հանգամանքը րավական է հաստատելու համար, թե Մաշտոցը չի կարող երբք Ս. Մեսրոպի գործը լինել:

§ 4

Միսարանից հետո գալիս է Շարականը, որից «Ապաշխարութեան» կոչված շարականները ավանդութիւնամբ Մեսրոպին են ընծայվում: Այս շարականները սկսվում են Մեծ Պահոց առաջին օրից և գնում են մինչև «Կանոն վեցերորդ կիրակէին», առանց հաշվելու Ղազարու հարութիւն և Ավագ շարաթու շարականները, որոնք մեծագույն մասամբ տրվում են Սահակին: Մեսրոպին ընծայված այս մասը բռնում է 1861. թվականին էջմիածնում տպված Շարականի 117—224 էջերը, այն է 107 երես, իսկ հետը հաշվելով նաև Սահակին ընծայված մասը, այն է մինչև Ջատիկ, ընդամենը 162 երես (էջ 117—279):

Ամենահին վկայութիւնները, որ կարող ենք գտնել մեր մատենագրութիւն մեջ ի

հաստատութիւն հիշյալ ավանդութիւն, են նախ բուն իսկ շարականների հորինման «Օրհնութիւնարեք» կոչված ցուցակները և իրկորդը՝ Կարապետ Սասնեցին: Արանից առաջինները հետևյալ լակոնական տեղեկութիւններն են տալիս մեզ. «Ջապաշխարութեան հարցներն և զտէրյերկնցներն Մեսրապ վարդապետն ասաց» (ձեռագիր էջմիածնի Կարինյան № 1588, էջ 221բ, Շարական ԺԳ դարից):— «նախ մեծն Մեսրոպ զկարգն ապաշխարութեան և Սուրբն Սահակ զԱսոց շարթուն» (Կարինյան № 1468, «Գր. Տաթևացույ Մեկնութիւն եկեղ. աղօթից», էջ 37բ և Կարինյան № 851, Աստուածաշունչ, էջ 300ա):— «Ջապաշխարութեանն և Ղազարուն, զԱւագ շարթուն Մեսրոպ վարդապետն է ոգեկալ» (Գևորգյան № 704, «Քարոզգիրք Յովհաննու Երզնկացույ», էջ 31ա):— Վիեննայի Մխիթարյանց № 209 ձեռագիր Շարականում (գրված Խալատուրի ձեռքով 1312 թվականին), էջ 23բ, ասվում է «Կանովն Ապաշխարութեան», լուսանցքում՝ Մեսրոպ վարդապետի ասացեալ» (տե՛ս Տաշյան Յուցակ, էջ 523բ):— Արանց հակառակ Սարգիս երեց՝ գրիչ Շարականի՝ «Ապաշխարութեան կարգ»-ից Մեսրոպին է ընծայում միայն շարք-երը և «Տէր յերկնից»-ները, իսկ «Ողորմէք»-ը թե՛նի վարդապետին՝ ԺԲ դարից (տե՛ս Սահակ վարդապետ Ամատունի, «Պարականոն շարականներ», էջ 81): Այսպես էլ Ավետիքյան, «Բարդատրութիւն Շարականաց», Վենետիկ, 1814, էջ 156, ասում է, թե «Ջկարդ շարականաց Ապաշխարութեան բստ ութ ձայնից ասեն արարեալ Ս. Մեսրոպայ... օրինակ ինչ՝ Շնորհալույն ներսէսի ընծայի զերիս ձայնս»:

Կարապետ Սասնեցին, որ նույնպես ԺԲ—ԺԳ դարի հեղինակ է, Ապաշխարութիւն շարականների հորինման համար մի քիչ ավելի մանրամասն է՝ համեմատութիւնամբ առաջիններին: Նա պատմում է, թե այս շարականները գրեց Մեսրոպ՝ Ասորիքից վերադարձին, Բալուի քարայրում ճգնած ժամանակ, Մեծ պահոց յոթը շարաթներում: «Կրկին նորողըր զպահան և զաղօթսն, բնթանալով զառ ի վեր ընդ ափունս Եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի զղեակն Պալուսեաց և անդ զկայ առնոյր ի փոքրագոյն այրի յաւուրս քառասնորդացն. և զնթն ութնեակսն անսուաղ անցուցանէր զտիւ և զգիշեր, երգելով զերգս երից մականցն, և շարաբան եղանակ ապաշխարութեան՝ բստ թուոյ աւուրց պահոցն, զոր ընկալիալ երգէ եկեղեցի սուրբ» (Սասնեցի, էջ 43):

Տեսնում ենք, որ վերի տեղեկութիւնները իրար հետ համաձայն չեն. ոմանք Մեսրո-

պին եւ վերագրում Մեծ պահոց ամբողջ 7 շաբաթվա շարականները, ուրեմն նաև Ղազարու հարության և Ավագ շաբաթվա շարականները. այսպես է նաև Սասնեցիին (տղևթն եւթնեակսն): Բայց ուրիշներ վերջիններ տալիս եւ Սահակին, Մեսրոպին պահելով միայն 6 շաբաթվա շարականները: Ուրիշ հեղինակներ էլ նույնիսկ 6 շաբաթվա շարականներից շատերը վերագրում են տարրեր հեղինակներին: Դժբախտաբար շունեհեք Շարականի քննական պատմությունը, այն զանազան կարծիքները, նրանց հեղինակները և ունեցած արժանիքը ցույց տալու համար, էլքմիածնի միաբան հայտնի շարականագետ Սահակ վարդապետ Ամատունին, որ ըստ կարելիության հավաքել էր շարականների մասին գտնված բոլոր ավանդական տեղեկությունները, տվել էր ինձ հետևյալ տեղակը, ուր տեսնվում է, թե ամբողջ Մեծ պահոց բնթացքում երգված շարականներից ո՛րը ո՛ր հեղինակին է ընծայված.

- \*1. Շարականը առաջին շաբաթու—Որ հայիս քաղցրութեամբ.— Մեսրոպ.
- 2. Շարական Ս. Թէղորոսի—Որ ընտրեցեր ի սկզբանէ.—?
- 3. Կանոն Բ կիրակէին Աղուհացից—Որ գորչն սրբութեան պահոց.— Շնորհալի:
- \*4. Կանոն Բ կիրակէին Աղուհացից—Ձանուն քո Քրիստոս, օրհնեմք.— Մեսրոպ:
- 5. Շարական Ս. Կիրղի Երուսաղեմացոյ— Մանկունք նոր Սիոնի.—?
- 6. Կանոն Գ կիրակէին—Օրհնեմք գթեզ, անսկիզբն Հայր.— Շնորհալի.
- \*7. Կանոն Գ կիրակէին—Օրհնեմք, Տէր Աստուած հարցն մերոց.— Մեսրոպ.
- \*8. Կանոն Գ կիրակէին—Հարցն մերոց օրհնեմք ես, Տէր.— Մեսրոպ.
- 9. Կանոն Դ կիրակէին—Որ արարեր զօրութեամբ.— Շնորհալի.
- \*10. Կանոն Դ կիրակէին—Փառաւորեալ անուն քո յաւիտեան.— Մեսրոպ.
- \*11. Կանոն Դ կիրակէին—Սուրբ Աստուած, Հայր անսկիզբն.— Մեսրոպ.
- 12. Կանոն սրբոց քառասնից մանկանց—Այսօր ընդ անմարմնոցն.— Անանիա Շիրակացի և ներսես Շնորհալի փոխ առ փոխ.
- 13. Կանոն Ե կիրակէին—Որ պատուիրան ճշմարտութեան.— Շնորհալի.
- \*14. Կանոն Ե կիրակէին—Հարցն մերոց Աստուած, որ ապրեցուցեր.— Մեսրոպ.
- 15. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի—Այսօր զուարճացեալ ցնծալ.— Յովհ. Երզնկացի.

- 16. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի—Լեռինք ամենայն, այսօր ցնծացէք.— Յովհ. Երզնկացի.
- 17. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի—Որ ի Հօրէ առաքեալ արեգակն.—?
- 18. Կանոն Զ կիրակէին—Որ զխորհուրդ քո զայստեանդ.— Շնորհալի.
- \*19. Կանոն Զ կիրակէին—Աստուած հարցն մերոց, ողորմեալ.— Մեսրոպ.
- \*20. Կանոն Զ կիրակէին—Օրհնեմք Տէր Աստուած հարցն մերոց.— Մեսրոպ.
- 21. Կանոն յարութեան Ղազարու—Այսօր զոյով ի Բեթանիա.— Ս. Սահակ.
- 22. Կանոն Մաղկազարդի կիրակէին—Որ վերօրհնեալ յաթոս.— Ս. Սահակ և ն. Շնորհալի.
- 23. Կանոն Մաղկազարդի կիրակէին—Թագաւոր զոյով քո յաշխարհ.— Ս. Սահակ.
- 24. Կանոն Աւագ երկուշաբաթի—Անեղն ի Հօրէ ձնեալ որդի.— Ս. Սահակ և ն. Շնորհալի.
- 25. Կանոն Աւագ երեքշաբաթին—Իմաստուն կուսանքն պատրաստեալ.— Ս. Սահակ.
- 26. Կանոն Աւագ չորեքշաբաթին—Որ յաթոս փառաց բազմեալ.— Ս. Սահակ.
- 27. Կանոն Աւագ հինգշաբաթին—Վերածողն երկնից մշտնջենաւոր.— Ս. Սահակ.
- 28. Կանոն Աւագ ուրբաթուն—Այսօր ի կատարումն աստուածային.— Շնորհալի.
- 29. Կանոն Աւագ ուրբաթուն—Արծաթսիրութեամբն մոլեալ.— Ս. Սահակ.
- 30. Կանոն Աւագ ուրբաթուն—Այսօր անճառ.— Շնորհալի.
- 31. Կանոն Աւագ ուրբաթուն—Նորոգող տիեզերաց.— ն. Շնորհալի.
- 32. Կանոն Աւագ շաբաթուն—Պարզևատուն ամենեցուն.— Ս. Սահակ և ն. Շնորհալի.
- 33. Կանոն Աւագ շաբաթուն—Յարեալ Քրիստոս ի մեռելոց.— Անանիա Շիրակացի: Ուրեմն ըստ այս ցուցակի, ավանդությունը Մեսրոպին է վերագրում ինչ շարական, այն է 1, 4, 7, 8, 10, 11, 14, 19 և 20 թվերը (ամեն մի շաբաթվա համար մի կամ երկու): Եթե քննենք այս շարականները լեզվական տեսակետով, ոչ-ուկեղարյան նշաններ շատ կգտնենք: Ահա մի հասարակ ցանկ այդպիսի բառերի.

անխմանալի 119.  
 աստուածարանելով 124, 187.  
 անբաժանելի 125, 145, 147, 219.  
 ամենարաական 146.  
 անքննելի 148.  
 անտանելի 155.  
 անյաղթելի 167.  
 ամենասուրբ 167, 219.

անբաւելի 167.  
ամենակարող 172.  
անհասանելի 193, 220.  
անեղ 194, 220.  
անկիզանող 194.  
անսասանելի 196.  
աններելի 213.  
ամենամեղ 223.  
զուով 147, 170, 189.  
զոհարանել 132, 135.  
երեքսրբենի 191.  
երկնային 158.  
երրեակ 190.  
էակ 155.  
էակից 170, 175, 215.  
գի վերայ քրորէիցն 215.  
կենցաղ 132, 171.  
համուզոյից 119.  
հրայացուցանել 119.  
հրափորձութեամբ 124.  
համածայնեալ 125, 155.  
համարնակից 215.  
հրեշտակային 187.  
հրաշալի 154, 169, 193.  
պարագրել 155.  
սպասաւորել 192.  
վերածագող 191.  
վերատաքել 178.  
վերերգել 157.  
վերադուլել 155.  
փառարանի 118.  
փառարանել 122, 124, 165, 191, 218, 219.  
փառարանութիւն 191.  
փառակից 170, 171, 175, 218.  
փառատրութիւն 148.  
փոխարկել 154, 155.  
օրհնարան 121, 135, 154, 155, 190, 193.  
Շատ բանուկ է հատկապես բարեհիշ բար, որ դրեթե ամեն երեսում պատահում է և այն էլ մի-երկու անգամ:  
Թե այդ բաղմամբի վարականները, որոնք համախմբված են Մեծ պահի օրերի թվով կանոնների մեջ, իսկապես մեր առաջին թարգմանիչն է հորինել, դրա մասին հավաստի ոչինչ չգիտենք. «Շարականների հեղինակների գրական գործերին քաջածանոթ գրիչները Ապաշխարութեան շարականները միաձայն ընծայում են Մեսրոպ թարգմանիչին... Իսկ չգիտեմ ինչ պատմական ազդուրների կամ ցուցումների վրա հիմնվելով, մեր ժէ շարականի գրիչ Սարգիս երեցը Ապաշխարութեան կարգից թարգմանիչն է ընծայում միայն «Հարց»-երը և «Տէր յերկնից»-ները, իսկ «Ողորմէք»-ը՝ Բենիկ վարդապետին, որ ապրեց ժԹ գարում. «ՉԱպաշխարութեան Հարցերն և ղՏէր յերկնիցներն

Մեսրապ վարդապետն ասաց. զՈղորմէք Ապաշխ [արութեան] Բենիկ վարդապետն ասաց». թղ. 223բ (Սահակ վարդապետ Ամատունի, «Ղին և նոր պարականոն շարականներ», էջ 91):

Վերևում գրածից պարզ երևում է, որ հետագա դարերի ավանդութիւնները Ապաշխարութեան կարգի շարականների հեղինակի մասին տատանվում են նույնիսկ եթե այդ կարգի շարականները միաձայն Ս. Մեսրոպին վերադրված լինեին, մենք չէինք կարող ընդունել ավանդութեան պատմական ճշմարտութիւնը, որովհետև Ս. Մարի առաջին երեսնամյակում կարելի չէ զննել հետագա դարերի այն սովորութիւնը, որով ամբողջ կանոններ էին գրում, կանոնի բոլոր սարքով, կանոնն առաջ է եկել է դարի վերջերում. ուստի մի թուրիմացութիւն է միայն ասել, թե «շարականներ գրելու կանոններին ծանոթ մի անձն՝ որպիսին Մեսրոպն էր, չէր կարող գրել Հարցերը, Տէր յերկնիցները և թողնել Ողորմէք». այսինքն կանոնի մի մասը գրողը անպատճառ և մյուսը պիտի գրեր Ս. Մեսրոպի ժամանակ հենց այդ պահանջը չկար, ինչպես չկար նաև այն պահանջը, որ Ապաշխարութեան կանոնները լինեին Մեծ պահի օրերի թվով: Ուստի եթե Ս. Մեսրոպը հեղինակ է Ապաշխարութեան շարականների, նա առանձին երգեր միայն հորինած պիտի լինի և ոչ մի ամբողջական կանոն, և ավելի պակաս՝ մեծ թվով կանոններ: Կնշանակի մի պատմական հիմունք ունեն այն գրիչները, որոնք Ապաշխարութեան բոլոր կարգը միայն Ս. Մեսրոպին չեն վերագրում:

Ապաշխարութեան շարականներից դուրս կա նաև Քառասուն մանկանց շարականը, որ գրիչներից մեկը (անունը անհայտ) ընծայում է Մեսրոպին, ասելով. «Կանոնվ Սրբոց Քառասնից. ասաղեալ Մեսրոպայ Տարոնեցույն. Այսօր ընդ անմարմնոցն զասպարհն»: Այս տեղեկութիւնը տալիս է մեզ շարականագետ Սահակ Ամատունին, իր «Ղին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ» աշխատութեան մեջ (Վաղարշապատ, 1911), էջ 66: Բայց միևնույն ժամանակ հեղինակը, գտնելով որ այդ շարականների մեջ կան Ս. Մարիի ոչ հատուկ անսովոր բարդ բառեր (ինչպես լուսապսակ, քրիստոսակիք, սառնապատ, եղկացուցանել, վերանորոգել, նախաբարտել, բոցաճաճանչ, վերակարգալ, վերերգել, ճոռագալթարձակ, հատապետ և այլն), հրաժարվում է Մեսրոպին հեղինակ ճանաչելուց, և նույն շարականը համարում է Անանիա Շիրակացու կամ Ստե-

փանոս Սեբաստացու գործը, իսկ Ավետիք-  
յան, «Քաջատրուֆին շարականաց», էջ  
181, քսո կիրակոսի համարում է Շնորհա-  
լու գործը, բայց կասկածում է և զգում Սի-  
սիանոսի ազդեցությունը:

Մեսրոպին վերագրված շարականների  
հարցը փակելու համար, մեջ ենք բերում  
այստեղ Մ. Աբեղյանի («Արարատ», 1912,  
էջ 722, 724) պատմական ուսումնասիրու-  
թյունից մի քանի հատվածներ.— Գ և Ե դա-  
րերում դեռ լկային շարականներ. կային  
միայն փոքրիկ հոգևոր երգեր, Ութերորդ  
դարում հունաց մեջ կազմվեց կանոնը, այ-  
սինքն յուրաքանչյուր տոնի համար հնար-  
վեց ինը երգերի մի շարք՝ հավաքելով կա՛մ  
հեներից և կա՛մ նորերն ստեղծելով: Այս 9  
երգերի շարքը կոչվեց շարական: Այսպես  
ուրեմն շարականը ինքնին չի կարող ութ-  
երորդ դարից առաջ գոյություն ունենալ:  
Օրինակ՝ Մահակ Պարթևին են վերագրում  
Ավագ շարաֆի կանոնները, իսկ Մեսրոպին՝  
Ապաշխարության կարգը: Բայց այդ կա-  
նոններից ո՛չ մեկը չի կարող ամբողջապես  
մի մարդու ասածը լինել: Նրանց երգերի  
մեջ մեծ տարբերություն կա թե՛ ձևի և թե՛  
բանաստեղծական ըմբռնման տեսակետից:  
Բայց որ գլխավորն է՝ հունաց մեջ անգամ  
կանոնները պատկանում են եկեղեցական  
բանաստեղծության զարգացման ավելի ուշ  
շրջանի: Նշանակում է, թե այդ կանոնների  
բազմաթիվ շարականները հետզհետե են  
հորինված և հետագայում, երբ կազմվել են  
կանոնները, վերագրվել են մի անձի՝ Ս. Սա-  
հակին կամ Ս. Մեսրոպին: Ե դարում, երբ  
եկեղեցու պաշտամունքի լիզուն հայանում  
էր և Ս. Գրքի սաղմոսներն ու օրհնություն-  
ները հայերեն էին թարգմանվում, անհա-  
վանական չէ, որ մի քանի հոգևոր երգեր էլ  
թարգմանվեին և կամ նրանց նմանողությամբ  
նորերը շինվեին: Բայց թե այդ երգերը կա՛ն  
և մանավանդ թե որո՛ւնք են, դեռ կարելի չէ  
իմանալ: «Մեր հոգևոր երգի սկիզբը հինգե-  
րորդ դարում դնելով հանդերձ՝ անհավա-  
նական է կարծել, թե այդ դարում մեծ օրհ-  
ներգություններ գրված լինեն, հունաց մեջ  
անգամ այդպիսի երգերը ծաղկում են ա-  
ռանձնապես վեցերորդ և յոթերորդ դարե-  
րում (էջ 724):

Մենք որոնեցինք, թե ո՞ր էջերում ավելի  
հազվադեպ են ոչ-սակեղարյան ձևերը և հե-  
տևաբար ո՛ւր կարելի է ենթադրել նախավոր  
հարազատադույն լիզու Այսպես, գտանք,  
օրինակ՝ էջ 132—139, 144—153, 156—158,  
164—166, 216—217, 221—222, Համեմա-  
տարար լավ լիզվի ահա երկու հատված.

Այիք յանցանաց զիս ալեկոծեցե՛լ,  
Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեց.  
Արդ զի՛նչ արարից մեղուցեալ անձամբս,  
Որ շեմ ալբիլոց յանագին հռոյն:  
Մեղայի քեզ, Քրիստոս, Որդի Աստուծոյ,  
Շնորհեա գթողութիւն բազում յանցանաց  
իմոց: (էջ 218:)

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ,  
Հա՛յր երկնատ,  
Օգնեա՛ ինձ ի նեղութեանս, որ մեղոսս եմ  
մեռեալ, օգնեա՛ ինձ:  
Վիրատեցեայս ես յաներևայր քշնամույն,  
բժիշկ երիանդաց.  
Բժշկեա՛ զիմ զգնիանդութիւնս, որ մեղոսս  
եմ մեռեալ:

Մուտեցայ ես քոպէս գոշխար կոռուսեալ,  
խնարդ գերելոց,  
Խնդրեա՛ զիս գմուտեալս, որ մեղոսս եմ  
մեռեալ: (էջ 220):

Իրաց արդի վիճակում շարականները չեն  
կարող Մեսրոպինը համարվել:

§ 5

Հինգերորդ աշխատությունը, որ Մեսրոպին  
է ընծայվում, է Ս. Ներսեսի պատմությունը,  
որի ամբողջական խորագիրն է «Յաղագս  
զարմից Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւոր-  
չի և Պատմութիւն Սրբոյն Ներսեսի Հայոց  
Հայրապետի»: Այս աշխատությունը հրա-  
տարակված է վերջին անգամ Վենետիկ,  
1883, «Սուփիքքա-ի Զ հատորով, ուր բռնում  
է 9—124 փոքրադիր երեսները: Գրքի վեր-  
ջում կա ճշդարձակ հիշատակարան, ուր ո-  
րոշակի հայտնված են գրքի հորինման պա-  
րտոաներու: Հրատարակիչները այս հիշա-  
տակարանը հանելով բուն գրքի մարմնից,  
դրել են էջ 138—139 ծանոթության մեջ, և  
այն էլ հասպատմամբ: Ահավասիկ այդ հիշա-  
տակարանը, ինչպես տպված կա այստեղ  
«Ի ՆժԶ(=967) թուականիս Հայոց և ի վերա-  
դիտողութեանն Տեառն Վահանայ Հայոց կա-  
թողիկոսի, և յամս Աշոտոյ Բագրատու-  
նոյ Հայոց թագաւորի ի տանէն Շիրա-  
կայ, ես Մեսրոպյ Նուաստ քահանայ ի  
Վայոց ձորոյ ի գեղչէ Հողոցմանց, ուս-  
տի Յովսէփ էր հրանելի նահատակն  
յաւուրս Սրբոյն Վարդանայ... մեծ ցան-  
կությամբ ծաղկաքաղ արարի զգիրքս զայս  
ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց-  
յաղթութիւն և զվատթարութիւն թագաւո-

1. Բայց հենց այս շարականի և «Մով կենցաղոյս»-ի  
համար տեսն՝ք, թե ի՛նչ է ասում շարականագետ  
(ո՛վ) 777, «Արարատ», 1912, էջ 1015. «Այդ երգերը  
պարզագուստ շարականների զարգացման լետին զարե-  
րի են. այդ բանին վկայում է և դրանց յափրա:

րացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսքանչելիս հայրապետաց տոհմից Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ Սրբոյն Ներսեսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արքայական ազգին Մամիկոնէից: ... Եւ արդ զայս հանեալ յԱրեւելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց, և ետու որդիացելոյ իմոյ սուրբ աւագանին ծնընդեամբն, Վահանայ Մամիկոնենոյ, ի գիւղն որ կոչի Վարժիս:

Ավելի պարզ ու բացահայտ բան քան այս հիշատակարանը՝ չգիտեմ թե ի՞նչ կառող է լինելու հեղինակը ասում է, թե ինքը Մեսրոպ երեցն է Հոգոցմանց զուղից, որ ժ դարում ծաղկաքաղ է արել Արբահամ Խոստովանողի Մնացորդաց պատմութիւնը: Այս բացարձակ հայտարարութեան դեմ, հրատարակիչները, էջ 137, ծանոթութեան մեջ ասում են, թե Ս. Ներսեսի վարքի նախկին հեղինակը Ս. Մեսրոպ Մաշտոցն է, կամ նրա աշակերտներից մեկը և թե Ս. Մեսրոպ գրել էր Ս. Ներսեսի վերջին աղոթքն ու զուշակութիւնները: «Կամ սա (Ս. Մեսրոպ) ինքնին գրեաց նախ զվարս մեծի քահանայապետին, և կամ պատմեաց մանրամասն, և մի ոմն յաշակերտաց նորա ելելի ի գիր, բայց հաւանազույն է թէ ինքնին զլեւտին բանս Սրբոյն նշանակեալ էր գրով, զազօթան ասեմ և զզուշակութիւնսն, որք ապա փոխեցան ի գիր», նույն գաղափարը հայտնած էր տարիներ առաջ նաև Հ. Մ. Ավգերյան, «Եկեղեցատար վարք սրբոց», Ե, 1813, էջ 282: Բայց այսպիսի մի ենթադրութիւն անհիւս համար Վենետիկցի շուրջն ուրիշ ապացույց, եթե ոչ Ս. Մեսրոպի անվան հիշատակութիւնը Ս. Ներսեսի պատմութեան մեջ, էջ 83 և 110: Զարբհանելիան, որ առհասարակ շատ դյուրահավան հեղինակ է, որ Հայոց դպրութեան պատմութեան մեջ մասամբ ընդունում է այս ենթադրութիւնը, եթե որեւէ զորութիւն ունենար, ճիշտ հակառակը պիտի ապացուցեր: Մենք վերը (զլուխ առաջին) տեսանք, թե Մեսրոպի քարտուղարութիւնը Ներսեսի մոտ՝ կեղծիք է, միայն հետնաբար ձևացած. ուստի կեղծիք է նաև Ներսեսի մահվան ժամանակ ներկայ լինելով վերջին աղոթքները գրի առնելը: Բուղանդ, որ առհասարակ ամեն բան մանրամասն պատմում է, Ս. Ներսեսի վերջին րոպեներին ներկայ է դնում (Ե իդ) Փավստոս եպիսկոպոսին, Տրդատ զխաւոր պաշտոնեից, Մուշեղ սպարապետին, Հայր մարդպետին, եկեղեցականներ ու նախարարներ, առանց հիշելու Մեսրոպի անունը, որ անկարելի է թե չհիշեր, եթե իրոք ներկայ լիներ: Գմուռնանք նաև այս պարագան, որ եթե Ս. Մեսրոպ որեւէ մասնակցութիւն

ունեցած լիներ հիշյալ աշխատութեան մեջ, անպատճառ պիտի հիշվեր Մեսրոպ երեցի հիշատակարանում: Վերջապես այսպիսի մի երևելի բան Կորյուն կամ Մեսրոպի կենսագիրներից մեկը անշուշտ, գոնե ակնարկութեամբ հիշելու էր:

Թե Ս. Ներսեսի պատմութիւնը չի կարող Մեսրոպի աշխատութիւնը լինել՝ կա այս մասին մի ուրիշ զվարճալի ապացույց էլ:

Ինչպես Թորոսյան («Բազմավիպ», 1932, էջ 263) ցույց է տվել (թեև բուրբուխ ուրիշ նպատակով), Ս. Ներսեսի պատմութեան մեջ ինչպես որ կան զանազան հատվածներ Բուզանդից փոխ առած, կա նույնպես մի հատված, որ փոխ է առնված Կորյունի գրքից:

Այս հատվածը հետևյալն է.

Կորիւն, էջ 14—15

Պատմութիւն Ներսէսի, էջ 83

Ամենայն կրթութեամբ հոգևորացն զանձն տունեալ... Եւ զանձն տունեալ, բարգում անգամ զհրեշտակական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յոտնաւոր տքրթեան՝ ի թոթափել ական վճարէր. և զայն ամենայն առնէր ոչ սակավ ժամանակս:

Ամենայն կրթութեամբ հոգևոր իրաց զանձն տունեալ, բարգում և անհեշտական իրաց և անհանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յոտնաւոր տքրթեամբ ի թոթափել ական վճարէր, ոչ սակավ ժամանակս, այլ յոյլովս:

Կորյուն իր գիրքը գրել է ամենաշուտը 443 թվականին. Մեսրոպ մեռել է 439 թվականի սկիզբը. ինչպե՞ս կուզեք, որ Մեսրոպ իր մահվանից հինգ տարի հետո գրված մի գրքից բանագողութիւններ աներ:

§ 6

Վեցերորդ աշխատութիւնը, որ Մեսրոպին է ընծայվում, այլևայլ թղթերի մի հավաքածու է. այս մասին րոտ բավականին տեղեկութիւն է տալիս մեզ Կորյուն, էջ 21 և Փոքր Կորյուն, էջ 19: Ահա մասիկ հիշյալ հատվածները. «Այս յետ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրադոյն վարդապետութեամբ՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիրապատումս, շնորհադիրս, բազմագիմիս ի յուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, յի ամենայն ճաշակօք աւետարանական հատուոյն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութեանական յուսոյն առ ի հանդերձեալսն՝ յերիւրեալ կազմեալ, զի հեշտրնկալք և դիրահասոյցք ախմարագունիցն, և մարմնական իրօք զրադելոյն լինիցին, առ ի սթափել և զարթուցանել և հաստահիմ առ ի խոստացեալ աւետիսն քաջայերել» (Կո-



րապես շեշտում է մեծելոց հարուստի ճանաչումը: Վարդապետություն մեջ էլ մեծելոց հարուստի ճանաչումը մասնավոր տեղ է գրավում իր ընդարձակությամբ, բազմապիսի բանաստեղծական փոփոխություններով և այլն:

դ. Շահապիվանի ժողովի կանոնների նախերգանքում Մեսրոպի համար սավում է «հոգեկից և հոգեծիր ճշմարտասէր վարդապետին Մեսրոպայ, որ լուսաւորեաց զերկիրն Հայոց վարդապետութեամբ իւրովս» (հրտ. Ղուեճյան, էջ 57): Կորյուն էլ իր աշխատության սկիզբը ասում է. «և վասն նորինս զլուսաւոր վարդապետութեան»: շեղատառ տպված բառերը կարող են նույն վարդապետությունը ակնարկել:

ե. Պրոկղ և Ակակ հայրապետներին գրված պատասխանը, որ Մեսրոպի աշխատությունն է, վարդապետության ինչ-ինչ մասերի համառոտությունը լինելով, բանավոր է ենթադրել, թե Մեսրոպ իր աշխատությունը ինքն իսկ համառոտել է:

զ) Եզնիկ երեց, որ ըստ Չ. Սարգիսյանի Եզնիկ Կողբացին է, իր համառոտ գրության մեջ Մեսրոպի համար խոսելով, ասում է. «եւ կարգք զործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով իրանելեա Տարօնացոյ, որում անուն Մասրովբ ճանաչէր»: Գրիգորի նորոգյալ զործք կարող է Մեսրոպի վարդապետությունը լինել:

Այս պատճառարանությունները դժբախտաբար բոլորովին անզոր են ապացուցանելու համար հեղինակի առաջադրությունը: Հակառակ իրեն կա այնպիսի հզոր մի փաստ, որի առջև վերի առարկությունները ոչինչ են. և այս փաստը վարդապետության լեզուն է: Առակաց գիրքը, որից մի փոքր հատված բերինք մենք իբր նմուշ, բավական է ցույց տալու, թե Մեսրոպի լեզուն պատկանում է Ե դարի առաջին դարոցին. մինչդեռ վարդապետության լեզուն, իբր ճոխ, պիտի ու շուայ լեզու, պատկանելով շրջորդ դարոցին, չի կարող գրվածքը Մեսրոպինը համարվել (Նորայր, «Կորին վարդապետ և նորին թարգմանությունը»):

Հաջորդ հատվածը, որ քաղում ենք վարդապետության սկզբից, ընթերցողը կարող է համեմատել Առակաց գրքի հետ, իսկույն տեսնելու համար երկուսի միջև եղած հսկայական վանազանությունը:

«Տէր Աստուած, որ նա միայն ինքնութեամբ, և յառաջ քան զնա շիբ ոք այլ, արարիչ ամենայնի որ երկի և որ ոչն երկի, բայց Որդին Միածին որ ի Չօրէ ծնեալ, և Նույն նորուն որ ի նորին յէութենէ՝ որով եղև աշխարհս ի սկզբանց անդ, արարեալ միասնական Երրորդութեանն միով զօրութեամբ կամացն ամենազօրաց. միախորհ, միա-

կամ, միաբուն ինքնութեամբ. և ամենայն ի նմանէ եղեալ՝ երկինք և երկիր: Արարեալ զերկինս խորանարդ հաստայարկ, և զերկիր թանձրատակ աղխեալ սեղմեալ. և զերկինս կախեալ զոչընչէ, և զերկիրս ի վերայ ոչնչի կացուցեալ. և ի նմին զանդունդս համատարածս լուսարագածս աներևոյթս անկազմս անարարս և անյարգարս, անպատրաստս ստուերամասս... Ասացեալ ի Չօրէ առ խորհրդակատարսն համագործս՝ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիւռ խաւարակուլ օրաբեր: Եւ յետ այսորիկ հաստատութիւն ջրամած սառնեղէն ծովահեթը ջրարածին. որով երևեալ ցամաքն ամենածին ծաղկարուխ տնկարեր: Եւ յետ այսորիկ ասացեալ միասնական Երրորդութեանն՝ լինել լուսաւորացող առ ի ջրեղէն խորանանման հաստատութեան ևրկնին ճառագայթածիքք, աշխարհագունդք, նշանացոյցք և զեռնոց և ջրածին կայտառաց» (Ազաթ., տպ. Թիֆլիս, 1883, էջ 153—154):

Չարմանալի է, որ Սարգիսյանի ենթադրությունը առանց այլևայլի ընդունում է նաև Ակինյան, «Ճանդես ամսօրյա», 1935, էջ 544:

Մառ («Մկրտություն Հայոց, Վրաց, Արխագաց և Ալանաց», Վաղարշապատ, 1911, էջ 97) կարծում է, թե ամբողջ Ազաթանդեղոսը Մեսրոպի գործն է: Մի այսպիսի միտք հայտնել է նաև Աղոնց («Ճանդես ամսօրյա», 1928, էջ 91), Մառ ենթադրում է մի քանի տեսակ Ազաթանդեղոս. ա) Ուղղափառ հունասեր խմբագրություն (Գ դար). բ) Քաղկեդոնական խմբագրություն (է—Ը դար), որից թարգմանված է հունարեն և սրանից էլ արարեբերը. գ) Աղզային հայկական խմբագրություն (Ը դար), որից թարգմանված է արդի հունարեն օրինակը: Առաջինը Մառ վերագրում է Մեսրոպին, հիմնվելով Եզնիկ երեցի ծանոթ վկայության վրա՝ «կարգք զործոց Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեա Տարօնացոյ, որում անուն Մասրովբ ճանաչէր»: Բայց Եզնիկ երեց «կարգք» ասելով ո՛չ թե Գրիգորի գրվածքն է հասկանում, այլ քարոզչական գործունեությունը, որ իրոք էլ նորոգեց Մեսրոպ, արժանանալով «Երկրորդ Լուսավորիչ» անվան: Համեմայն ղեպս կարելի չէ Ազաթանդեղոսը տանել է և Ը դար, որովհետև լեզուն Ե դարի է, և այն էլ շրջորդ դասից:

§ 8

Մինչդեռ Չ. Ս. Սարգիսյան Ս. Գրիգորի վարդապետությունն է համարում Մեսրոպի ճառերի հավաքածուն, հայագետն Ֆեթթևր («Ճայագիտական աշխատություններ», էջ 69—78) ուզում է ապացուցել, թե Կորյունի հիշած սույն հավաքածուն «Գաճախապա-

տունն է՝ Այս գիրքն էլ երկար ժամանակ անտեղի կերպով համարված էր Ս. Գրիգոր Լուսավորչի հեղինակությունը:

Այս մասին տեղից տվողը նույնիսկ Ագաթանգեղոսն է, որ Գրիգոր Լուսավորչի համար ասում է. «Այս յետ այսպիսի գործոց սկսեալ երանելուն Գրիգորի ճառս յաճախագոյնս, դժուարապատումս, առակս խորմացս, դիրալուրս, յարմարեալ ի զօրութենէն և ի հիւթոյ գրոց մարգարէականաց, ի ամենայն ճաշակոց կարգեալս և յարմարեալս...» և այլն: Այս խոսքից հետևորդն է Այսպես, Նարեկացին կոչումներ է անում իր «Երգ երգոց»-ի մեկնութեան մեջ (Գրիգորի Նարեկացու Մատենագրութիւնք, Կենետիկ, 1840, էջ 335 և 342) Հաճախապատումի ժԹ և Ի ճառերից (տե՛ս Հացունի, «Բազմավեպ», 1930, էջ 401):

Գրիգոր Մազիստրոս իր «Մեծ են գործք աշխատութեան մեջ (էջ 72) Լուսավորչի համար ասում է. «Զգիրսն իւր հաւատոյ Յաճախարանն որ անուանին» Եվ դեռ այսպես էլ կարծվում է մեր անքննադատ շրջաններում: Յեթթեր նախ ապացուցում է, թե այս բանը անկարելի է, որովհետև ա) Ս. Հոգու բնութեան նկատմամբ հրամանակարգ վարդապետութեան ձևն այնպես է, որ հազիվ կարող ենք ենթադրել Լուսավորչի բերնից դուրս եկած: բ) Հեղինակի լեզուն, ինչպես իր բովանդակ աստիճանց կերպը ցույց է տալիս, 381-ի Կոստանդնուպոլսի ժողովի վարդապետական որոշման ժանտեթություն է ենթադրում: գ) Ս. Գրքից բերված վկայությունները այնպես համաձայն են մեր այժմյան թարգմանությունից, որ գրություն ժամանակը լի կարող է դարձից առաջ լինել:

Սրանից հետո Յեթթեր անցնում է ապացուցել թե Հաճախապատումը գրված պիտի լինի Ե դարում և թե սրանից ավելի ուշ չի կարող լինել: Իր ապացույցներն են, նախ՝ հեղինակի այն ձգտումը, որով նա ուզում է զրադաշտականութեան հետ մաքառել: բ) Փաղկեղոնական վեճերին բուրրովին անմասն է մնում, որով ցույց է տալիս, թե 451 թվականից առաջ է գրված: գ) Արշակունյաց հարստութեան հիշատակությունը այնպիսի ձևով է, որ ենթադրում է այս հարստութեան անկումը Արտաշես Գ-ի օրով: Այսպիսով Հաճախապատումը գրված պիտի լինի Ս. Գրքի երկրորդ թարգմանության և Փաղկեղոնի ժողովի միջև եղած ժամանակամիջոցում: «Բայց ճիշտ այս ատեն կայրեր ու կգործեր

Ս. Մեսրոպ, որուն նկատմամբ կայատմե յուր կենսագիրը Կորյուն, թե քաղում թուղթս խրատականն և զգացուցիչս բնդ ամենայն գաւառս առաքէր»:

Զինքը պետք ենթուտի հեղինակ ճանչնալ այս ճառերուն»:  
Այսպես է փաստարանում Յեթթերի: Բարի ցանկությունից ավելի բան չկա այստեղ, Հաճախապատումը Մեսրոպին տալու համար:

Յեթթերի քննությունը, եթե իր ստույգ բնույթները, որոշում է միայն այն ժամանակը, երբ գրված պիտի լինի Հաճախապատումը: Բայց թե այս գրվածքը լի կարող Մեսրոպինը, ո՛չ էլ առաջին թարգմանիչներից որեէ մեկինը լինել, բավական ցույց է տալիս Հաճախապատումի լեզուն, որ այնպես հստակ կերպով զանազանվում է առաջին թարգմանիչների լեզվից: Հաճախապատումը հայտնի հունարան լեզվով չէ, ուստի իրոք լի կարող է դարում կամ ավելի հետո գրված լինել, բայց այնպես նման է երկրորդ թարգմանիչների լեզվին, մասնավորապես Ղազարի և նրա ընկերների լեզվին, որ պետք է հաստատ կերպով ընդունել, թե նրանցից մեկի աշխատությունն է:

Երկար կլինի մանրամասն ցույց տալ այն ներքին հատկությունների շարքությունը, որով օժտված պիտի լինեն ամեն Ոսկեդարյան գրվածք: Բայց ավելորդ չենք համարում նաև արտաքին հատկություններից բառական մասը նշանակել: Հաճախապատումի մեջ հարյուրներով կարելի է հաշվել ոչ-ոսկեդարյան բառեր: Ահավասիկ նրանցից մի ցուցակ (էջերը նշանակված են էջմիածնի 1894 թվականի տպագրության համաձայն).

- ա. անհպելի 11, 13.
- անփոփոխելի 13, 69.
- ամենասուրբ 14.
- անասանելի 18, 22, 33, 37, 92, 126.
- աղբիւրարար 20.
- աներկբայ 22.
- ապերախտիսն 23.
- ամենառատ 24, 30.
- անմեղկելի 24, 45.
- աւարտի 32.
- անգոյ 49.
- անբեւելի 50, 106.
- առանձնաւորութիւն 55.
- անճառելի 55, 78, 82, 94, 107, 141.
- անլիշալար 56.
- անհատ 82.
- անճառայէս 82.
- անմեկնելի 89, 107, 113.
- անըմբռնելի 97.
- անուշահոտանայ 100.
- անլիշելի 101.
- անպատմելի 113.
- անասելի 113.

1 «Ճաճախապատում»-ը թարգմանված է գերմաներեն և հրատարակված «Regensburg»-ում, քննութեամբ Յեթթերի և Հերշլի, որոնք այս գիրքը Մեսրոպի աշխատությունն են համարում:

անլսելի 113.  
անանցանելի 115.  
անզրօս 122.  
անդրդունլի 126.  
աննախարար 135.  
առիթ 140.  
բիրակերպարաննալ 8.  
բարեզործող 29.  
բարեխոնարհութիւն 41.  
բացահայտել 47, 97, 149.  
բնաւորեցան 48.  
բարեխոնութիւն 51.  
բաւականացի 68.  
բաղձալի 108.  
բարեխորհրդութիւն 124.  
զոյացուցանել 27.  
զոյացութիւն 29, 58.  
զուլով 39.  
զործարան 145.  
երևութանալ 48.  
երկաքանլիւրոց 50, 70.  
երկրայիլ 117.  
երկրպագեն 144.  
զամենայնս 39.  
զանադանութիւն 40.  
զարտուղի 101.  
զանազան 111.  
ընդունակ 44.  
ընդունարան 141.  
ժառանգորդ 42.  
իւրաքանլիւրոց 41, 44, 46, 111.  
խորհրդածութեամբ 17.  
խոհականութիւն 83.  
կենդազավարեալք 13.  
կենսագործել 15, 58, 63.  
կցորդակից 18.  
կերպութիւն 100.  
հրահանգել 19.  
հակամիտիլ 52, 80, 106.  
համանգամայն 118.  
համահամ 131.  
ճակատամարտիլ 130.  
մեղերբ 97.  
մտառութիւն 48.  
յառաջադայիլ 57, 100, 139, 141, 143.  
ի յախտեանցն 43.  
նորածնելոց 17.  
ներգործութիւն 29.  
ներգործել 33.  
ի նոյնս 39.  
նախկին 57.  
նախախնամական 90.  
նախաշավիղ 119.  
շրջապատել 126.  
ունայնարանութիւն 22.  
ողջախոհանալ 102, 104.  
պարփակիլ 56.  
պիտոյանալ 69.

պիտոյացեալ 70.  
սաղարթ 126.  
սրբապէս 190.  
վերաբերեալ 34.  
վերաբերիլ 94, 95, 144.  
վերազրել 131.  
վերաստեղծու 143, 226.  
վերափոխել 37.  
փարթամութիւն 29.  
փառարանիլ 91.  
փառարանութիւն 191.  
փառակից 144.  
փրկաւտ

քաղաքայլ 31.  
բ. Բազմաթիւ են նույնպես սեռականի հակադիր գործածութեան օրինակները, որոնք թեև անսովոր չեն Ոսկեդարում, բայց շափազանցութեամբ ներքիլ չէ. ինչպես՝ զգեցցի զանմահութեան կենդանի լուսովն, զգեցեալ զկենտրաբի զարեգականն արդարութեանն զլոյսն, որ լին է հրանութեամբ, նորա փառօք կարող է...» և այլն (էջ 8):  
գ. Հիշելու համար նաև բանասիրական պատճառարանութիւն, կարող ենք նկատել, որ Հաճախապատումի մեջ կան բազմաթիւ բանազոգութիւններ Յզնիկի գրքից՝ ահավասիկ սրանցից մի քանիսը.

Յանախապատում  
էջ 1—2

Լի կատարեալն, որ զամենայն շնու, և ինքն ոչ թերանայ և ոչ նորոգի, զի ոչ հնանայ և ոչ յնու, զի ոչ պակասի: Զի ինքն նոյն է ի իրութեան իւրում և յամբաւութեան. և շիք ուստեք եկամուտ կամ յաւելուած, յայն յանբաւ և յանսահման, և յանհաս և ի կատարեալ բարեբարութիւնն:

էջ 3

Եւ ոչ արար զարարածս անկազմն և անարգս, այլ նտ անձնիշխան և աղատ կամս... որ կոչեացն զնոսս յոչնչէն ի լինչսն և ի շոյէն ի զոյն:

Ազնիկ  
էջ 8

Եւ ինքն կայ լի և յանսպառ կենդանութեան... և ինքն ոչ թերանայ ի զարացուցիլ զարութենէն.

էջ 6

և ոչ բնութիւն հիւթարեբ ի պէտս նորա և ոչ նիւթ ինչ յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ:

էջ 24

Իսկ եթէ երբեք հիւզն անզարդ և անարդ և անկերպարան... (էջ 7) զի ածն ի շոյէն ի զոյն զշոյնս, և եցոյց յոչնչէ լինչ զլէսն:

էջ 27

Ջոր յոչնչէ և ի շգոյէ գոյացոյց. գհոգեորս և զմարմնաւորս, զշնչաւորս և զանշունչս: ... Եւ զոր արար կենդանիս և անմահս, մտաւորս և բանաւորս, որ քն գունդք հրեշտակաց և երկնաւոր դօրք, որ կարգեալ են ի պատի, և ի պաշտօն և յանդադար փառաբանութիւն ամենագօր տէրութեան:

էջ 29

Որ առ դարման և առ բժշկութիւն կագմեցան, կարգեցան ըստ ներդրութեան Աստուծոյ... է ինչ և ի սողունս իրաց ինչ ի պէտս որպէս յօժեցն ասէ զկիրայէն:

էջ 31

Ջի շուրճ ի պէտս կենդանեաց արարան յԱստուծոյ, որ արդուցանեն զերկիր և դարձեալ ապականին նեխելով և նուազեցով: Եւ հուր առ ի պէտս մեր արարաւ, որ դարմանօք վատի և սպասաւորէ մեզ և ի պակասել կերակրոյն, շիջանի և ապականի... Երկինք յուսաւորօք և երկիր կենդանեօք և բուսովք և տնկովք և ամենայն ձեռակերտօք արուեստից, որ ստեղծանեն պատկերս յարարածոց Աստուծոյ աստուածս, սուտ են և ապականին, որպէս իմաստնող է րաջայայտ:

էջ 7

Ջի ածն ի շգոյէ ի գոյ զշգոյսն, և եցոյց յոչնչնէ յինչ զչէսն... (էջ 9) զբանաւորս և զանբանաւորս, զմտաւորս և զանմտաւորս, զխօսունս և զանխօսունս, զասունս և զանասունս... (էջ 13) զբանաւորսն աներեւոյթս... զհրեշտակաց ասեմ և զհոգւոց մարդկան... (էջ 14) և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան, անդադար մատուցանեն... փառաւորեմք զկարդիշն նոցա և զյօրինիշն...

էջ 83

Նահ նովին իսկ, որ շարքն կարծիցին անմտաց, երբեք օգտակարք լինին և զերծուցիշք ի մահուանէ: Ջի՛նչ շարքան զօժ կայցէ, և ի նմանէ թիրիակէ:

էջ 16

Կամ զըւրս՝ զոր հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փորի մերում գարցուցանեմք... (էջ 15) Եւ կամ զհուր, որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կագմեաց յօրինիշն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես և յորժամ կամիցիս՝ խափուցանիցես... (էջ 10) Եւ այսպէս, շորեքին բնութիւնքն, ուստի աշխարս կագմեայ և կայ, առանձինն՝ ապականիշք են միմեանց, և խառնեալ ընդ ընկերին՝ օգտակարք և շահատրք: Եւ զի այս այսպէս է՝ ամենեցուն յայտնի է որ կամին ուսանի:

էջ 31

Արարածք են Աստուծոյ և յուսաւորք արեգակն և լուսին և աստեղք ամենայն, իւրեանց փոփոխմամբն ցուցանեն զիւրեանց սպասաւորութիւնն ըստ սահմանելոյն այլ ևս արարածոց:

էջ 31

Որպէս ձմեռն ոչ միայն զովացուցանէ, այլ և սպանանէ. և ամառն ոչ միայն ջեռուցանէ, այլ և խորշակահար առնէ. և հուր ոչ միայն ջեռուցանէ և զպէտսն լնու, այլ այրէ և ասպականէ. և ջուր ոչ միայն արբուցանէ զերկիր, այլ և ողորդէ և վնաս առնէ: Այսպէս և ամենայն դարմանքն...

էջ 33

Ջի եթէ ոչ էր ահ Տեառն ի վերայ մեր, ամենեքեան զմեզ սատակէին:

էջ 34

Ջի և զազանք ոչ եթէ բնութեամբ եղեն շարք, որպէս ընդելութեամբն ցուցանեն օժք առ թովիշսն. և առիւծ և ինձ և արարածք հնադանդին մարդկան, որպէս եղեն իմա՛ եզն) և շուն և այլ ամենայն որք ընդ լծով անկանին և շողոքորթին, և առանդնդուն զազանան, և մահ գործեն անծանօթիցն և վէրս:

էջ 11

Ջշարժունսն... արբանեակսն... զնալունսն... քանզի և նոքին իսկ իւրաբանիւր փոփոխմամբք յայտ առնեն, եթէ է ոմն՝ որ փոփոխէ գնոսա:

էջ 10

Արեգակն թէ բարի է առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է. նոյնպէս և լուսին խոնաւական բնութիւն, առանց խառնուածոյ ջերմութեան արեգական, վնասակար և ապականիչ է. և ջուրք զհոգ երկրի ողորդանեն և ապականեն... և այսպէս շորեքին բնութիւնքն...

էջ 16

Ջի թէ ոչ սաստարարչին նահանգէր զնոսա, մի մի ի նոցանէն րաւական էր զամենեսին սատակելու:

էջ 68—69

Այնչափ ինչ շար ի զազանացն բնութեամբ ոչ գոյր... զքարս իգակերպս կալեալ թովութեամբ յընտելութիւն մարդկան ածեն... և միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համրոյր և ի քծինս, մինչև պատել զսնուցանելեան, և եթէ այլ ոք ի նահուպ գայցէ, շմոռացեալ զքարս զազանութեանն՝ ի վերայ յարձակի. և նորա սաստեալ զազանին իրր շան, ցուցանէ յանսաստ գազանութեանէն:

էջ 37

Որ յունչէ ի լինելութիւն էա՞ծ և ի չգոյնէ ի գոյն:

էջ 7

Չի ա՞ծն ի չգոյնէ ի գոյն զչգոյն և ևցոյց յունչէ զլէսն:

էջ 228

Ի սատանայ ի սկզբանն ոչ թշնամի տրարաւ, այլ յանձնիշխան կամացն եղև հակառակ բարոյն: զի ըստ երբայնցուց բառիցն հակառակ թարգմանի:

էջ 52

Չի սատանայ մեր ոչ յԱստուծոյ սատանայ եղևայ գիտեմք, այլ դաստան անուն՝ վասն խոտորելոյն էա՞տ իւր անունքանգի սատանայ յերթայեցուց և յասորոց լեզուէ խոտորեայ թարգմանի:

Պետք է ասել, թե հիշյալ մի քանի հատվածները դեռ չեն կարող ցույց տալ այն հզոր ազդեցությունը, որ Նոյնիկը գործել է Հաճախապատումի վրա. հարկավոր է կարգալուծել հատվածներից առաջ և հետո եղած մասերը, զգալու համար, որ Հաճախապատումը ծայրեծայր մղելի է բուրում: Այս զգալությունը այնքան մեծ է, որ նորայր (սկզբին վարդապետ և թարգմանությունը նորին», էջ 54, ժան.) այն կարծիքն է հայտնում մինչև անգամ, թե Հաճախապատումը նախապես եղել է Ոսկեդարյան դործ, բայց հետին մի խմբագրի ձեռքով այնքան է խանգարվել, որ գործել է հետ-ոսկեդարյան աշխատություն:

Որովհետև Նոյնիկ ավելի առաջ է քան Հաճախապատումը (և այս բանը հաստատվում է Ոսկեդարյան լեզվի պատճառով), ուստի պետք է որ Հաճախապատումը լինի բանաբաղը և ոչ Նոյնիկ, ինչպես կարող է Մեսրոպի աշխատությունը լինել այն, երբ այս դեպքում պետք լինի ենթագրել, թե Մեսրոպ իր աշակերտի գրվածքից բանագրություններ է արել:

Յեթթերի հետ կարծեկից դուրս եկավ վերջին անգամ Յեսայան, որ նախ «Անահիտ», 1905, էջ 242 և հետո Կորյունի իր քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 51 և 86—88) նույնպես Հաճախապատումը համարում է Մեսրոպի գործը: Ազգաբանոցը դուրս այն հատվածը, որի վրա հիմնվելով Հաճախապատումը վերագրում են Գրիգոր Լուսավորչին, գտնվում է նաև Կորյունի մոտ, որ մենք էլ մեջ բերինք: Յեսայան ցույց է տալիս մանրամասն, որ բանաբաղը Ազգաբանագրոսն է և ոչ Կորյուն. հետևաբար այն

հատվածը բնապես Կորյունին է և վերագրում է Մեսրոպին. որիչ խոսքով այժմահագոյն» ճառերը Մեսրոպին են: Բայց սրանով ոչինչ չապացուցվեց. ցույց արվեց միայն, որ թե՛ Գրիգոր Լուսավորիչ և թե՛ Մեսրոպ ճառեր են գրել, և այն էլ «այժմահա»: Ուրեմն ո՞ր որ այժմահա» ճառեր գրած լինի, «Յաճուխապատում»-ը նրա՞նը կլինի:

Մենք խոսեցինք արդեն Հաճախապատումի լեզվի հետնություն մասին և ցույց տվինք, որ ես ծ դարից չէ և չի կարող ծ դարի սրևէ հեղինակիքը լինել: Նույնը կրկնում ենք այստեղ: Մենք ցույց տվինք այն բազմաթիվ բանաբաղությունները, որ Հաճախապատումը արել է Նոյնիկից և անհարմար դասանք, որ Մեսրոպ իր աշակերտից այգայսի լայն շարհերով օգտված լինի: Նույնը կրկնում ենք այստեղ: Հաճախապատումը Մեսրոպին չէ և չի կարող լինել: Մեղ հետ կարծեկից է նաև 2. Վ. Հացունի, որ «Բազմավեպ», 1930, էջ 401—406 մի առանձին հոդվածի մեջ քննում է Հաճախապատումը և տարբեր պատճառաբանություններով մերժում է վերագրել թե՛ Լուսավորչին և թե՛ Մեսրոպին, այլ ծ դարի կրկնորդ թարգմանիչներից մեկին:

S 9

Վերոհիշյալ ճառական գրվածքներից դուրս հաշվել պետք է նաև այն բազմաթիվ նամակները, որ Մեսրոպ իր կյանքի վերջին օրերին ուղարկեց Հայաստանի դանադան գավառները: Այս նամակներն էլ բնույթը խրատական էր. «Եւ մինչդեռ այնպէս մերձատրացն աւիրել զհոգևոր եռանգն ածէր, անդէն ի նմին ամի՛ յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ...» (Կորյուն, էջ 26): Դժբախտաբար բոլոր այս թղթերը, իբրև հովվական ժամանակավոր նշանակություն ունեցող, կորուստի անգունդն են մատնված. որովհետև օրինակներով տարածվելու կամ պահվելու համար չէին:

§ 10

Բայց ժամանակը ավելի խնայող է եղած այն թղթակցության համար, որ տեղի ունեցավ Պրոկղի, Ակակի, Սահակի և Մեսրոպի միջև, և որոնց ծանոթացանք վերը ընդարձակ մեջբերումներով:

Այժմ անցնենք քննել վերոհիշյալ հինգ թղթերի վավերականությունը: Առաջին երեք թղթերը իրոք ծ դարի ոսկեդարյան մի գրչի թարգմանությունն են և վերջին երկու թղթերն էլ Սահակի կամ մանուկանդ Մեսրոպի գրություններն են:

Որպեսզի այս թղթերը Սահակինը կամ Մեսրոպինը և կամ գոնե ժամանակակից մեկինը լինեն, հարկ է որ լեզուն, որով գրված են նրանք, ոսկեգարյան դրոշմը կրել, Դժվար է ոսկեգարյան մի գրվածք հետոսկեգարյան գրությունից զանազանել լեզվից դատելով: Առանց ի նկատի առնելու գրվածքի ոճը, մի քանի բառ կամ բարդություն և անանցման ձև, որ հակառակ են Ոսկեգարի ոգուն, իսկույն մատուցում են գրվածքի հետնությունը: Եվ ընդհանրապես: Այս տեսակետով եթե քննենք այս թղթերը (մանավանդ առաջին լորսը), պիտի տեսնենք ազատ այնպիսի թեթևություններից, բոլորն էլ կրում են պարզ և ընտիր հայերեն դրոշմը, հետո դատարկ ավելաբանությունից, և զարդարված այնպիսի թեթևաշիկ բառերով, որոնք իսկույն Եզնիկը, Ոսկեգարինը կամ Սեբեքիանոսն են հիշեցնում: Բառեր և դարձվածներ, որոնք հատուկ են Ոսկեգարին, գտնում ենք մեր ամեն քայլին. «Եղեալ վասն մեր մարդ առանց յջելոյ և անկանելոյ և խախտելոյ յիրոյ աստուածային (!) ինքնութենէն...ի մէջ անբաժին ծրարութեանն բաժին արկանեն... զնորակեցտ զնորածայն զայս ասն զնոր ընդունայն հայհոյութիւնսն... անցանեն զանցանեն ըստ նոցա հայհոյութիւնսն... Մշակք նենգատրք կերպարանեալ կերպարանեալ պաշտօնէից թրիտտոսի... Ձոր օրինակ անց անցանիցեն ընդ քաղցր բիր բոյսս արտոցն... և զտապ տառապոյն (?) հասկայից բուսոցն ի շերմախառն յանբարևխառն օդոցն իրովն քաղցրութեամբն յատոգջութեան բժշկութիւն դարձուցանելով... մանաանդ զվնասակար նօտարան նօրածայն զհերահոյութիւնս, զոր այլանդակաշատ ամբարշտութիւն տակաին դարս դառնութեան սերմանցն ցանէ ի վերայ սրբութեան սերմանեաց որովնախառն ուսումն, որք ի հաճեալօսաս սատանայխառն սովորեալ են... և նկրտին ըմբռնել զանհաս զատանց ըմբռնելոյն (հետոսկեգարյան հայերենով պիտի ասեն զանհասանելիք և զանըմբռնելիք)... հասանել անհաս շափուցն ժպրհեն... ի մէջ միջնածողով ժողովրդոց գխայն կանգնեաց (բարդության երկու կեսերը առանձին կրկնված, ոսկեգարյան ձև)... որ զանեղծ և զանարատ հաւատն յապակեութիւն դարձուցանել ջանան... և սրբոյ զանատ վանդեն ծրարութեանն քննութիւն՝ ջանան ընդ յնդիր արկանել... ընդունել պատիժս պատուհասի... և զզայթակցութիւն գայն ի միջոյ ի բաց կորուսանել... և այլն և այլն:

Ճշմարիտ է, թե այս գրությունաց մեջ կան ինչ-ինչ անհարթություններ, բայց սրանք էլ հայտնի է, որ գրիչների անձնությունն արդյունքն են: Արգարեն, Առիբրքի մեջ հրատարակված թղթերից առաջինը (Սահակի պատասխանը Պրոկղին) շատ ավելի լի է այսպիսի անհարթություններով, քան նույնի հրատարակությունը «Գիրք թղթոց»-ի մեջ: Ուրմն վերջինը ավելի հարազատ օրինակից է քան առաջինը: Լավագույն մի օրինակ կարող է մնացյալ անկանոնություններն էլ հարդարել:

Ապացուցանելուց հետո, թե հիշյալ գրությունները ոսկեգարյան են, այլևս ավելորդ կլինի կասկածել նրանց վավերականության վրա: Ոսկեգարի շրջանը այնպես կարճ է, որ Սահակի ու Մեսրոպի մահից քիչ հետո հերջանում է, և այս կարճ ժամանակում ո՛ւմ է՞ ու պետք Սահակի և Մեսրոպի անունով թուղթ կեղծել:

Ձարմանալի է սակայն հինգերորդ թուղթը (Սահակի պատասխանը Ակակին): Այս թուղթը, ինչպես տեսանք, ուրիշ քան չէ, եթե ոչ չորրորդի անփոփոխ արտագրությունը, տեղտեղ կրճատված, Սահակի նման բաղամտեղուն մի անձ, հետն էլ ունենալով մի Մեսրոպ կամ մի Եզնիկ, եթե պետք զգաց Ակակին պատասխան գրելու, չէ՞ր կարող մի նոր քան գրել. ի՞նչ կարիք կար նախորդը համոզուելու և նոր հասցեով ուղարկելու: Բացի սրանից, Ակակին ուղղված այս պատասխանը, իր այնչափ համոզատու թանկ մեջ անգամ, ընծայում է հետին հայերենի շատ հետքեր: Օրինակ՝

ա. Առաջինը գրում է «ի հանճարավնաս սատանայխառն սովորեալ են», ուր շեղատառը ոսկեգարյան մի սիրուն բարդություն է. երկրորդը քանդելով այս բարդը, դարձնում է «որ ի հանճարավնաս սատանայխառնման ուսեալ սովորեալ են»։ այսպիսով դուրս է զալիս, որ սատանան է հանճարավնաս, մինչդեռ Սահակի միտքը այլ է. նաև առաջինի մեջ սովորեալ բառով հասկացվում է «վարժված», մինչդեռ երկրորդը սովորիլ առնելով «ուսանիչ» մտքով, պետք է զգացնել սատանան էլ բացառականի վերածելու:

բ. Առաջինը գրում է. «Արդ, սրովհետև մոյարն առաջին և զխաւորն ի շարիս զիր ժանդ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժպրհեցաւ»: Այս շատ հասկանալի խոսքը խանգարվում, դառնում է «Արդ, սրովհետև մոյարն առաջին զխաւորսքն շափ զիր ժանդ աղտութիւնն սերմանել ժպրհեցաւ», որից ոչինչ չի հասկացվում:

գ. Առաջինը գրում է «նկրտին ըմբռնել զանհաս զատանց ըմբռնելոյն», որի մեջ շեղատառ բառերը հարազատ ոսկեգարյան են. երկրորդի մեջ եզրվելով դառնում է «նկրտին ըմբռնել զանըմբռնելիք»:

դ. Առաջինը գրում է «ի բաղուտ կիրմանն զայրութենէ զզգայութիւնսն կորուսեալ է» (այսինքն այրվածքի սաստկությունից զպայությունը կորցրել է). երկրորդում դասնում

լ. «ի սաստիկ կիզմանը ընկղմին միտքն ի թմբիրն խելագարուրեան» (վերջին բառը ոսկեզարյան չէ):

Ե. Առաջինը գրում է. «Ձի ոչ ինչ է այդ դիտութիւն (տպված է «այլ տգիտութիւն»), այլ խաւար խորհրդեան». իսկ երկրորդը դարձնում է «քանզի ոչ գոյ այլ գիտութիւն խաւարայնոց» (շեղատառը ոսկեզարյան չէ):

գ. Առաջինը գրում է. «Ընդ միտս իրեանց խորհել աներկիւղութեամբ և անամօթութեամբ, դամօթ իրեանց լրբութեամբ յայտնուպէս պատմեն». երկրորդը հետին բառերով՝ «աներկիւղաբար անամօթաբար գլրբութիւնս իրեանց յայտնադէս պատմեն»,

է. Առաջինը մի անդամ դործածում է «պատիւ պատուհասի» սեռականով ավելագրուիլունը. «ե մեծամեծ պատիւ պատուհասի տունկ ո՛չ դանդաղիմք». երկրորդը անգամ նույնը կրկնութեամբ՝ «մեծապէս (մեծամեծ?) պատմի, և պատուհասի մեծապիս վրէժ ինդրեցեն». իսկ երկրորդը շնչելով սյւ բոլոր դարգերը, ասում է պարզապէս. «ընդ մեծ պատմովք արկանել ոչ դանդաղիմք... մեծապէս պատուհասի զվրէժն խնդրիցեն»:

Այս բոլոր խանդարմունքը ինչի՞ համար է:

§ 11

Վերը ասացինք, որ Զամչյան Պատարագամատուցն էլ վերագրում է Սահակի և Մեսրոպի գործակցութեան Ուրիշներ Պատարագամատուցը տալիս են Լուսավորչին. այսպէս հենց Զարրհանայան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., էջ 280, որ սակայն նույն Պատարագամատուցի վերջում տրված աղոթքը համարում է «Մեսրոպայ վարդապետի»:


Հիշենք վերջին անգամ Եվսերիոսի նկեղեցական պատմության թարգմանությունը, որ թեև Մեսրոպի աշխատութեան արդյունքը չէ, բայց հորենացու պատմության համաձայն՝ կատարված է Մեսրոպի անմիջական հրամանով, ասորերեն լեզվից. «և՛ վկայ քեզ ի

մօտոյ երաշխատրեսցլ Եկեւսիաստէ զիյր Եւսերի Կեսարացոյ, զորս ևս թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու (հորենացի, Թ ժ):

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Մեսրոպի առաջին գործն է Առակայ գրի յարգմանությունը. որ և հայ գրականության առաջին երկն է:— 2. Միայ է այն տեղեկությունը, թե նա թարգմանել է նաև ամբողջ Ա. Իբրեր Սամոսատում:— 3. Ումանը կաբժում են, քե նրանն է նաև Մաշտոցը կամ Միսաբանը. բայց դա Թ դարի Մաշտոց կարողիկոսի խմբագրությունն է:— 4. Ռիշտ չէ նույնպես այն կարծիքը, թե իբրև են պատկանում նաև Ապաշխարության շարականները:— 5. Շատ սխալ է դարձյալ այն, որ իբրև են համարում Ս. Ներսեսի պատմությունը, որ ժ դարում գրել է Սևսոսը Երեցը:— 6. Ստույգ է, որ Մեսրոպ գրել է մի խումբ խրատական նաոեք, բայց քե հասել են մեզ դրանը՝ հայտնի չէ:— 7. Միայ է կարծել, քե այդ նաոեր Ագաթանգեղոսի Վարդապետությունն են կամ քե նույնիսկ Ագաթանգեղոսի ամենահին խրատագրությունը. լեզվի տարբերությունը չի բույլ տալիս բնղունել նման կարծիք:— 8. Ավելի սխալ է կարծել, թե այդ նաոերի հավաքածուն Հանախապատումն է, որ ոսկեդարյան լեզու չունի:— 9. Ստույգ է, որ Մեսրոպ իր վերջին օրերին գրել է խրատական րդրեր, բայց դրանք չեն հասել մեզ:— 10. Վավերական են Պրոկղի և Ակակի րդրեր և նրանց պատասխանը Սահակից ու Մեսրոպից:— 11. Մեսրոպի առաջաբերությանը է կատարված նվերիտի նկեղեցական պատմության թարգմանությունը ասորերենից»:

(Շարունակելի)



## ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ\*

### Ե. ՕՐՄԱՆՅԱՆ ԻՐ ԵՐԿԵՐՈՒՄ ՄԵՋ

#### 1. ՄՏՔԻ ԵՎ ԳՐՁԻ ՄԱՐԴԸ

Հայ հոգևորականության մեջ ոչ ոք ունեցած է այն պատրաստությունը, զոր ունեցավ Օրմանյան: Մագիստրոսության երեք տիտղոսները, զորս խլած կուզար Հոռմեն, փաստն են տքնության այն տարիներուն, որոնք անհրաժեշտ եղան պատրաստվելու համար մտավոր ասպարեզներու:

Տիտղոսները սակայն ամեն բան չեն: Անոնք կվկայեն պարզապես, թե լուրջ պատրաստութենն անցած է զանոնք կրողը: Ի՞նչ կընեն դուն ինքզ այդ տիտղոսներուն արժանի մնալու համար:

Որքա՞ն տիտղոս կրողներ կան, որոնց հակտեն շիթ մը քրտինք կաթած լէ, և որոնց միտքն ու հոգին ամուլ մնացած են միշտ:

Ու փոխարեն՝ առանց ցենդի ի՞նչ գիտնականներ կան, որոնց մտավոր վաստակին ծանրության տակ կկքին դարակները:

Օրմանյան իր հետադա տքնությամբ արժանի եղավ իր շահած վկայականներուն:

Արդարև, մագիստրոսության իր երեք տիտղոսները բան մը պիտի չարժենին, եթե Օրմանյան ինքն իսկ շահեր լորրորդ տիտղոս մը ևս, ան, որ քրտինքն ու հարատն տըքնությունը կուտան մարդուս՝ բեղմնավորությունը:

Մտքի մարդը, Օրմանյանի մեջ, ի հայտ եկավ զույգ ասպարեզներու վրա, ամբիոնի և գրչի մարդ եղավ ան հավասարապես:

Շփոթեցնող կետն այն էր, որ մեր ժողովրդական երգերը պարզ կազմ ունեին, նվազ զարդարված էին, քան եկեղեցական եղանակները:

Այդ հանելուկի բանալին ինձ պիտի տաին այն եկեղեցական եղանակները, որոնք ավելի պարզ էին, եվ երկար որոնումներից հետո գտա այնպես եղանակներ, որոնք երկու տեսակ են երգվում, ծանր և թեթև:

Այս երգերը կոչվում են տոնական, Մանր նման էր գեղգեղանքներով թրքականին, իսկ թեթևը իր պարզությամբ ժողովրդականին: Մերկացնելով ծանրերի գեղգեղանքները, նկատեցի որ նրանք իրենց խորքով նման են թեթևներին:

Ուրեմն սրանից հստակ երևում է, որ այս պարզ եղանակները զարդարվել էին թրքական ռեժով, նրանց հանդիսավորություն և շուք տալու դիտավորությամբ, էրբ մենք շունեիք բազմաձայն երգեցողություն»:

Կոմիտաս վարդապետը 1914 թվականին մեր եկեղեցական երաժշտության կրած ազդեցությունների մասին Փարիզի կոնգրեսում կարդացած իր դասխոսության մեջ ասում է. «Օտար երաժշտություններից, թուրքականն է ու պարսկականը, որ մասնավորապես ազդած են մեր եկեղեցական երաժշտության վրա, առաջինը՝ Հայաստանի մեջ՝ որ բավական երկարատև են ի վեր թուրքերու տիրապետության տակ կգտնվի, երկրորդը՝ Արևելյան Հայաստանի մեջ, որ Ռուսիո կցվելու առաջ անկախության կորուստի վեպ՝ կգտնվի Պարսկաստանի տիրապետության տակ, քրդական երաժշտությունը հայ երաժշտության վրա սկսած է ազդել հետևյալ կերպով:

Հայոց մեջ հին ժամանակներն ի վեր սովորություն է եկեղեցական երգեր երգել ընտանեկան հանդեսներու միջոցին:

Թուրքիո մեջ տիրացուները, այսինքն եկեղեցվո երգիչները, որ կերթալին երգել մեծատուններու խնջույքներուն, հայ երգչսկսան զարդարել թրքակերպ զունավորմաներով, հաճելի ըլլալու համար այդ մեծատուններուն, որովհետև հայ եկեղեցական երգը իր ազնիվ ու մաքուր նկարագրով կոչնականներ զվարճացնելու բնույթ լուռի, և այդ մեծատունները Հայաստանեն հեռու Կոստանդնուպոլիս կամ ուրիշ մեծ քաղաքներու մեջ քիչ մը թրքական քաղաքակրթությունն ու բարքերը ընդգրկած էին, ինչպես հայ եկեղեցական երաժշտությունը տակավառ տակավ մեծ քաղաքներու մեջ, իր մաքրությունն ու ազգային նկարագրեն բան մը կորսնցուց և թրքական մեղկությունն ստացավ:

Մեծատուններու հացկերույթներում, այդ արափոխումը փոխադրվեցավ եկեղեցիներու մեջ...:

... Եկավ ժամանակ մը, որ այդ երգիչները կորսնցուցին միևնույն իսկ ազգային ձայնատվությունը և ընդգրկեցին թրքաց սիրելի

\* Թ. Թևրիմեղյան, «Կոմիտաս ժողովածու», Երևան, 1930, էջ 88—90.

անգային, կոկորդային ձայնատվութունները և սկսան երգել թիթ մեջեն, բերանը գոց, հեղդ, խուլ ձևով մը (Կոմիտաս վարդապետը երգում է տեղում և ներկայացնում թրքածն երգելու ձևը): Ահավասիկ դարձյալ ուրիշ օրինակ մը պիտի կրգեմ ձեզի, «Տիրամայր»-ը թրքակերպ խաթարման ձևով (.....): Անիկա խառնուրդն է թրքական հյուսեխնի, շինազ, փասելիք, կյուլիզար, հրջազ, սֆահան և աշխտան կարգերուն (.....): Եվ ահավասիկ հայ ավանդական եղանակը, զոր ութ տարի առաջ գրի առած եմ շինական Տեղքահանայի մը բերնեն (...):

Միևնույն րանը պատահած է Արևելյան Հայաստանի մեջ, այն տարրերությամբ, որ այնտեղ պարսկական երաժշտությունն է, ոտ իր աղջեցությունը կ'զործե մեր երաժշտության վրա:

Ահա օրինակ մը պիտի երգեմ ձեզի (.....): Եվ ահա նույն եղանակը իր զուտ հայկական ձևով (.....):

... Ինձի պիտի հարցնեք, թե ինչպես գիտեմ, որ այդ եղանակները, զոր կենդկայացունեմ իրը ճշմարիտ հայ ոճի օրինակներ, իրո՞ք այդպես են: Պատասխանելու համար ձեզի, պիտի հիշատակեմ մեկ հատվածը ժժ դարու հայ նշանավոր, հմուտ երաժշտագետ Անանիա Շիրակացիի, որ իր «Յաղագս ձայնից» գործին մեջ կ'գրե. «Հայ եկեղեցվո շարականներուն մեջ, խոսքերը ավելի պետք է գրավեն ունկնդիրներու ուշադրությունը, քան երաժշտությունը», այսինքն թե շարականները հղացված էին իրր տեսակ մը ունկնդրութիւլ (թվերգություն) երգելու համար:

Հայտնի է ուրեմն, թե այդ քոյր անօգուտ հարգարանքները, որ շարափոխած տարրերակներու մեջ կ'ծանրաբեռնեն շարականները, օտարամուտ են: Տաղերու մեջ, կրսի Անանիան, «Երաժշտությունը պետք է գերակշռե, քայց առանց խոսքերուն իմաստը խեղդելու...»: «Տիրամայր»-ի մեջ երաժշտական ընդլայնումը խոսքերուն իմաստն րնամյ ի հեռանար, զայն հավատարմությամբ ու զորությամբ արտահայտելու միայն կ'ծառայե: ... «Տիրամայր»-ին մեջ եղանակը կարտահայտե Աստվածամոր վիշտը, կ'վերարտագրե անոր հեկեկանքներն ու հծծյունները:

Ուրիշ հայ հեղինակ մը, մեծանուն Համամ Արևելցիին (Ժ դար), կրսե. «Եկեղեցական երգերը պետք է երգել ոչ թե ձգձգված ձևով մը, այլ աշխուժ ձևով մը: Պետք չէ ձայնը հանկարծ շատ րարձր հանել, կամ շատ ցած իջեցնել, որովհետև անիկա կրնա ազոթթիս վհհությունը խանգարել...»:

Քայց կենդանի ապացույցը ես գտա այն իրողության մեջ, որ այն եկեղեցական եղանակները, զորս ես գլուղբրու և հին վանքերու խորը հավաքեցի իրենց նախնական ձևին

մեջ, կհայտնվին համանման ժողովրդական երգերուն, որ հայ գեղուկին անվիճելի ինքնահատուկ ստեղծագործություններն են:

... Մեր եկեղեցական երաժշտության և ժողովրդական երգերուն մեջ, երբեք չկա տվելորդ և անկապակից գունավորումներ...:

... Հայ ժողովրդական երաժշտության վրա օտար երաժշտություններ շատ քիչ աղջեցություն ունեցած են, որովհետև ժողովուրդը թրքական եղանակ մը թրքերին խոսքերով կ'երգե, պարսկական եղանակ մը պարսկերեն լեզվով, քրդական մը՝ քրդերեն լեզվով և այլն, ու երբեք օտար եղանակ մը հայերեն խոսքերով...»:

Այս գաղափարների լույսի տակ, Կոմիտաս վարդապետը միջոցներ որոնեց և ձևանամուխ եղավ մեր եկեղեցական երաժշտությունը աղավաղումներից փրկելու գործին:

Այդ մասին նա Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսին գրում է 1910 թվականի հունվարի 10-ին. «Բուն ազգային եղանակները հոգեշունչ, պարզ ու վեմ շարականի երաժշտությունը, որ մեր նախնայաց նախանձեի հոգուն պատկերներն ու հայելիներն են, որոնք մշտամրմունջ էին, այժմ դասապարտվել են արհամարհանքի, կորստի և նախատինքի, ավելին կստե՛մ, տանում են մեր սիրտն ու հոգին զեպի խեղդող օտարական ճանապարհներ: Եթե վերջին նշույլն էլ, որ մնացել է, մենք փչե՛նք ու հանգչե՛նք, այն ժամանակ մեր աչքով կտեսնենք մեր սրտի քախումբը, ապա ուրեմն և մեր կյանքի դոյության վառարանի հայելիները»:

Նույն նամակում Կոմիտաս վարդապետը բացատրում է նաև շարականների եղանակների աղավաղման պատճառները: Նա գտնում է, որ «անխտրի նախատեսակները, «Հանգրստյան շարք», «քաղածո շարք», «անտեղի ճոխացումները ձանձրույթ են պատճառում հավատացյալներին, նա ասում է շարունակության մեջ. «Յուրաքանչյուր մարդ, որքան էլ չբեմեռանդ, որքան էլ բարի քրիստոնյա լինի, չի կարող մարսել միանգամից այդքան խառնաշփոթ կերակուր: Եթե երաժշտությունը, սրի դիրն է կրթել և ազնվացնել, հոգևոր երաժշտական զգացմունք փչելով հավատացյալի հոգու ու սրտի վրա, անպատակահարմար մատակարարությամբ բաշխվի, անշուշտ անկումն կպատրաստե և կխորտակե սրտի քնքուշ լարերը և կկտրե, կանջատե սիրտն ու հոգին, որոնք անբաժան պորժոն եղբայրներ են երաժշտության միջոցով մեր կյանքի մեջ»:

Այստեղ նա տասը կարևոր միջոցներ է տուաչարկում մեր եկեղեցական եղանակները աղավաղումներից փրկելու համար:

Պահպանված է մեկ ուրիշ զեկուցագիր ուղղված նորից Մատթեոս Ի կաթողիկոսին, 1910 մայիս 12 թվակիր, որտեղ ասում է.

«Այժմ շարականները անարգությամբ նսնմանում են, շարականագետներն օրավուր նվաղում են և փոխարենն աճում են թերուս ու տգիտ, անփորձ և անյնորհք դպիրներն ու դպրագետներ, որոնք նախքան գտնասությունն երաժիշտ են և անուց անսանձ ու շահատակ կամայականութանն է հանձնված հայ ժողովրդի հոգևոր և պատասխանատու դաստիարակության գեղարվեստականը: Չեմ խոսում հոգևոր երաժուտության վեճ ու կրթիչ զերի մասին, այլ ամենաէական ուրվագծերով շեշտում եմ, թե ինչպես կարելի է վանել, ազդալին հոգևոց երաժշտության վերականգնության միջոցով, հայ-քրիստոնեի սանած սիրտը և վերստին բորբոքել շերմեանդության թաքնված հուրը»:

Այս զեկուցագրի վերջաբանը ուշագրավ է, որտեղ ասում է Կոմիտաս վարդապետը. «Ես պատրաստ եմ, որպես ցայսօր իմ բոլոր ջանքերս ու հոգս նվիրել մի այնպիսի սուրբ գործին, որ ինձ ոգևորել է դեռ տղա տիոցս, սուրբ գործին, որ ինձ բաշել ու կապել է Մայր Աթոռին, սուրբ գործին, որ ինձ ուղիղ 20 տարի հույս է ներշնչել»:

Կոմիտաս վարդապետի ստեղծագործական աշխատանքը զգալի թիվ է ներկայացնում այսօր: Կ. Կոստանյանին գրած իր մի նամակում նա խոսում է այն մասին, թե ինչք սիրով և համբերությամբ ձեռնամուխ է եղել մեր հոգևոր երգերի մշակման և դաշնավորման պատասխանատու աշխատանքներին: «Մեր հոգևոր երգերից մի քանի կտոր պատրաստել եմ քառաձայն, վեց ձայն և ութ ձայն, ուսուցչապետս առաջարկեց երգել տալ, պատրաստում եմ մի քանիսն էլ»:

Ատորև բերում ենք Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության վերաբերյալ հրատարակված մշակումների ցուցակը.

1. «Ազգային օրհներգ» («Ամեն հայի սրտից բխած»), երաժշտություն Սողոմոն Սողոմոնյանի՝ ուսանող Ա յարանի ճեմարանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի (քառաձայն խառն խմբի համար հայկական նոտագրությամբ), խոսքերը գրեց Արշակ Թաղլյան, ուսանող Գ յարանի ճեմարանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Վաղարշապատ, 1891 թ., 1 էջ:

2. «Աղխարհիկ և հոգևոր խմբերգեր», Կոմիտաս վարդապետ, Փարիզ, 1906 թ. (նույն թվականին կայացած հունրածանոթ համերգի համար պատրաստված խմբերգերն են):

3. «Տէր ողորմեա», գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ (քառաձայն խառն խմբի համար), «Ամենուն տարեցույցը», 1914 թ., 1 էջ:

4. «Ճաշու շարական Ս. Զատիկ»: Դաշնավորեց Կոմիտաս վարդապետ: «Ամենուն տարեցույցը», 1926 թ., էջ 444—447:

5. Կոմիտաս: Դաշնավորյալ երգեցողությունք Սրբոյ Պատարագի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո վասն միասնոարական խմբի, վերատեսյալ ի ձեռն վարդան Սարգսյանի, տպագրյալ արղյամբն Հայկազն Վարդանյանի, առ ի երախտագիտություն սիրելի ծնողաց յուրոց Կոստան և Թենտ վարդանյանի. հրատարակություն Հ. Սեմերճյանի, զարդագրություն Ռ. Շիշմանյանի, Փարիզ, 1933, 73 էջ:

6. «Հայ սրբազան երաժշտություն», տետր II, Կոմիտաս վարդապետի տաղք և ալելուք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, ինչը խմբերգ վասն բազմաձայն երկսեռ խմբի, յոթ մեղեդի միաձայն, առանց նվազարանի: Հրատարակություն Կոմիտասյան հանձնաժողովի, զարդագրություն Ռ. Շիշմանյանի, Փարիզ, 1946—1947, 20 էջ: Խմբերգեր 1) Երգ զիշերային ժամու (բազմաձայն խառն խմբի համար), 2) Աղոթք տերունական (քառաձայն խառն խմբի համար), 3) Երգ շրորհնեցի (քառաձայն խառն խմբի համար), 4) Զրօրհնեք (տարբերակ), (քառաձայն խմբի համար), 5) Զրօրհնյազ շարական (քառաձայն խմբի համար), 6. Կանոն թաղման Տեառն (Հարց), (արական եռաձայն խմբի համար), 7) Մեծացուցեք (քառաձայն խառն խմբի համար), 8) Երգ Ուտնվայի, ա. (բազմաձայն խառն խմբի համար), 9) Չանձ Թ (քառաձայն խառն խմբի համար): Զավելված. 1) Մարական կիրակնամտից (միաձայն), 2) Սուրբ Աստված Մեծի Ուրբաթու (միաձայն), 3) Սուրբ Աստված հորդոր (միաձայն), 4) Երգ առավոտյան ժամու (միաձայն), 5) Սրբասացություն Մեծի Հինգշաբաթի (միաձայն), 6) Երգ Կաթողիկե տոնի (միաձայն), 7) Օրհնություն պատարագի (միաձայն):

7. «Օրհնութիւն երից մանկանց», քառաձայն խառն խմբի համար, դաշնամուրի ընկերակցությամբ Վ. Սարգսյանի (Երգացանկ «Արմենիա» երգչախմբի, խմբագրող Վ. Սարգսյան, Ա շարք, № 3<sup>1</sup> և № 3<sup>11</sup>, Փարիզ (6 էջ):

8. «Անձինք նուիրեալք», հրատարակություն Ռ. Աթայանի, «Եջմիածին», 1961 թ., № Բ:

Վերահիշյալ հրատարակված գործերից բացի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասյան արխիվում կան

շուրջ 20 անտիպ եկեղեցական եղանակների մշակումներ, որոնք են.

1. «Եջ Միածինն ի Հորէ», Ա տեսակ, քառածայն.
2. «Եջ Միածինն ի Հորէ», Բ տեսակ, քառածայն.
3. «Սուրբ Աստուած» (յերեկոյի), քառածայն.
4. «Սուրբ Աստուած» (հաշի), քառածայն.
5. «Սուրբ Աստուած» (պատարագի), քառածայն.
6. «Օրհնութիւն երից մանկանց», բազմածայն.
7. «Օրհնութիւն երից մանկանց», քառածայն.
8. «Օրհնութիւն երից մանկանց», քառածայն.
9. «Օրհնութիւն երից մանկանց», եռածայն.
10. «Աշխարհ ամենայն», բազմածայն.
11. «Ալէլուիա Պատառակերպութեան»՝ «Լեբրինք ցնծասցեն», բազմածայն.
12. «Սրբասացութիւն ներցեցեցոց»՝ «Վասն յիշատակի», քառածայն.
13. «Թարգմանչաց Մանկունք և Համբարձի»՝ «Նմանեալ Մովսէսի», քառածայն.
14. «Տէր ողորմեա», ԲԶ, Ա տեսակ, քառածայն.
15. «Տէր ողորմեա», ԲԶ, Բ տեսակ, բազմածայն.
16. «Ով զարմանալի», Ա և Բ տեսակ, քառածայն.
17. Մեղեդի Յարութեան»՝ «Սայլն այն իջանէ», միածայն.
18. «Նորահրաշ պսակաւոր» (կիսավարտ), քառածայն.

Կան նաև կիսավարտ մշակման բազմաթիվ էսքիզներ, եկեղեցական երաժշտութիւնն իբրև բարբրյալ:

Պահպանված են նաև Կոմիտաս վարդապետի հայկական նոտաներով ձայնագրումները Էջմիածնի միաբանների երգած եղանակներով, որոնք, ըստ երևութիւն, էջմիածնում պահպանված հնագույն եղանակներից են: Այդպիսին է № 333 թերթիկը, որի վերնագիրն է «Օրհնութիւն հոռոտակապետաց Միքայէլի և Գաբրիէլի և ամենայն երկնային ոտար», շարական ԲԿ, ստեղծ եղանակ (Ս. էջմիածնի ի հին գոյն), ձայնագրեալ ի Յովակիմ վարդապետ Չամբեան Վարդապատուոյ ի 1887 ամի, ձեռամբ աշակերտ Ծղասարանի Գէորգեան Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռ Ս. էջմիածնի Սողոմոն Գէորգեան կուտինացոյ, ի Ս. էջմիածինս:

Մի ուրիշ ծրարի վրա կարգում ենք. «Հոգևոր եղանակներ. հավաքեք Սողոմոն սառ-

կավագ Սողոմոնյանը, Կուտինայում, 92/24/Ղ: Սա բովանդակում է 9 զանազան հոգևոր երգեր, իր ծննդավայրի ավանդական եղանակներով:

№ 332 ծրարի վրա գրված է. «Հոգևոր եղանակներ, հավաքեք Սողոմոն սարկավագ Սողոմոնյանց, միաբան Ս. էջմիածնի, 1893 (24)Գ», Տետրում կան 14 հոգևոր եղանակներ հայկական ձայնագրութիւնով: Կոմիտաս վարդապետը ձայնագրել է Ղևոնդ վարդապետ Հովակիմյանի և Գևորգ արեղա Արքայան Ռշտունու երգած էջմիածնական հին եղանակներից մի քանի ծանր «Տէր ողորմեա»-ներ, գրված մեր Եկեղեցւոյ մի քանի ձայների հիման վրա, «Քաց մեզ Տէր», վասն սուրբ տեղույս շինութեան» և այլն զանազան եղանակներ:

Մի այլ ծրարում պահպանված են հայկական ձայնագրութիւնով երեք մեղեդիներ՝ «Մարիամ Մակտաղինէն» (Յարութեան), «Համեմատ քեզ» (Աստուածածնի), և «Ի գերեզման յարուցելոյն» (Յարութեան), ձայնագրեալ Այս մեղեդիներ գրել է Գառնակերտը, ձայնագրել է Կոմիտաս վարդապետը, ներկա ձեռագիրը արտագրված է Ս. սարկավագ Մելիքյանի ձեռամբ:

Պահպանված են նաև միածայն և եռածայն հայկական ձայնագրութիւնով մի քանի շարականներ, ինչպես «Որ զանարատ բազուկս քո» (հաշի շարական), «Բանն որ ընդ Հոր էութեան» (Մեծի Պահոց Ա շարաթու շարական) և այլն և այլն:

Կոմիտասյան եկեղեցական երգեցողութիւնն ժառանգութիւնը չի սահմանափակվում վերոհիշյալ նմուշների մշակումներով, նրա գործերի զգալի մասը մեզ չի հասել, ինչպես օրինակ բազմաձայնած յոթը տեսակ պատարագները<sup>1</sup>, Այսօր այդ պատարագներից միայն արական խմբի համար գրած պատարագի սեպիր օրինակն է, որ հասել է մեզ և շնորհիվ իր հմուտ աշակերտ Վարդան Սարգսյանի ջանքերի, սրբագրվել է այն և տպագրվել:

Կոմիտաս վարդապետից մեզ հասած եկեղեցական և ժողովրդական բոլոր մշակումներն էլ ինչ են, լինեն գրանք հրատարակված թե անտիպ, գեղարվեստական բարձր արժեքով: Այդ մշակումները գեղարվեստական ամբողջութիւն են ներկայացնում. գրանցում ներդաշնակութիւնը բովանդակութիւնից

<sup>1</sup> Կոմիտաս վարդապետը 1909 թվականին Ս. էջմիածնի Հայր Ղևոնդ Տալանի ուղղած նամակում գրում է. «Հայկական պատարագ ունեմ 7-ը տեսակ բազմաձայն դաշնակած. բայց չէ տպված»:

բխելով, մեկը մյուսին լրացնելով, խորանում և նոր որակ ու բովանդակություն են ստեղծում:

Կոմիտաս վարդապետը ընդհանրապես երգի մշակմանը մոտենում էր ստեղծագործացար, ոչ թե վերարտադրելով կրկնում էր տվյալ կերպարները, այլ նոր գույն էր ավելացնում, խորացնում բովանդակությունը և էությունը:

Այս բոլորը վկայում են Կոմիտաս վարդապետի ստեղծագործ տաղանդի և ազգային արվեստին խորամուտ լինելու նրա բացառիկ կարողության մասին:

Կոմիտաս վարդապետը, իր հանճարի ամբողջ մեծությամբ, հրաշքի նման երևաց մի օր հայ իրականության մեջ, ցնցեց ամբողջ արևելյան երաժշտական աշխարհը իր բերած նոր հրաշալի ներդաշնակումներով, որոնք մեր ժողովրդի հոգեկա՛ն արժեքների գանձարանում խոր թաքնված էին մնում, այդ բոլոր

արժեքները սպասում էին տաղանդ և ներշնչում ունեցող սրբազան անձնավորության: Այդ հրաշք-մարդը եղավ Կոմիտաս վարդապետը:

Կոմիտասյան մշակումները իրենց ինքնատիպ հայեցողությամբ և ներդաշնակության ամենանուրբ և գերազանց ճաշակի իրրև հույակերտ պատկերներ, իրենց բովանդակության մեջ են լցնում հայ ստեղծագործ միտքը և հոգին ամբողջությամբ, որոնք ազնվացնում և վերացնում են մարդու ներքին աշխարհը, և որպես ազգային արժեքներ, հպարտության մեջ են լցում մեզ:

Վերջինից ամսագրի սույն համարում տպվել է արդեն վերջերս Փարիզից ստացված մի նշխար ևս Կոմիտաս վարդապետից՝ «Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան» (տե՛ս էջ 45), իսկ հաջորդ համարներում հրատարակելու ենք Կոմիտաս վարդապետի հոգևոր երաժշտության վերոհիշյալ անտիպ էջերը:



# Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ն Ո Յ Ե Ր


## 1. ԴԱՍԱԿԱՆ ԹԻՎԵՐ ԶՈՒՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐ ԺԳ ԴԱՌՈՒ ՐՈՒՂԱՐԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԻ ՄԸ ՄԵՋ

Ռուս հայտնի սլավոնագետ Վ. Գրիգորովի 1844-ին Սուրբ Լեոան Զոգրաֆի վանքին մեջ (ներկայիս Հունաստանի հայկիդինյան թեմակողմի) երևան հանած է թուղարական Տոնացույց մը: Սույն արժեքավոր ձեռագիրը հետագային ուրիշ ռուս սլավոնագետներու ալ ուշադրութիւնը գրաված է, որոնք հրատարակած են անոր զանազան մասերը<sup>1</sup>: Թուղարական պատմագիտական գրականութեան մեջ հիշյալ Տոնացույցով առաջին անգամ զբաղած է Իորդան Իվանով<sup>2</sup>, Հարգելի գիտնականը, քննելով ձեռագրի ուղղագրութիւնը, զայն կհամարե միջին թուղարերեն ու կհզրակացնե, որ գրված ըլլալու է ժԳ դարու երկրորդ կիսուն<sup>3</sup>:

Տոնացույցը գրված է զեղեցիկ ձեռագրով: Ցուրաքանչյուր ամիս կսկսի զունավոր զարդագրով: Կրակական 219 մագաղաթի թերթերն են բաժնված է 8 թերթի (18 էջ) բաղկացած պրակներու: Ձեռագրին մեզի համար ունեցած նշանակութիւնը այն է, որ յուրաքանչյուր պրակի վերջին թերթերը նշանակված են հայկական տառերով, որոնք թվով 23 են (տե՛ս նկարը):

Հայկական յուրաքանչյուր տառի վերերը և ներքերը գիծ գրված է: Տառերը ունին փոքր

տպագիր տառի ձև և գրված են մեծ վարպետութեամբ, ինչ որ կվկայե, թե ելած են վարպետ գրչի ձեռքէն: 17-րդ պրակին վրա հայկական տառի փոխարեն կտեսնվի սլավական յՅԻ տառը, իսկ 18-րդ պրակին վրա տառ չկա: Մինչև ժամանակ յՅԻ տառին հաջորդող երեք պրակներ տառերով թվահամարված չեն: Անոնց կհաջորդե ռՄ տառով նշված պրակը: Վերջին պրակը կավարտի ռՄ տառով:



Հիշված Տոնացույցի մեջ սույն հայկական տառերը թվական նշանակութիւն չունենին, որովհետև, եթե այդպես եղած ըլլար, «Ժ» տառով նշանակված 10-րդ պրակին պետք է հետևեր «ԺԱ» և հաջորդաբար, մինչդեռ «Ժ»-ին կհետևի հայկական այբուբենի հաջորդ տառը՝ «Ի», որ համազոր է 20-ի: Այնուհետև կհաջորդեն «Լ», «Խ», «Ծ», «Կ», «Զ» տառերը, որոնք համազոր են 30, 40, 50, 60 և 70 թվանշաններուն: Ակնհայտ է, որ սույն տառերը այստեղ գրված են որպէս դասակարգ ցույց տվող նշաններ՝ առաջին պրակ, երկրորդ պրակ, երրորդ պրակ և այլն: 17-րդ և 18-րդ պրակներին հետո պակասած տառերը հավանաբար ջնջված են, ձեռագրի անխնամ պահպանման պատճառով: Հավանաբար 17-րդ պրակին հետո գրված սլավական յՅԻ

<sup>1</sup> Ի. Աստղեկեանի, «Հին սլավական հուշարձան ըստ Ցուսաֆովի նամակի», 1888 թ., հատ. I, էջ 120—128 և հատ. II, էջ 344—347.—Նոնիդ, «Սլավոն-սերբական ժամանակագրութիւն ըստ Աֆոնյան անապատի», Մոսկվա, 1875 թ., էջ 84 և շար.— Գրիգորի Ուսպենսկի, «Երկրորդ ճանապարհորդութիւն», Մոսկվա, 1880 թ.— Ա. Իվ. Ալեքսանդրով, «Ռուսական բանասիրական հանգստ», հատ. XXIX, 1888.

<sup>2</sup> Իորդան Իվանով, «Թուղարական հնութիւններ Մակեդոնիա մէջ», Սոֆիա, 1908, էջ 38 և շար.:

<sup>3</sup> Սույն տեղը, էջ 89.

տառը զետեղված է անծանոթի մը կողմն, հայկական տառի շնորմին հետո:  
 ԺԳ դարու բուլղարական ձեռագրի մը մեջ հայկական տառերու գոյությունը հետաքրքրական պարագա է: Ինչպե՞ս քացատրիլ այս:

Պրոֆ. Ի. Իվանով կենթադրե, որ սույն մագաղաթները հավանաբար վաճառված են հայ գրավաճառներու կողմն: Մենք անընդունելի կզտենք այս ենթադրությունը: որովհետև անիմաստ և անհարկի է մագաղաթի պարագ թերթերը թվագրել, այն ալ վաճառականի մը կողմն, քանի որ անկարելի էր նախապես գիտնալ, թե ի՞նչ քանի պիտի ծառային թվագրված էջերը:

Խնդիրը կարելի է քացատրել այլապես: Սուրբ լեռը, ինչպես անցյալին, նույնպես մինչև վերջերս կհզոտն է քաղմաթիվ վանքերու, որոնց մեջ գրական եռանդուն գործունեություն տեղի ունեցած է: Այս վանքե-

2. ԱՆՆԵՍԱՑԱՍ ԶԱՅ ԳԱՂՈՒԹ ՄԸ ԲՈՒՂԱՐԻՈ ՌԱԶԳՐԱԿ ԲԱՂԱՔԻՆ ՄԵՋ

1828-ին թրքական լուծեն Բուլղարիո աղատագրության պահուն Ռազգրադի մեջ հայեր լկային: Սակայն թրքական պաշտոնական փաստաթղթերու մեջ կհիշվին քաղաքին մեջ «Ermeni sokak» (աշակական փողոց) և քաղաքին շուրջ «Ermeni baalar» (աշակական այգիներ), «Ermeni mezarlika» (աշակական դերեզմանատուն) և բուլղարական սվադոշ թաղամասի կեդրոնին մեջ «Ermeni mahlesia» (աշակական թաղ): Կհիշվի նաև գոյությունը հին հայկական եկեղեցիի մը Ս. Աստվածածին անունով:

Այս բոլորը կուզան հաստատել, թե Ռազգրադի մեջ գոյություն ունեւր հայկական մեծ գաղութ մը, որ ուներ իր առանձին թաղամասը և եկեղեցիներ: Սակայն 1878-ին հետո Ռազգրադի մեջ հայեր լկային այլևս:

Հետաքրքրական է գիտնալ, թե հայերը ուրկե՞ն եկած են Ռազգրադ, ի՞նչ էր անոնց գրադումը և ի՞նչ պատճառներով հեռացած են անկե:

Ռազգրադի հայերու մասին առաջին անգամ տեղեկություն կուտա կաթուղի միսիոներ Պետր Բոզդան Պակչիչ, որ 1640 սեպտեմբեր 11-ին Ռազգրադ այցելած է: Ան ի մեջի այլոց կգրե, թե Երևանգրադ (Ռազգրադ— Ա. Մ.) քաղաքին մեջ կան 70 հայ րնտանիքներ, թվով ալելի քան 460 հոգի, որոնք նույնպես

րուն մեջ կծառային հույն, բուլղար, սերբ, ռուս, ռումին և հավանաբար միջին դարերուն նաև հայ վանականներ:

Խնդրո առարկա Տոնացույցը հայտնի է Գրաքանի Տոնացույց անվան տակ (գրիչ Գրաքանի անվամբ): Հիշյալը հայտնապես բուլղար է, որ բուլղարներեն զատ կտիրապետե նաև հունարենի, ինչ որ հայտնի է քնագրին մեջ զետեղված հունական տառերու գործածությունն: Կասկածն դուրս է, որ ձեռագիրը գրված է Սուրբ Լեռան բուլղարական վանքերեն մեկուն և հավանաբար Զոգրաֆի վանքին մեջ:

Նկատի ունենալով թվագրված պարագաները, կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ մագաղաթյա թերթերը ստացված կամ գնված են հայ միարանե մը, որ անոնց վրա որևէ նյութ մը գրի առնելու համար նախապես թվագրած է զանոնք հայկական տառերով, որպեսզի էջերը իրարու հետ շփոթվին:

Եկեղեցի լուծին, բուլղար ալ արհեստավոր և առաջնագործ են, այսինքն հյուան՝ 125 տարի հետո, 1765-ին, Ռազգրադ կայցելե դանիացի ճանապարհորդ Կարստեն Նիբուր, որ կնշե, թե քաղաքին մեջ բացի թուրքերն, բուլղարներն և հույներն, կան նաև 50—60 հայեր:

Ռազգրադի հայության անցյալի մասին կխոսին նույնպես հայ աղբյուրներու Այսպես, Կաֆայի մեջ Աղարիա Զուղայցիի ձեռամբ գրված մագաղաթյա Ավետարանի մը մեկ հիշատակարանն կպարզվի, թե նույն ձեռագիրը նվիրված է Վերդատու (Ռազգրադ— Ա. Մ.) ժամու Ս. Աստուածածինի ի յիշատակ, ՌՃԷ (1107—1658) թվականին: Ավելի ուշ, ըստ Հ. Մ. Բժշկյանի վկայության, իր այցելության ընթացքին, 1802 թվականին, Ռազգրադի մեջ գտնված է 20 տուննոց հայություն մը, բաղկացած առևտրականներու: Համայնքը ուներ նաև իր փոքրիկ եկեղեցին:

Անոնք են Ռազգրադի հայկական գաղութի վերաբերյալ գրավոր պատմական փաստերը:

4 Պրոֆ. Ի. Իվանով, «Բուլղարական հնություններ Մահեդեոի մեջ», Բ հավելյալ տպագրություն, Սոֆիա, 1931, էջ 488.

5 Արևել. Բալոտի, «Ռազգրադ», 1930, էջ 112—113.

6 Պետր Բոզդան, «Ճանապարհորդություն Բուլղարիո մեջ 1640-ին», «Երևանավայրերու ուսումնասիրության արխիվ» պարբերաթերթ, Բ տարի, Բ գիրք, 1939—1940, էջ 186.

7 Կարստեն Նիբուր, «Ճանապարհորդություն Կաստանդուպոլսն Բուլղարիո մեջն ժԸ դարուն», Պարբերաթերթ, 69-րդ գիրք, 1900, էջ 289.

8 Ն. Գոտտայան, «Բուլղարահայ անհետացած գաղութներու մասին», Երևան, 1959.

9 նույն աղբյուր:

Ուրիշ որևէ առարկայական փաստ չէ մնացած, բացի տապանաքարի մը, որ ներկայիս կպահպանվի Ռազդրադի հնագիտական թանգարանին մեջ:


Տապանաքարը պատահամբ երևան հանված է 1932 թվականին Ռազդրադի մեջ հին տան մը քանդումի պահուն, որ թրջական տիրապետության շրջանին կծառայեր որպես վառոցի (բորակի) աշխատանոց: Շեմքին հատակը ծածկված էր քարե սալերով և դանոնը հանելու ժամանակ հայտնի կըլլա, որ տապանաքարի են, որոնց միջև կգտնվին նաև հայերեն արձանագրությանը տապանաքար մը (տե՛ս նկարը):

Տապանաքարը տաշված է սովորական կրաքարի և ունի 1,20 մետր երկարություն, 0,40 մետր լայնություն և 0,19 մետր թանձրություն: 1714 թվակիր արձանագրությունը կգտնվի տապանաքարի վերի ծայրը և ունի հետևյալ բովանդակությունը.

ԱՅՍ Է ՏՊՆ ՊԱ-  
 ՊԱՆՆԻ ՈՐԴԻ  
 ՅՈՂԱՆԻՆ ԹՎ  
 ՌՃԿԳ

«Որդի» բառին Ո և Ր տառերը միահյուսված, կապգիր են: Տապանաքարին թվականը լավ պահպանված է: Պապախան անունը անշուշտ պարսկահայկական է: Ասկե կրնանք ենդակացնել, որ Ռազդրադի հայերը պարսկահայեր էին և եկած էին Արևելյան Հա-

յատանեն ժէ դարու առաջին կիսուն, Շահ Արաաի մեծ ռոնագաղթերու ժամանակ: Հայերը Ռազդրադեն զաղթած են շատ հավանաբար 1806—1812-ի սուսերբեկան



յատերազմին ժամանակ, ավելի ճիշտ 1811-ին, երբ ուսերը կհեռանան քաղաքեն ու թուրքերը զայն կհրդեհեն: Նկատի ունենալով, որ զաղթողները հեռացած են դեպի հյուսիս, պետք է եզրակացնել, որ Ռազդրադի հայերը վերաբնակած են Ռուսե (Ռուսջուք) քաղաքը, որտեղ կար մեծ հայ գաղութ, և Հարավային Ռուսիո այլ քաղաքները:





# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՄԻ ԱՏԼԱՍ-ՀԱՆՐԱԳԻՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ.**— Հրատարակվեց Հայկական ՍՄԻ գիտատեղեկատու կոմպլեքսային Ատլասը, որը կազմել են ռուսագիտական Գիտությունների ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի Աշխարհագրական սեկտորի գիտական աշխատողները: Ատլասը հանդիսանում է քարտեզագրական և աշխարհագրական աշխատություն, սակայն առանց վերապահություն, այն կարելի է անվանել նաև Հայաստանի 40-ամյա նվաճումների հանրագիտարան:

Ատլասը բաղկանում է 140 քարտեզներից: Առանձին քարտեզների հետ նաև հարուստ ավյաներով և բազմակողմանիորեն ներկայացված են լրացուցիչ բնութագրման տարրեր՝ լրացուցիչ քարտեզներ, զանազան ավյաններ, դիագրամներ, գրաֆիկներ, պրոֆիլներ և այլն:

Առանձնապես մանրամասն ուշադրություն է դարձված կլիմայական, ագրոկլիմայական, ֆոնոլոգիական և հոդաբուսական ծածկի քարտեզներին: Այս բաժինը գյուղատնտեսության աշխատողներին համար մի հիանալի ուղեցույց է: Այստեղ քարտեզների ձևով պատկերված են այնպիսի երևույթներ, որոնք մինչ այժմ կազմված կոմպլեքսային և մասնագիտական ատլասներում բոլորովին տեղ չեն գտել կամ նրանց վրա սոսկ թոռոցիկ կերպով է ուշադրություն դարձվել:

Այս քարտեզները ունեն պրակտիկ նշանակություն և կարող են օժանդակել ռուսագիտական լիցենզիայի կատարվող գյուղատնտեսական ձեռնարկումներին:

Պատմական քարտեզների բաժնում զետեղված են հայ ժողովրդի դարավոր անցյալը պատկերող մի շարք քարտեզներ, սկսած ուրարտական շրջանից մինչև մեր օրերը: Այս բաժինը համեմատաբար փոքրածավալ է, քան մյուսները:

Ներկա Ատլասը, բացի գիտական բարձր մակարդակից, ունի նաև տեխնիկական զեղեցիկ ևնավորում:

**ՄԱՏՆԱԳՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Հայաստանի Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի Մատենադարանի ֆոնդերը անցած տարի համարվեցին

130 նոր ձեռագրերով, որոնք վերաբերում են Ժ—ԺԹ դարերին և արժանացել են ձեռագրական, գիտապատմական և աստվածաբանական հարցեր:

Ձեռագրերի մեծ մասը նվեր է ստացված Քուրթիայի, ԱՄՆ-ի, Սիրիայի, Միավորված Արաբական Ռեպուբլիկայի, Ռումինիայի հայ զաղութներից, ինչպես նաև Սովետական Միության տարբեր քաղաքներից:

Ուշագրավ է միջնադարյան ձեռագրերից մեկը, որը պարունակում է հայկական 150 առակ:

Նոր համարումը ընդգրկում է Արխատոսի «Մեծագրերի հայերեն թարգմանության ընթացավոր ձեռագիրը: Լատիներենից «Ետ ասելոց քանկանաց» վերատարածված 1675 թվականին այն թարգմանել է Ստեփանոս Լեհացին:

Մատենադարանի ձեռագրերի նոր համարումը անլափ արժեքավոր է: Այն ներկայացնում է հայ հին պատմագիրների, բժիշկների, տիեզերագետների, փիլիսոփաների, մաթեմատիկոսների աշխատությունները, որոնք վերաբերում են ժողովուրդների առևտրական, տնտեսական և մշակութային կապերին, արտադրում վաղուց անցած ժամանակների մարդկանց հայացքները, գիտական տեսակետները:

Ներկայումս այդ ինքնատիպ գրադարանի գրապահոցներում և հատուկ պահարաններում պահվում են 10 838 հին ձեռագրեր, այդ թվում 10 108-ը հայերեն, 738-ը՝ արաբերեն, պարսկերեն, հունարեն, վրացերեն, հին սլավոներեն, լատիներեն, եբրայերեն և այլ լեզուներով:

**ԱՆՆԱՍՏԵՂՄ ՎԱՀԱՆ ՄԱՆԶՁԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ.**— Միյուսացահայ բանաստեղծ և հասարակական գործիչ Վահան Մանյակյանի ծննդյան 90 և դրական գործունեության 70-ամյակին էր նվիրված Երևանի մտավորականության ներկայացուցիչների հորձյալական երեկույթը, որ անդի ունեցավ փետրվարի 8-ին, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի Հայկական ընկերության դահլիճում:

Միջուոցի հայ գրողների նահապետին ուղղված դրվատանքի ատաղին խոսքն ասաց ընկերության նախագահ Բերսար Գրիգորյանը:

Այնուհետև դրականացեալ Գ. Ստեփանյանը զնկուցեց Դորձյարի կյանքի ու դործունեության մասին: Հայաստանի գրողների միության հանձնարարությամբ բանաստեղծ Առոյնտն Տարոնցին հանգեա եկաւ Հորձյարին ուղղված ողջույնի շնորհ խոսքով: Հորձյարին ողջունեցին նաև Մէլիեն Մանուշյանը և Պատրիկ Մէլյանը:

**ՆԱԳԱՆԵ ԸՈՎՆԱԹԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ.** — Հայ Նշանավոր բանաստեղծ-աշուղ և Նկարիչ Նաղաշ Ըովնաթանի ձևն ույան 300-ամյակին էր նվիրված Մատենադարանի և Գիտությունների ակադեմիայի Մատենադարանի անվան զրահանութան ինստիտուտի միասնալ գիտական նիստը, որը հանկիւր ներածականով բացեց Մատենադարանի դիրեկտոր Լ. Խայրկյանը: «Նաղաշ Ըովնաթանի կյանքն ու զրահան ստեղծագործությունը» թեմայով հետազոտողական զննուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Ե. Նաղարյանը:

Նաղաշ Ըովնաթանի ստեղծագործության յնգվական հարցերին էր նվիրված պրոֆ. Գ. Սեանի զննուցումը: Բանաստեղծի գործերը պարունակող, տարրեր ժամանակներում զրված, տաղարանների մասին էր բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանի հաղորդումը:

Նաղաշ Ըովնաթանը հայտնի է ոչ միայն սրպես քննարկական, խնչույցի, խրատական ու նրդեծական բարձրարժեք բանաստեղծությունների հեղինակ, այլև որպես օրմանկարիչ և դիմանկարիչ, սակայն այդ գործերից միայն ընկերներ են պահպանվել:

Նիստի ընթացքում ուշադրությամբ յսվեց նաև արվեստարան Մ. Սարգսյանի «Նաղաշ Ըովնաթանը և Ըովնաթանյանների զարոցը» թեմայով զննուցումը, որն ուղեկցվում էր այդ զարոցի ներկայացուցիչների զործերի վերաբարագրությունները և յուսանկարների ցուցադրումով:

Հետազոտողական էր նաև Գրահանութան ինստիտուտի ավագ զիտաշխատող Մ. Ավդայանի զննուցումը, որը նվիրված էր «Հայ Նոր զրահանութան նախանշանները ԺԶ—ԺԷ դարերի տարիքորթության մեջ և Նաղաշ Ըովնաթանը» թեմային:

«Նաղաշ Ըովնաթանը և աշուղական պոեզիան» թեմայով զննուցեց և Նաղաշ Ըովնաթանին վերաբերող մի Նորահայտ փաստ հաղորդեց զրահանութան ինստիտուտի ավագ զիտաշխատող Լ. Սահակյանը:

Գիտական նիստի արդյունքներն ամփոփեց Գրահանութան ինստիտուտի դիրեկտոր Գուրգեն Ըովնանը:

Մատենադարանում կազմակերպված ցուցահանդեսը Նույնպես Նաղաշ Ըովնաթանին էր նվիրված: Այստեղ ցուցադրված էին Նաղաշ Ըովնաթանի ձևն ույար Երոթը և Նրա շքեղակարք պատկերող յուսանկարներ: Մեծ ջնարդակի զործերի ձևն ույար և տպագիր տաղարանները, տաղերի թարգմանությունները, Նրա մասին եղած ուսումնասիրություններն ու հոլովածները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՏՈՒՑԱԶԱՆԳՆԵՐԸ.** — Վերերս Երեանում, Նկարիչների տանը, բացվեց Հայաստանի 43 կերպարվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել էին 300 գործեր: Մեր Նկարիչները այդ ստեղծագործությունները կառարկ էն վերջին կրեք տարիների ընթացքում, ինչպես Սովետական Միության զարգաներում, այնպես էլ արտասահմանում կատարած շուրհատական ճանապարհորդությունների ընթացքում:

Ահա Նդիպտոսը, իր հնամենի բուրգերով, անձայրածիր շիկակարմիր անապատներով: «Մամուռ», այսպես է կոչվում Արմեն Գլինկարյանի կտավներից մեկը: Գեղեկագուն ավազը պատել է ճրկիցը, ձածկել արևի հսկա գունդը: Ավագի հատիկները կատարորեն զարնքվում են իրար: «Սան ցանկանալով հիմնահատակ անել հանդիպածը, բայց անասան է հնամենի բուրգը: Անապատ է. կանգնել է ուժասպառ ֆիլլաճը, Նրա պայակ, շոգից ճարճած շրթոնները կարծես ասում են՝ Մեանը է շնչել»: Նկարիչը հենց այսպես էլ վերնագրել է իր ստեղծագործությունը: Գլինկարյանի յավագուն աշխատանքներից են նաև «Սենեք», «Երիտասարդ եղիպտոսի» նկարները:

Անցնելով սրահից սրահ, մեկը մյուսից ավելի զննեցին, շնորհալի, մեղմ ույունով հազեցված կտավները հիանում են դիտողները: Ահա աշխարհի յոթ հրաշքերից մեկը՝ եղիպտական «Մֆինցը», «Երաքցի արարները», «Զգնահատված նկարիչ», ճրեցն էլ Տ. Քոթմաշյանի վրձինի արդյունքը:

Սարգիս Արուտչյանը իր ամերիկյան տպավորությունները վերաբարագրել է «Վաշինգտոն», «Նյու-Յորք», «Ճիլադիֆիա», «Բոստոն» և այլ կտավների վրա: Ուշագրավ է Նկարիչ «Երիտասարդի շրվածք»: Վիթխարի բարձունքից թափվում է ջրի հսկա զանգվածը և թվում է, թե անկանչիղ են հասնում Նրա անունի վշոցի արձագանքները:

Հետազոտությունում են դիտվում Լ. Ռուսկոյանի «Դեպի Ռարա», Ե. Հերթեյանի «Փոքրիկ ընկելը Ռոբերից», Լ. Կոչոյանի «Կոստանդնուպոլիսի դիշերը», Մ. Սոսոյանի «Շակա տանարը Սոֆիայում», Լ. Մարգարյանի իտալական ընկարները, Ա. Գայնեցի «Սոյի», Ա. Հունանյանի «Շին Բիգան» և այլ գործեր:

**ՄԱՆԿԱՎԱՐԺ ԽԱՅԱՏՈՒՐ ԿԱՆԱԿԱՆՆԵՐ ԸՈՐՆԵՆԵՐԸ.** — Լրացավ Հայաստանի Հեռուկա մանկավարձական ինստիտուտի հայոց յնգվի ամբիոնի վարիչ Խաչատուր Կանայանի ձևն ույան 80 և մանկավարձական գործունեություն 55-ամյակը:

Խ. Կանայանը, 1805 թվականին ավարտելով Գնորգյան ճանարանի յրիվ զասրնթացը, նվիրվում է մանկավարժության: Նա իր գործունեությունն սկսել է հայրենի ճղգիրում, իսկ այնուհետև մոտ տասը տարի զասովանդել է Քիֆիսի հայկական օրիորդաց Ըովնայան զարոցում:

Խ. Կանայանը երկար տարիներ ավանդել է հայոց յնգու, զրահանություն և զրարար: Նա ընդմնավոր գործունեություն է ծավալել Երեանի Բանֆական, Պետական համալարանում, Մանկավարձական, Հեռուկա մանկավարձական ինստիտուտներում և այլուր:

Մինչև հասնելու խորքը ներթափանցելով մանկավարժության հանդիպումների աստիճանը, նա 55 տարի շարունակ բարձր է պահել իսկական ուսուցչի լուսավորչաբար, հայ մանուկների սովորեցնելով մեր հիանալի մայրենի լեզուն:

Կանայանը հասցրել է քաղաքի մասեր, որոնք ներկայումս Հայաստանի տարբեր հաստատություններում ծավալում են հասարակական-քաղաքական, գիտական-մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներ, և երիտասարդության խորին զգացումներով ուղեւնում են իրենց ուսուցչի հորեղանակը:

Կանայանն զբաղվել է նաև դրական, քննադատական գործունեությամբ: Նրա առաջնակարգ արժեք ունեցող գործերից մեկն է ՄԱԿԻՅԱ Իսահակյանի լեզուն աշխատությունը: Երևապետի գործն էր մեծ բանաստեղծի ստեղծագործությունը լեզվաբանական տեսանկյունով ուսումնասիրելու ուղղությամբ: Խ. Կանայանը պրոֆ. Մ. Մկրտչյանի, Ա. Բակունցի և Գ. Սարյանի հետ կազմել է նաև Հայոց լեզվի դասագրքեր հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ դասարանների համար:

Հայաստանի կառավարությունը, գնահատելով Խ. Կանայանի բարեխղճ և անբասիր աշխատանքը, ըստ արժանվոյն գնահատել է նրան:

Վաստակավոր մանկավարժը, հակառակ իր առաջացած տարիքին, այսօր ևս մեծ հուանքով ու հանելուկով շարունակում է իր բեղուն գործունեությունը:

**ԹԱՔՈՒՆ ԱՆՔՈՒՆՑԱՆԻ ՄՆԵՆԴԱՆ 60-ԱՄՅԱՎՆ.—**

Մեր ժողովուրդը երիտասարդության խորին զգացումով վերջերս նշեց սովետահայ երաժշտական մշակույթի ակնակարգ գործը, Հայկական ՄԱԲ ժողովրդական արտիստ, Հայկական ժողովրդական երգի ու պարի վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավար Քարթուզ Ալթունյանի 60-ամեակը և երաժշտական ստեղծագործության բեղմնավոր գործունեության 40-ամյակը:

Ուսման և ստեղծագործական պրպտումների երկար և դժվարին ճանապարհ է անցել Ք. Ալթունյանը՝ սաղանջարական անփութունակ կյանքից մինչև ժողովրդական արտիստի և կոնսերվատորիայի պրոֆեսորի բարձր ու պատվավոր կոչումը: Այդ եղել է կյանքի և հարստագտ ժողովրդի գոյությունը երաժշտության ճշգրիտ ընկալման, իրական արվեստի ճանաչողության, զննելի անհրաժեշտ ու կատարյալ տանող մի ուղի:

Ալթունյանի հայացքը միշտ ուղղվել է դեպի հարուստ ժողովրդի երգաոտ գանձարանը, որտեղից մեղվի նման հյութեր է քաղել իր հետագա ստեղծագործական և կատարողական գործունեության համար:

Ուսուցչի համաշխարհային պատերազմի տարիներին, քուրացական յաթաղանից ազատվելով, Ալթունյանը երևան է ապաստանում և նրաժշտական ակադեմիայում իր առաջին ուսուցիչներն է ունենում Ռ. Մելիքյանին և Ազ. Մելիքյանին: Ապա իր երաժշտական հրմտությունը խորացնելու համար սովորում է Լենինգրադի կոնսերվատորիայում:

Գտնա ուսանողական տարիներից Ալթունյանի տաղանգրը գրանորվել է հատկապես երաժշտության տրվեստի մեջ:

Ստեղծագործական խելագրումների, պրպտումների ու խոհականություն տառնյակ տարիներ են անցել դրանից հետո: Անխախտ է մնացել նրա մեջ երիտասարդական ավյունը և ձգտումը զննելու երգը, գեղեցիկն ու շքեղությունը: Ստեղծագործական վրա երևակայություն, միշտ անբավական դուռն երգ հնարքներից, միշտ անհանգիստ, միշտ օրոնող, նուրբ ճաշակ, երանգների խեղացի համադրող՝ ահա Ք. Ալթունյանը բնորոշող բարեմասնությունները:

Միլիոնավոր սրտեր հուզող մեր ժողովրդական երգի ու պարի անսամբլի և նրա զեղարվեստական ղեկավար Ք. Ալթունյանի 25 տարվա բեղմնավոր գործունեությունը աշխարհի համարյա բոլոր լեզուներով գնահատվել է և մեծարանքի արժանացել:

Անվանի արվեստագետն ապրում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանը:

Հաջողություն վարպետին և նոր նվաճումներ:

**ՄՈՎԱԾՍԻ ԽՈՐԾՆԱԾՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ.—**

Պետական հրատարակությունը լույս ընծայեց պատմահայր Մովսես Խորենացու շառնգ պատմության ակադեմիկոս Ստեփան Մայիսյանի աշխարհարար թարգմանության նոր հրատարակությունը: Գիրքը բացվում է թարգմանի ներածականով, Քարթունյի կողմից տրվում են նաև ծանոթագրություններ: Հատորի վերջում տպագրված է հավելված, ժամանակագրական աղյուսակներ Խորենացու պատմության Բ և Գ գրքերի համար: Գիրքը լույս է տեսել 20 000 տպագրանակով:

**ԽԱՉԱՏՈՐ ԱՐՈՎԱՆԻ ԵՐԿՆԵՐԻ 10-ՈՐ ԵՎ ՎԵՐՋՆԻ ՀԱՏՈՐԸ.—**

Վերջերս ավարտվեց հայ գրականության լուսավորի Խաչատուր Արուսյանի երկերի լիակատար ժողովածուի 10 հատորյակի ակադեմիական հրատարակությունը: Այս հատորները լույս են տեսել 1947 թվականից սկսած, մեծատաղանգ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի խմբագրությամբ:

Հրատարակության մեջ ի մի է հավաքված մեծ լուսավորչի թողած գրական, գիտական և մանկավարժական հարուստ ժառանգությունը:

10-հատորյակի տեքստերը պատրաստվել են Արուսյանի ձեռագրերի հիման վրա, որոնք զրված են հայերեն (գրաբար-աշխարհարար), ռուսերեն, գերմաներեն և անգլերեններեն և պահպանում են նրանի, Լենինգրադի Քրիլիսիի, Տարգուի և Կազանի արխիվներում:

Արուսյանի երկերի մեծագույն մասը մնացել էր անտիպ և առաջին անգամ լինելով զրանք այս հրատարակությունը ներկայացվում են հասարակության: Մասնավոր ուշադրություն արժանի են հեղինակի ուժերը Հայաստանի մեծի արժանի և լավատես սեպտի վարիանները, ուղևորություն դեպի Անիի ավերակները վերնագրով ռուսերեն ճանապարհորդական նոթերը, Վրացական տների կառուցվածքը գերմաներեն ազգագրական ուսումնասիրությունը, Հայաստանի և հայ ժողովրդի տեսնական և մշակութային վիճակը քարեկավելու առթիվ կառավարության ներկայացված նախագիծը և բազմաթիվ ցարդ չհրատարակված այլ վավերագրեր:

Անդադմիական այս հրատարակությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն Արտվյանի կյանքի, ստեղծագործության և գրական հասարակական հայացքների, այլև հայ նոր գրականության և մշակույթի սկզբնավորություն և զարգացման պատմության ուսումնասիրության համար:

**ԳԱՐՐԻՆԷԼ ՍՈՒՆՅՈՒՆԻՍԵԱՆԻ ԵՐԿՆՐԻ ՎԵՐՋԻՆ ԸՍՏՈՐԸ.** — Վերջերս լույս տեսավ Գարրինի Սունդուկյանի երկերի անդամիական հրատարակության ցառահատորյակի վերջին հատորը:

Ցառահատորյակը ամփոփում է մեծ դրամատուրգի գրական ողջ ժառանգությունը: Առաջին, երկրորդ և երրորդ հատորները ընդգրկում են Փ. Սունդուկյանի յոթերկուսյակները իրենց տարբերակներով, որոնց մեծ մասը առաջին անգամ է ապագրվում:

Չորրորդ հատորում դետեղված են Սունդուկյանի Հայերեն, վրացերեն, ռուսերեն և ֆրանսերեն նամակները, ուղղված ինչպես իր հարազատներին, այնպես էլ ժամանակի նշանավոր գրական-հասարակական գործիչներին: Այդ նամակները բացահայտում են հայ անկախության գրամատուրգի կապերը և նվիրույթի մի շարք դրոշմներին և արվեստագետներին, ինչպես Վիկտոր Զյուզուխի, Գյումա որդու, Սարգսուի, Հենեստո Ռոսսիի, Յուրի Վենդուկովսկու և ուրիշների հետ:

Ընթերցողներին առաջին անգամ են ներկայացվում նաև մի շարք անտիպ հոդվածներ, ինչպես և Սունդուկյանի անտիպ դիտարկումներ, որը նվիրված է իրանական պոեզիայի տաղանդավորները: Այլ լեզուներով գրված նյութերը ներկայացված են իրենց թարգմանություններով:

Տաղանդավոր դրամատուրգի ստեղծագործության մեջ ցայտուն արտացոլում են գտնվում հայ և վրացի ժողովուրդներին զարավոր բարեկամությունը, կենցաղը, նիւտու կացը և ժողովրդական բանահյուսությունները:

Սունդուկյանի երկերի անդամիական հրատարակության ավարտը կարևոր նշանակություն էր հայ հասարակական կյանքում:

**ԳՆՐԱՍԱՆ ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԸ.** — Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանը վերջերս ստացավ նշանավոր հայ թատերական գործիչ

**ՍՍՐ Ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանի** անձնական արխիվը: Այն հանձնել են Վաղարշ Վաղարշյանի հարազատները:

Այստեղ են անկախության արվեստագետի նամակները, խաղացած դերերի մեջնակարգված տեսարանները, հոդվածներն ու հյույժների սղագրությունները, հուշերը, ոճիցներկանները, ասպարիք և լեռագիր ստեղծագործությունները, հրավերառումները, աֆիշաները, դրքեր և այլ նյութեր, թվով ավելի քան 3 500 կտոր:

Վաղարշյանը իր աշխատանքային գործունեության ընդ տարիներին սերտ կապեր է ունեցել հայ և ռուս բազմաթիվ արվեստագետներին, մշակույթի գործիչներին, գրողներին, դերասաններին հետ: Այդ մասին են պատում նրա նամակները, թվով շուրջ 400:

Արխիվում կան 20 պիեսներ ու սցենարներ, որոնց մի մասը անտիպ է: Ահռագիր բայց ավարտուն վիճակում են նրա «Արա զեղեցիկ և Շամիրամ», «Արդու», «Համիր» և «Եղիսան» պիեսները: Այստեղ են նաև «Ընկերներս», բարեկամներս և նաև զրթի առաջին զուտներին ձեռագրերը: Մեծ թիվ են կազմում նաև Վաղարշյանի անձնական գրքերը: Թանգարանում են գտնվում նաև անձնական իրերը:

Թանգարանի աշխատակիցները ձեռնամուխ են եղել Վաղարշ Վաղարշյանի արխիվի դիտական ուսումնասիրության և դասավորման:

**ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԳԱՆՆԷԼ ՂԱԶԱՐՇԱՆԻ ԼԻՆԵՍԱԿԱՆ ԵՎԻՐՎԱՄ ԵՐԵՎԱՆ.** — Հայ լավագույն երգաստեղծ, կոմպոզիտոր Գաննել Ղազարյանի հիշատակին էր նվիրված վերջերս կոմպոզիտորների տանը կազմակերպված երեկոն:

Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ էր Միքայելյանի բացման խոսքից հետո, Գ. Ղազարյանի կյանքին ու ստեղծագործության մասին բովանդակալից զեկուցում կարդաց երաժշտագետ Մ. Բրուստյանը:

Երեկոյի վերջում տրվեց համերգ Գաննել Ղազարյանի ստեղծագործություններին:



Բ Ո Վ Ա Ն Դ Ո Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

էջ

ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգակը Թուրքիայի հայոց նորընտիր պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանին . . . . .	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— «Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս» . . . . .	5
Իսահակաբայրու թուրքիայի հայոց նորընտիր պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան արքեպիսկոպոս Գալուստյանի . . . . .	9
Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նիստը . . . . .	12
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ . . . . .	13
Սուրբ Հարության Տանառեն ներս սկսան նորոգությունները . . . . .	15
ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌՑԱՆ— Մետոյ Մաշտոց . . . . .	18
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Օրմանյան և իր ժամանակը . . . . .	30
Անման Կոմիտաս վարդապետից մի նշխար՝ «Այսօր կանգնեցաւ տագան մկրտութեան» . . . . .	45
ՊՆՏՐՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐԲԵՐՅԱՆ— Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության եվիրված ռատմնասիրությունները և անտիպ էջերը . . . . .	48
ԱՐԱ ՄԱՐԿՈՍ— Բանասիրական եոթեր . . . . .	57
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ . . . . .	60



Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Ս Յ Ե Ն  
 Գ Ա Յ Կ Ա Կ Ս Ն Ս Ս ՈՒ Է Գ Մ Ի Ա Յ Ի Ն  
 «ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»  
 Rédaction de la revue „Echmiadzine“, Echmiadzine, Arménie, URSS.  
 Երևան, 1962 թ.